ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ,
ԱՐԱՄ ՆԱՋԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

8

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
8

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ,
ԱՐԱՄ ՆԱՋԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

8–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար

Վերահրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2018

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3(2Հ) g72
Հ 282

Խմբագիրներ՝ Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան, Արամ Նազարյան

Հեղինակներ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(ներածություն, գլուխներ II, III, V–VII)
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
(գլուխներ IV, X)
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ. պատմագիտության թեկնածու
(գլուխներ VIII, IX, XI, բաժին I–III–ի ամփոփումներ)
ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ. պատմագիտության թեկնածու (գլուխ I)

Մեթոդական մասի հեղինակներ՝
ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ. պատմաբան, մանկավարժ
(մեթոդական ապարատ, ժամանակագրություն)
ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ. պատմագիտության թեկնածու
(մեթոդական ապարատ, բառարան)

Հ 282 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: Դասագիրք 8–րդ դասարանի համար / Ա. Մելքոնյան, Ա. Սիմոնյան, Ա. Նազարյան, Հ. Մուրադյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2018.— 192 էջ:

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3(2Հ) g72

ISBN 978–9939–68–190–0

© Ա. Մելքոնյան, Ա. Սիմոնյան, Ա. Նազարյան, Հ. Մուրադյան, 2018
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2018
© ԴՏՀՏՇՀ, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ սովորողներ,

8–րդ դասարանում դուք ուսումնասիրելու եք Հայոց պատմության Նոր շրջանը, որն ընդգրկում է XVII դ. կեսերից մինչև 1918 թվականն ընկած ժամանակահատվածը: Հետաքրքիր իրադարձություններով հարուստ այս շրջանն սկսվում է թուրքական և պարսկական տիրապետությունների դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի նոր վերելքով:

Հայ ազգային գործիչների մեծ մասը կարծում էր, որ մուսուլմանական տիրապետությունից Հայաստանը ազատագրելու համար անհրաժեշտ է քրիստոնյա Եվրոպայի օգնությունը: XVIII դ. սկզբին հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրին առաջին անգամ փորձում է հայրենիքի ազատագրության ծրագիրը կապել նաև Ռուսաստանի օժանդակության հետ:

Ազատության համար պայքարի կենտրոններ են դառնում այն շրջանները, որտեղ ավելի թարմ էր հայկական թագավորությունների գաղափարը, և պահպանվել էին պետականության հատկանիշներ: Արևելյան Հայաստանում այդպիսի երկրամասեր էին Սյունիքն ու Արցախը, որտեղ ստեղծվեցին կիսանկախ իշխանություններ՝ մելիքություններ և ռազմական ճամբարներ՝ սղնախներ: Դրանք XVIII դ. 20–40–ական թթ. ավելի ամրապնդվեցին, և նրանց հիմքի վրա այդ տարածքներում առժամանակ վերականգնվեց հայկական պետականությունը: Արևմտյան Հայաստանում իր ինքնիշխան վիճակը պահպանում էր Վասպուրականի, Մոկսի, Սասունի, իսկ Կիլիկիայում՝ Զեյթունի լեռնային համայնքի և այլ շրջանների հայությունը:

Հնդկահայ գործիչ Շահամիր Շահամիրյանը XVIII դ. վերջին քառորդին մշակում է Հայաստանում սահմանադրական կարգեր հաստատելու և հանրապետություն ստեղծելու՝ ժամանակի համար ամենաառաջադիմական մի նախագիծ:

XIX դ. սկզբին հայ ժողովուրդը, օտար տիրապետությունից իր ազատագրման հույսը կապելով Ռուսաստանի հետ, ռուս–պարսկական և ռուս–թուրքական պատերազմների ժամանակ բազմակողմանի օգնություն է ցույց տալիս ռուսական զորքերին: Սակայն Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացվելուց հետո Հայաստանի ազատագրության ծրագիրը չիրականացավ: Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունները 1828 թ. ստեղծեցին վարչական նոր միավոր՝ Հայկական մարզը: Այն իրականում հայկական ինքնավար կազմավորում չէր: 1836 թ. եկեղեցական կանոնադրությամբ ռուսական արքունիքը Հայ եկեղեցուն արգելում է զբաղվել քաղաքական գործունեությամբ՝ նրան թողնելով միայն հոգևոր–եկեղեցական գործերն ու դպրոցական կյանքը տնօրինելու իրավունք:

Օսմանյան գերիշխանության տակ ավելի ծանր էր արևմտահայության վիճակը: Ազգային, կրոնական ու սոցիալական դաժան հալածանքների դեմ արևմտահայերի պայքարի դրոշակիրը դարձավ 1862 թ. ապստամբած Զեյթունը:

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի հետ կապված միջազգային դիվանագիտության օրակարգ մտավ Հայկական հարցը: Այն ազգային–ազատագրական շարժման նոր խթան դարձավ: Ստեղծվեցին ազատագրական խմբակներ, ծավալվեց հայդուկային (ֆիդայական) պայքարը: Ի վերջո հայությունը քաղաքական կազմակերպման բարձր աստիճանի հասավ, երբ պայքարը սկսեցին գլխավորել նորաստեղծ հայ ազգային կուսակցությունները:

Նոր շրջանում զգալի առաջընթաց ունեցավ հայկական մշակույթը: Իսկ XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ մշակույթի գրեթե բոլոր ճյուղերը իսկական զարթոնք՝ վերածնունդ ապրեցին:

Սակայն հայության ճանապարհը դեպի ազատություն և անկախություն դժվարին էր՝ լեցուն հերոսական և ողբերգական իրադարձություններով: Սուլթան Համիդ II–ը ոչ միայն չիրագործեց եվրոպական մեծ տերություններին խոստացած հայկական բարենորոգումները, այլև 1890–ական թթ. կեսերին Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ տարածքներում կազմակերպեց հայերի զանգվածային կոտորածներ: Հայերը անձնուրաց ինքնապաշտպանական մարտեր մղեցին Սասունում, Զեյթունում, Վանում, Մալաթիայում և այլուր: Հայությանը ֆիզիկապես բնաջնջելու թուրքերի քաղաքականությունը շարունակվեց XX դ. սկզբներին՝ հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին: Իշխանության եկած երիտասարդ թուրքերը պետական մակարդակով իրականացրին հայ ժողովրդի ոչնչացման ու հայրենազրկման հրեշավոր ծրագիրը:

Մեծ եղեռնի օրերին արևմտահայության մի մասը հերոսական ինքնապաշտպանության դիմեց Վասպուրականում, Տարոնում, Շապին Կարահիսարում, Կիլիկիայում, Ուրֆայում և այլուր: Շնորհիվ համառ պայքարի՝ բազմահազար հայեր փրկվեցին բնաջնջումից:

Հազարավոր հայ զինվորներ կռվեցին աշխարհամարտի տարբեր ճակատներում: Իսկ 10 հազար հայ կամավորականներ իրենց նպաստը բերեցին Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական զորքերի հաղթանակին:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ռուսական բանակն արագորեն կազմալուծվեց, և պարտության եզրին կանգնած օսմանյան Թուրքիայի զորքերը Կովկասյան ճակատում անցան հակահարձակման: Թշնամուն հաջողվեց նաև ներխուժել Արևելյան Հայաստան:

Հայոց բանակի և ժողովրդի միասնական ջանքերով 1918 թ. մայիսյան հերոսամարտերի (Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա, Շիրակ և Ջավախք) շնորհիվ կասեցվեց թշնամու առաջխաղացումը: Ձախողվեց ողջ հայությանը բնաջնջելու երիտթուրքական ծրագիրը:

Ավելին՝ **Մայիսյան հաղթանակների բովում 1918 թ. մայիսի 28–ին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը՝ Մեծ եղեռնից ընդամենը երեք տարի անց: Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումով սկսվում է Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանը:**

ԲԱԺԻՆ
I

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

ԳԼՈՒԽ I ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

§ 1. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տաճարի գլխավոր մուտքը

Վերհիշեք, թե ինչ դրության մեջ էին Հայաստանի երկու՝ արևելյան և արևմտյան հատվածները:

Վերելքի նախադրյալները: Հայաստանի ազատության և անկախության վերականգնման համար հայ ժողովրդի պայքարը XVII դարի երկրորդ կեսին թևակոխեց վերելքի փուլ: Դրա համար կային մի շարք նախադրյալներ:

Հայաստանի ազատագրության գաղափարի շուրջ միավորվել էին հայ ժողովրդի բոլոր հատվածները թե՛ հայրենիքում և թե՛ գաղթօջախներում: Հայ առաքելական եկեղեցուց բացի՝ ազատագրման գործին սկսեց ակտիվորեն մասնակցել նաև **հայ ունևորների խավը**:

Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի թուլացումն ազատագրման իրական հույս էր ներշնչում: Եվրոպական առանձին երկրներ, որոնք կանգնել էին թուրքական վտանգի առջև, համարվում էին Հայաստանի հնարավոր դաշնակիցներ: Էական հանգամանք էր նաև օսմանահպատակ ժողովուրդների՝ **հույների, ասորիների, վրացիների,** անգամ **քրդերի, եզդիների** համատեղ պայքարի պատրաստակամությունը:

Օսմանյան տերության ժողովուրդների շրջանում լուրջ հույսեր առաջացրեց հատկապես Թուրքիայի և Վենետիկի հանրապետության միջև XVII դ. կեսերին **Կրետե կղզու համար մղված պատերազմը**: Կրետե կղզին թուրքերից պաշտպանող Վենետիկը, ինչպես նաև Հռոմն ու Ֆրանսիան կամենում էին պատերազմին հաղորդել համաքրիստոնեական բնույթ:

Ելնելով այս իրադրությունից՝ ժամանակի որոշ հայ գործիչներ Հայաստանի ազատագրման գործը կապեցին եվրոպական երկրների օգնության հետ: Նրանցից են **Սսի** (Կիլիկիա) կաթողիկոս **Խաչատուր Գաղատացին**, բաղիշեցի վաճառական **մահտեսի Շահմուրատը,** Աղթամարի նախկին կաթողիկոս

Հովհաննես Թութունջին, Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչ **Գրիգոր Լուսիկենցը**:

Ցավոք, այդ պատերազմի ելքը եվրոպացիների օգտին չէր: Միջազգային քաղաքական իրադրության փոփոխությունը խոչընդոտեց հայերի ազատագրության իրականացմանը:

Էջմիածնի 1677 թ. ժողովը: Հայաստանի ազատագրության հարցը քննարկելու նպատակով Ամենայն հայոց կաթողիկոս **Հակոբ Դ Ջուղայեցին Էջմիածնում 1677 թ.** գումարեց գաղտնի ժողով: Մասնակցում էին աշխարհիկ և հոգևոր 12 գործիչներ: Ժողովը որոշեց դիմել Եվրոպայի օգնությանը: Կաթողիկոսի գլխավորությամբ կազմված պատվիրակությունը 1678 թ. վերջին մեկնեց Կոստանդնուպոլիս՝ Եվրոպա անցնելու համար: Կ. Պոլսից կաթողիկոսը փորձեց կապեր հաստատել Հռոմի պապի, Ռեչ Պոսպոլիտայի և այլ երկրների տիրակալների հետ:

Իսրայել Օրու գործունեությունը: Հակոբ Ջուղայեցին 1680 թ. մահանում է, և պատվիրակությունը Կոստանդնուպոլսից ձեռնունայն վերադառնում է Հայաստան: Սակայն պատվիրակներից **Իսրայել Օրին** հայ վաճառականների հետ ուղևորվում է Վենետիկ, ապա՝ Ֆրանսիա: Այնտեղ մտնելով զինվորական ծառայության՝ ստանում է սպայի աստիճան: Այնուհետև տեղափոխվում է Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրություն, հաստատվում Դյուսելդորֆ քաղաքում: Նա ծառայության է անցնում կայսրընտիր իշխան **Հովհան Վիլհելմի** (Գերմանիայի կայսրին ընտրող իշխաններից մեկը) մոտ:

Գերմանիան այդ ժամանակ հաջողությամբ պայքարում էր Օսմանյան կայսրության դեմ: Այս ամենը հաշվի առնելով՝ Օրին Վիլհելմի հետ քննարկում է Հայաստանի ազատագրության հարցը: Գերմանական իշխանը խոստանում է աջակցել նրան: Նրա խորհրդով՝ Հայաստանում տիրող վիճակին ծանոթանալու նպատակով Օրին գալիս է հայրենիք:

Մելիք Սաֆրազի աջակցությամբ Սիսիանի **Անգեղակոթ գյուղում 1699 թ.** հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն: Որոշվում է լիազորել Օրուն շարունակելու բանակցությունները արևմտաեվրոպական երկրների, ինչպես և Ռուսաստանի հետ: Վիլհելմին ուղղված նամակում հայ մելիքները հավաստի-

Իսրայել Օրի

Պաշտոնապես պապական դեսպանի տոգայով զգեստավորված Իսրայել Օրու դեսպանությունը Պարսկաստանում մեծ խոչընդոտների հանդիպեց ինչպես ֆրանսիական դեսպանորդի, այնպես էլ այնտեղ գործող կաթոլիկ միսիոներների (քարոզիչներ) կողմից: Նրանք շահ Սուլթան Հուսեյնին ներշնչում և լուրեր էին տարածում, թե Իսրայել Օրին կեղծ դեսպան է, ռուսական գործակալ և Պարսկաստան է ժամանել լրտեսության նպատակով: Նրա իսկական նպատակը հայոց թագավորության վերականգնումն է: Նույնիսկ ֆրանսիական միսիոներները նրա անունը (Israel Ori) այնպես էին տառաշրջում, որ ստացվում էր Il sera roi՝ «նա թագավոր կլինի» իմաստը:

Պետրոս Մեծ
Ռուսաստանի հզոր տիրակալներից, որը երկիրը տարավ եվրոպականացման ուղիով: 1721 թ. ընդունեց կայսրի տիտղոս, և Ռուսաստանը հռչակվեց կայսրություն:

ացնում էին, որ ռազմական օգնության դիմաց պատրաստ են նրան ճանաչելու Հայաստանի թագավոր:

Վերադառնալով Եվրոպա՝ Օրին Վիլհելմին է ներկայացնում Հայաստանի ազատագրության՝ **36 կետից բաղկացած ծրագիր («Պֆալցյան ծրագիր»)**: Կայսրընտիր իշխանը, հավանություն տալով Օրու ծրագրին, առաջարկում է ստանալ նաև Ֆլորենցիայի և Ավստրիայի իշխանությունների համաձայնությունը: Ֆլորենցիայի դուքսը խոստանում է զորք տրամադրել, սակայն ավստրիական կայսրը, որ Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիր էր կնքել, հրաժարվում է օգնել:

Եվրոպայում Հայաստանի ազատագրության համար անհրաժեշտ օժանդակություն չստանալով՝ Օրին Վիլհելմի խորհրդով այս անգամ մեկնում է **Ռուսաստան**:

XVIII դարասկզբին Ռուսաստանը գործուն պայքար էր սկսել Բալթիկ, Սև և Կասպից ծովերի ափերին հաստատվելու համար: 1701 թ. ամռանն Օրին **Պետրոս (Պյոտր) I** ցարին է ներկայացնում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ծրագիր:

Պետրոս I–ը, որ Շվեդիայի դեմ պատերազմի մեջ էր **(Հյուսիսային պատերազմ, 1700–1721 թթ.)**, Օրուն հուսադրում է, որ պատերազմի բարեհաջող ավարտից հետո կզբաղվի Հայաստանի հարցով: Այսրկովկասում և Պարսկաստանում տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով ցարը Օրու ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկում Պարսկաստան՝ նրան տալով ռուսական բանակի գնդապետի զինվորական աստիճան: Առաքելության նկատմամբ ավելորդ կասկածներ չհարուցելու նպատակով Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա, որտեղ որոշվում է, որ ինքը պետք է մեկնի Պարսկաստան՝ որպես Հռոմի պապի դեսպան: Օրին նամակ է վերցնում Հռոմի պապից, որով վերջինս խնդրում էր պարսից շահին՝ քրիստոնյաներին չենթարկել հալածանքների:

Վերջապես Օրին իր դեսպանախմբով **1708 թ.** ուղևորվում է դեպի Այսրկովկաս և Պարսկաստան: 1709 թ. լինում է Պարսկաստանի մայրաքաղաք **Սպահանում** և նույն թվականի կեսերին բռնում վերադարձի ճանապարհը:

Ռուսաստան վերադառնալիս Օրուն է միանում Գանձասարի կաթողիկոս **Եսայի Հասան-Ջալալյանը**:

Գանձասարի վանական համալիրը, XIII դ.

Վերջինս, ամենայն հավանականությամբ, պետք է պաշտոնապես Հայաստանի ազատագրության հարցի շուրջ բանակցեր Պետրոս I–ի հետ: Բայց **1711 թ.** օգոստոսին մերձկասպյան Աստրախան քաղաքում տարօրինակ հանգամանքներում Իսրայել Օրին հանկարծամահ է լինում: Եսայի Հասան–Ջալալյանը հարկադրված վերադառնում է հայրենիք:

Այսպիսով՝ XVII դարի վերջի և XVIII դարի սկզբների պայքարի զարթոնքը գլխավորապես կապվում է Իսրայել Օրու գործունեության հետ: Նա Հայաստանի ազատագրության գործում մեծապես կարևորում էր ընդհանուր թշնամու դեմ հնարավոր դաշնակիցներին համախմբելու գաղափարը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ XVII դարի երկրորդ կեսին հայ ժողովրդի մոտ ազատագրական նոր հույսեր արթնացան:
2. Հայաստանի ազատագրման գործին հայության ո՞ր խավերն էին մասնակցում:
3. Նշեք Հայաստանի ազատագրական պայքարի՝ ժամանակի հայտնի գործիչների:
4. Ի՞նչ նպատակով, ե՞րբ և որտե՞ղ Հակոբ Դ Ջուղայեցին գումարեց գաղտնի ժողով: Ի՞նչ որոշում կայացրեց ժողովը:
5. Ո՞վ էր Իսրայել Օրին: Ինչո՞ւ էր նա Հայաստանի ազատագրման համար բանակցում Հովհան Վիլհելմի հետ:
6. Անգեղակոթի ժողովը ե՞րբ կայացավ և ի՞նչ որոշում ընդունեց:

7. Ինչո՞ւ Հովհան Վիլհելմը Օրուն խորհուրդ տվեց օգնության խնդրանքով դիմել Ռուսաստանին: Ինչպե՞ս արձագանքեց Պետրոս I–ը Իսրայել Օրու խնդրանքին:
8. Ե՞րբ է տեղի ունեցել Օրու դեսպանագնացությունը և ի՞նչ արդյունք է ունեցել:
9. Ո՞վ էր Գանձասարի կաթողիկոսը և ինչո՞ւ էր նա միացել Օրուն:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով հայ գործիչները Հայաստանի ազատագրության հարցը պետք է կապեին Եվրոպայի՞, թե՞ Ռուսաստանի հետ: Հիմնավորե՛ք պատասխանը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչատուր Գաղատացի, Հովհաննես Թութունջի, Հակոբ Դ Ջուղայեցի, Էջմիածնի 1677 թ. գաղտնի ժողով, Իսրայել Օրի, Անգեղակոթի 1699 թ. գաղտնի ժողով, Պֆալցյան ծրագիր, Եսայի Հասան–Ջալալյան

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Եվրոպական երկրներին դիմելու օրինակ է Սսի կաթողիկոս Խաչատուր Գաղատացու նամակը Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորին (1663 թ.). «*Բարձրյալն Աստված թող … Ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր ազգին: … Հույս ու հավատ ունենք, որ ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը*»:

§ 2. ՋԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Պայքարի սկիզբը Արցախում: XVIII դարասկզբին Իրանը հայտնվել էր չափազանց ծանր դրության մեջ: Դա նպաստավոր պայմաններ ստեղծեց հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի ծավալման համար: Ապստամբած աֆղաններին հաջողվեց 1722 թ. գրավել Իրանի մայրաքաղաք Սպահանը:

Իրավիճակից շտապեց օգտվել դեպի հարավ՝ մերձկասպյան տարածքներին տիրանալ ձգտող Ռուսաստանը: Պարսից շահին ապստամբներից պաշտպանելու պատրվակով կայսր **Պետրոս I–ը 1722 թ.** արշավանք կազմակերպեց դեպի Իրան:

Ռուսաց կայսրի արշավանքի լուրը մեծ ոգևորություն առաջացրեց հայ գործիչների շրջանում: Նրանց ջանքերով Վրաստանից հայ կամավորներով Սյունիք ժամանեց Դավիթ բեկը: Արցախի մելիքներն այդ ժամանակ կազմակերպել էին 12 000–անոց զորք: Դրանից 10 000–ը Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանի ցուցումով մեկնեց Գանձակի մոտակա **Չոլակ** վայրը՝ սպասելու ռուսական զորքի գալուն: Սակայն Դերբենդը գրավելուց հետո Պետրոս I–ը անակնկալ վերադարձավ Աստրախան:

Տեղեկանալով արշավանքի ընդհատման մասին՝ հայկական զորքը Չոլակից վերադարձավ Արցախ և ձեռնամուխ եղավ երկրամասի ինքնապաշտպանությանը: Ազատագրական պայքարին օժանդակելու նպատակով Շիրվանից Արցախ եկած **Ավան** և **Թարխան** հարյուրապետերն՝ իրենց համախոհներով: **Գյուլիստանում, Շոշում (Շուշի), Ավետարանոցում, Ջրաբերդում, Քարագլխում** և այլ վայրերում կազմակերպվեցին պաշտպանական ամրոցներ՝ **սղնախներ**:

Շուշիի բերդը՝
ժամանակակից տեսքը

Հասան–Ջալալյանների տոհմի զինանշանը

Իրավիճակից շտապեց օգտվել նաև Օսմանյան կայսրությունը, որը ձեռնամուխ եղավ Իրանի արևմտյան նահանգների նվաճմանը: Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը կանխելու համար Թուրքիան նպատակադրվեց գրավել նաև այսրկովկասյան տարածաշրջանը: **1723 թ.** հունիսին թուրքական զորքերը զավթեցին Թիֆլիսը և շարժվեցին Գանձակ:

Ռուս–թուրքական մրցակցությունը այդ ժամանակ հանգուցալուծվեց **1724 թ. հունիսի 12–ին Կոստանդնուպոլսում** կնքված պայմանագրով: Այսրկովկասյան տարածաշրջանի և Ատրպատականի պարսկական տիրույթները բաժանվեցին Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների միջև: Վրաստանը և Արևելյան Հայաստանն ամբողջությամբ թողնվեցին Օսմանյան կայսրության տնօրինությանը:

Ռուսաստանն այլևս չէր կարող օգնության հասնել հայկական ուժերին, որոնք, հակառակ թուրքերի պահանջներին, շարունակում էին զինված պայքարը: Ռուսական հրամանատարությունը, որ հայերից գաղտնի էր պահում պայմանագրի կնքման փաստը, Պետրոս I կայսերն ուղղված զեկուցագրերում զարմանք էր հայտնում հայկական զինուժի դիմադրության և սխրանքների մասին:

Երևանի հերոսական պաշտպանությունը: Թուրքական զորքերը, 1724 թ. գարնանը ներխուժելով Արարատյան դաշտ, սկսում են ավերել հայկական բնակավայրերը: **Կարբի** գյուղի բնակիչները 40 օրվա համառ դիմադրությունից հետո միայն վայր դրեցին զենքը, երբ թշնամին խոստացավ չմտնել իրենց բնակավայրը:

Հունիսի 7–ին թուրքական զորքը պաշարեց **Երևանը**: Պաշտպանության համար ոտքի կանգնեց նաև մերձակա հայկական գյուղերի բնակչությունը: Հակառակորդի գրոհները մատնվում էին անհաջողության: Պարենի ու զինամթերքի սպառման պատճառով, սակայն, **1724 թ. սեպտեմբերի 26–ին** Երևանն անձնատուր եղավ: Թուրքերի կորուստը կազմեց շուրջ 20 000 մարդ:

Երևանի պաշտպանությունը ցույց տվեց հայ ժողովրդի ազատասիրությունն ու ռազմական բարձր ոգին: Դրա շնորհիվ կասեցվեց թուրքական զորքերի առաջխաղացումը Սյունիք և Արցախ՝ հնարավորու-

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 1722–1730 ԹԹ.: ԽԱՄՍԱՅԻ (ԱՐՑԱԽ) ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՅՄՈՒՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Սոցիալական հակամարտություններ
մելիքությունների սահմաններ
Դավիթ բեկի իշխանության սահմանները ու տարածքը (1722–1730 թթ.)
Խամսայի (Սոցախ) հայկական մելիքությունների միության սահմանները ու տարածքը (1735–1752 թթ.)
Թուրքական կոալիցիայի հարձակման ուղղություններ
Թուրքական հիմնական ցամաքային մարտական գործողությունների ուղղությունները
ԱՐԱՍ
Գանձակ
Շամքոր
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Սևան
Գեղամի լեռներ
Գեղարդ
Գեղարդավանք
Գեղարդ
Գեղարդ
Գեղարդ

Գյուլիստանի համայնապատկերը

թյուն տալով տեղի ուժերին ժամանակ շահելու և նախապատրաստվելու ահեղ մարտերին:

Զինված պայքարը Արցախում: Արցախի ազատագրական ուժերը 1724 թ. թուրքական զորքերի դեմ համատեղ գործելու մասին համաձայնագիր կնքեցին Գանձակի մահմեդականների հետ: Համագործակցելու առաջարկներ արվեցին նաև պարսկական իշխանություններին: Հուսադրող էր ազգային գործիչ **Իվան Կարապետի** ժամանումը Ռուսաստանից՝ ազատագրական պայքարին օժանդակելու խոստումներով:

1725 թ. մարտին թուրքական երեք զորամասեր ներխուժեցին **Վարանդա** գավառ: Կորուստներից խուսափելու համար մելիքները դիմեցին հնարամտության: Շուրջ 6000 թուրք զինվորների տեղավորելով հայկական գյուղերում՝ հայ ինքնապաշտպանական ուժերը գիշերային հանկարծակի գրոհով ոչնչացրին նրանց: Այս հաղթական գործողությունը բարձրացրեց հայերի ինքնավստահությունն ու մարտունակությունը:

Անհաջողության մատնվեց նաև Արցախի դեմ թուրքական հաջորդ հարձակումը: **1726 թ.** օսմանյան զինուժի՝ **Շուշին** գրավելու փորձերը հաջողություն չունեցան: Ութօրյա մարտերում տալով մոտ 800 զոհ՝ թուրքերը նահանջեցին Գանձակ:

Չստանալով Ռուսաստանից խոստացված օգնությունը և ցանկանալով կանխել հետագա արյունահեղությունը՝ հայկական ուժերի մի մասը դադարեցրեց պայքարը: **1728 թ.** մահացավ Գանձասարի կաթողիկոս **Եսայի Հասան-Ջալալյանը**: Իսկ հաջորդ տարի Ավան և Թարխան հարյուրապետերի գլխավորությամբ հայ զինվորականության մի մասը տեղափոխվեց ռուսաստանյան բանակ՝ մտնելով նորաստեղծ «**Հայկական էսկադրոնի**» կազմը: Սակայն 1729–1731 թթ. թուրքական նվաճողների դեմ շարունակում էր պայքարել Գյուլիստանի սղնախը՝ **Աբրահամ սպարապետի** գլխավորությամբ:

Արցախի զինված պայքարը ոգեշնչող դեր ունեցավ հայ ժողովրդի հետագա սերունդների համար՝ հավատ ներշնչելով սեփական ուժերի նկատմամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք իրավիճակը այսրկովկասյան տարածաշրջանում XVIII դարասկզբին:
2. Ի՞նչ արդյունք ունեցավ Պետրոս I–ի կասպիական արշավանքը:
3. Ի՞նչ է սղնախը: Թվարկեք հայտնի սղնախները:
4. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Օսմանյան կայսրությունը՝ օգտվելով Պարսկաստանի թուլացումից:
5. Ներկայացրեք 1724 թ. հունիսի 12–ի Կոստանդնուպոլսի պայմանագիրը:
6. Ինչո՞վ ավարտվեց Երևանի պաշտպանությունը, և ի՞նչ նշանակություն ունեցավ:
7. Նկարագրեք ռազմական գործողությունների ընթացքը Արցախում 1724– 1726 թթ.:
8. Ինչո՞ւ արցախահայությունն ի վերջո պարտություն կրեց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տետրում լրացրեք աղյուսակը.

Անվանումը	Տարեթիվը	Իրադարձություններ	Անուններ
Ազատագրական պայքարը Արցախում			

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սղնախ, Ավան և Թարխան հարյուրապետեր, Գյուլիստանի, Շոշի (Շուշի), Ավետարանոցի, Ջրաբերդի, Քարագլխի սղնախներ, Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանություն, 1724 թ. հունիսի 12–ի ռուս–թուրքական պայմանագիր, Իվան Կարապետ, «Հայկական էսկադրոն», Աբրահամ սպարապետ

§ 3. ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Դավիթ բեկի արձանը Կապանում
Հեղինակ՝ Սարգիս Բաղդասարյան

Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ բեկ: Ի տարբերություն Արցախի՝ Սյունիքում հայկական ուժերը սկզբնական շրջանում համախմբված չէին: Անհանգստացնող հանգամանք էր նաև այնտեղ պարսկամետ ուժերի ազդեցությունը: Ինչպես Արցախում, այնպես էլ Սյունիքում զինված շարժումը նախապես ուղղված էր հյուսիսից անընդհատ արշավող լեզգի հրոսակախմբերի դեմ:

Ազատագրական շարժումը համախմբելու համար քայլեր ձեռնարկվեցին: Հայաստան ուղարկված հայ զինվորականները **Դավիթ բեկի** գլխավորությամբ **1722 թ.** հասան Սյունիք ու հաստատվեցին **Շինուհայր** ավանում: Շուտով նրանց շուրջ համախմբվեցին տեղի զինվորական ուժերը: Դավիթ բեկի ղեկավարությամբ ստեղծվեց ռազմական խորհուրդ, զորքի սպարապետ նշանակվեց **Մխիթարը**: Առաջին լուրջ հարվածը 1722 թ. աշնանը հասցվեց **ջևանշիր** կոչվող քոչվոր ցեղին: Այդ հաղթանակը մեծ հեղինակություն բերեց Դավիթ բեկին:

Հայկական ուժերը միավորելու գործում կարևոր նշանակություն ունեցավ հավատուրաց **մելիք Բաղրին** ենթակա՝ Տաթևի մոտ գտնվող ամրոցի գրավումը: Դավիթ բեկի պահանջով Բաղրին գլխատեցին: Այս իրադարձություններից հետո Տաթևը դարձավ Դավիթ բեկի նստավայրը: Շրջակա մահմեդական տիրակալների դեմ վճռական՝ հաղթական ճակատամարտը տեղի ունեցավ **Զավնդուրի** մոտ: Հետագայում հայկական ուժերի կարևոր հաղթանակներից էր **Զևայի** և **Որոտանի** բերդերի ազատագրումը:

Հայկական իշխանության ստեղծումը: Ավելի քան մեկամյա պայքարից հետո հաջողվեց Սյունիքի մեծ մասն ազատագրել: Դավիթ բեկի գլխավորությամբ 1724 թ. ստեղծվեց **հայկական իշխանություն** (Կապանի **Մեծ իշխանություն**), որի կենտրոնը դարձավ **Հալիձորի** բերդը: Ահագնացող օսմանյան վտանգը պարսից **Թահմասպ II** շահին ստիպեց ճանաչել հայկական իշխանությունը: Շահը Դավիթ բեկին իրավունք վերապահեց դրամ հատելու և ապա դաշինք կնքեց նրա հետ: Նա կոչ արեց շրջակա պարսկական կառավարիչներին ճանաչելու Սյունիքի հայկական իշխանությունը,

ՀԱԼԻՃՈՐԻ 1727 Թ. ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ

ռազմական օժանդակություն ցուցաբերելու և գործելու համաձայնեցված:

Հալիձորի հաղթանակը: Երևանը գրավելուց հետո թուրքական զորքերը շարժվեցին դեպի Սյունիք և Ատրպատական: **1727 թ. մարտին** թշնամին պաշարեց Հալիձորի բերդը: Որոշվեց ճեղքել պաշարումը և անցնել հակահարձակման: Շուրջ երեք հարյուր զինյալներ Մխիթարի և տեր Ավետիսի գլխավորությամբ աննկատ դուրս եկան բերդից: Նրանք հանկարծակի հարվածեցին թշնամուն և, խուճապի մատնելով, մեծ կորուստներ պատճառեցին: Թշնամին կորցրեց 148 մարտական դրոշ:

Հալիձորի հաջողությունը թուրքերի դեմ տարած ամենախոշոր հաղթանակն էր: Այն ամրացրեց զորքի և բնակչության վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, նոր թափ հաղորդեց զինված պայքարին: Հայկական զինուժը, հետապնդելով թշնամուն, ազատագրեց **Մեղրին**: Հալիձորի և Մեղրու հաղթանակներն ամրապնդեցին հայոց պետականությունը Սյունիքում:

Մխիթար սպարապետ: 1728 թ. Դավիթ բեկը անակնկալ մահացավ: Սյունիքի հայկական իշխանությունը մեծ կորուստ կրեց: Զինվորական հրամանատարությունը ստանձնեց Մխիթար սպարապետը:

Օսմանյան զորքերը շուտով անցան հարձակման: Հալիձորի երկրորդ պաշարման ժամանակ հայոց զինվորական հրամանատարության մեջ անհամաձայնություն ծագեց: Մխիթարը պահանջում էր շարունակել պաշտպանությունը և ուժասպառ անել թշնամուն: Տեր Ավետիսը նախընտրեց թուրքերի հետ բանակցելու ուղին: Մխիթար սպարապետը ստիպված էր գիշերով հեռանալ բերդից: Թուրքերը, մտնելով բերդ, կոտորեցին հայ բնակչությանը:

Հալիձորի անկումից հետո Մխիթարին հաջողվեց միավորել հայկական ուժերը և ձեռքբերումներ ունենալ: Սակայն **1730 թ. Խնձորեսկ** գյուղի մոտ Մխիթար սպարապետը դավադրաբար սպանվեց: Դրանից հետո հայոց զինուժի կազմալուծումն այլևս հնարավոր չեղավ կասեցնել:

Այսպիսով՝ զինված պայքարի շնորհիվ և՛ Արցախում, և՛ Սյունիքում, թեկուզ կարճ ժամանակով, վերականգնվել էր հայկական ինքնիշխանությունը:

Սյունիքի և Արցախի ազգային–ազատագրական կռիվները հայ ժողովրդի պատմության հերոսական

դրվագներից են: Հայկական զինված պայքարը բարձրացրեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին: Պարսկաստանը ստիպված էր հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքներն ու ինքնիշխանությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն էր իրավիճակը Սյունիքում մինչև Դավիթ բեկի ժամանումը:
2. Որո՞նք էին Դավիթ բեկի առաջին քայլերը Սյունիքում:
3. Թվարկե՛ք Սյունիքի ազատագրության համար մղված խոշոր ճակատամարտերը:
4. Ի՞նչ համաձայնություն ձեռք բերեց Դավիթ բեկը պարսից շահի հետ:
5. Նկարագրե՛ք Հալիձորի ճակատամարտը:
6. Ինչո՞ւ թուլացավ Սյունիքի ինքնապաշտպանությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Տետրում լրացրե՛ք աղյուսակը.

Անվանումը	Խոշոր ճակատամարտեր	Տարեթվեր	Անուններ
Զինված պայքարը Սյունիքում			

2. Տրամագիր վարժության միջոցով համեմատե՛ք Արցախի և Սյունիքի զինված պայքարը և դրանց արդյունքները:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դավիթ բեկ, Շինուհայր ավան, Մխիթար սպարապետ, Զավնդուրի ճակատամարտ, Զևայի և Որոտանի բերդեր, Հալիձորի բերդ, Սյունիքի հայկական իշխանություն

§ 4–5. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ 30–80–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ջրաբերդի անտառները, Թարթառ գետը

Հայկական ինքնավարությունն Արցախում (Խամսայի մելիքություններ): Աֆղանների և թուրքերի դեմ պայքարում պարսից զորահրամանատար **Նադիրը** հաջողությունների հասավ: Նա երկրից դուրս քշեց աֆղաններին և լուրջ հաղթանակներ տարավ թուրքական զորքի նկատմամբ:

Իրական հիմքեր ստեղծվեցին հայ–իրանական համագործակցության ծավալման համար: Հայաստանում Նադիրի վարած քաղաքականությունն ընդգրկում էր ռազմական, վարչաքաղաքական ու առևտրատնտեսական ոլորտները:

Հայ–իրանական գործակցությունը դրսևորվում է նաև Ամենայն հայոց կաթողիկոսության նկատմամբ Նադիրի բարյացակամ վերաբերմունքով: Նա ապօրինի հարկերից ազատեց Էջմիածնի կալվածքները, ըստ արժանվույն գնահատեց ու մեծարեց աշխարհիկ և հոգևոր հայ իշխանավորներին: Լինելով հեռատես քաղաքական գործիչ ու հմուտ դիվանագետ՝ Նադիրը հասկանում էր տեղական բնակչության կարևորությունը հակաթուրքական պայքարում: Նրա բանակում էին Դիզակի **մելիք Եգանը**, Գեղարքունիքի **մելիք Շահնազարը**, Երևանի **մելիք Հակոբջանը** և ուրիշներ:

1735 թ. հունիսին Եղվարդի ճակատամարտում պարտության մատնելով թուրքերին՝ Նադիրը ստիպեց թուրքերին զորքերը դուրս բերել այսրկովկասյան տարածաշրջանից: Նրա հաղթանակն ապահովվեց նաև հայկական ուժերի քաջության շնորհիվ: Հաջորդ տարի Էրզրումում կնքված պայմանագրով ճանաչվեց Իրանի գերիշխանությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում: Նույն տարում Նադիրը հռչակվեց Պարսկաստանի շահ:

Նադիրը **Արցախը** Գանձակի խանությունից անջատելով՝ դարձրեց **առանձին վարչական միավոր (1736 թ.)**: Նա վերահաստատեց Արցախի ներքին բաժանումն ու մելիքների ժառանգական իրավունքները: Արցախի մելիքությունները՝ **Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա** և **Դիզակ,** սկսեցին անվանել **Խամսայի (հինգ)** մելիքություններ: Դրանց սահմանները (տես էջ 14–ի քարտեզը) ձգվում էին Գանձակի

հարավային շրջաններից մինչև Արաքս գետը: Մելիքությունների կառավարիչ նշանակվեց Դիզակի **մելիք Եգանը**: Նա ստացավ նաև պարսկական խանի տիտղոս:

Նադիր շահի գահակալման ժամանակ Արցախի մելիքները պահպանեցին իրենց նախկին իրավունքները և ներքին կառավարման հարցերում ունեին գործելու լիակատար ինքնուրույնություն: Յուրաքանչյուր մելիք ուներ իր զինուժը՝ 1000–1500 զինվոր:

Ի դեմս Խամսայի մելիքությունների՝ ստեղծվեց հայկական մի յուրահատուկ պետական կազմավորում: Արցախի ինքնավարությունը մարմնավորում էր նաև հոգևոր իշխանությունը՝ **Գանձասարի կաթողիկոսությունը,** որն իր հերթին նպաստում էր ինքնավարության ամրապնդմանը:

Այրարատյան երկրի և Արցախի մելիքական իշխանությունները, սակայն, թուլացան Նադիրի սպանությունից (1747 թ.) հետո ստեղծված ոչ բարենպաստ իրավիճակում: Նրանք աստիճանաբար կորցրին անկախություն ձեռք բերելու հնարավորությունը:

Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները: Հայ ազատագրական շարժման գործում XVIII դ. կեսերից առաջնորդությունն անցնում է գաղութահայ կենտրոններին: Նրանցից առանձնահատուկ տեղ ուներ հնդկահայ գաղութը:

Հնդկաստանում հայերը հաստատվել էին դեռևս XVI–XVII դարերում: Նրանք հիմնականում զբաղվում էին վաճառականությամբ և մեծ հաջողությունների էին հասել այդ ոլորտում: Երբ եվրոպական պետություններն սկսեցին ներթափանցել Հնդկաստան, հայերն այնտեղ արդեն մեծ կշիռ ունեին: Պատահական չէ, որ անգլիական «Արևելահնդկական ընկերությունը» դյուրությամբ Հնդկաստան մուտք գործելու և հայ վաճառականների հետ մրցակցությունից խուսափելու նպատակով **1688 թ.** պայմանագիր կնքեց նրանց հետ: Անգլիացիները պարտավորվեցին հայ վաճառականների ապրանքներն անգլիական նավերով արտահանել Եվրոպա:

Ամրապնդվելով Հնդկաստանում՝ անգլիացիները սահմանափակեցին հայ վաճառականության իրավունքները: Հզոր Անգլիան, ի վերջո, ուժով կարողացավ տիրել գրեթե ամբողջ Հնդկաստանին: Հնդկահայ բուրժուազիայի ներկայացուցիչներն, անհանգստա-



Հովսեփ Էմին

նալով իրենց կապիտալի համար, սկսեցին գիտակցել սեփական պետություն ունենալու անհրաժեշտությունն ու նշանակությունը: Նման գործիչներից էր Հովսեփ Էմինը:

Հովսեփ Էմինի գործունեությունը: Էմինը ծնվել է 1726 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում: Այստեղից նրանց ընտանիքը տեղափոխվել է Հնդկաստան և հաստատվել Կալկաթայում: Երիտասարդ Էմինը գիտեր Հայաստանի ծանր վիճակի մասին: Էմինը երազում էր տիրապետել ռազմական արվեստին և զենքի ուժով ազատագրել հայրենիքը: Նա ոգևորված էր Արցախի ու Սյունիքի ազատագրական զինված պայքարով:

Հոր կամքին հակառակ, որն ուզում էր նրան վաճառական դարձնել, 1751 թ. մեկնում է Անգլիա և ընդունվում **Վուլվիչի** թագավորական զինվորական ակադեմիա: Այստեղ ծանոթանում է անգլիական քաղաքական ու պետական գործիչների հետ: Էմինին հաջողվում է նաև տեսակցել Անգլիայի վարչապետի հետ: Սակայն նա պարզում է, որ Հայաստանի ազատագրման իր գաղափարները չեն համընկնում Անգլիայի շահերին:

1759 թ. Էմինը գալիս է Հայաստան: Արևմտյան Հայաստանով ճանապարհորդելու ընթացքում հայրենակիցների հետ նա խոսում է հայրենիքի պատմության փառավոր դրվագների մասին: Բերելով արևմտյան քրիստոնյաների օրինակը՝ կոչ է անում պայքարելու հանուն ազատության:

Ծանոթանալով Հայաստանում տիրող իրավիճակին՝ Էմինը համոզվում է, որ օտար տիրապետու-

Մշո Ս. Կարապետ վանքը

թյան դեմ զինված պայքար կարելի է սկսել միայն որևէ հարևան պետության օժանդակությամբ: Այս առումով նա հնարավոր դաշնակից էր համարում Ռուսաստանին կամ Վրաստանին:

Վերադառնալով Անգլիա՝ Էմինը տեղի ռուսական դեսպանից վերցնում է Ռուսաստանի վարչապետ Մ. Վորոնցովին ուղղված երաշխավորական նամակ և ճանապարհվում է **Սանկտ Պետերբուրգ**: Էմինը Վորոնցովին ներկայացնում է Հայաստանի ազատագրության իր ծրագիրը, որն իրագործելու համար մտադիր էր դաշնակցել վրաց **Հերակլ II** թագավորի հետ: Վորոնցովն ընդառաջում է Էմինի խնդրանքին և Հերակլ II–ին ուղղված նամակով նրան ճանապարհում Վրաստան: Վրաց թագավորը համաձայնում է օժանդակել Էմինի ծրագրին:

Շահամիր Շահամիրյան

Հայաստանում ազատագրական շարժումը կազմակերպելու համար Էմինը կապեր է հաստատում Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր **Հովնանի** հետ: Էմինը և Հերակլ II–ը 1764 թ. խրախուսական նամակներ են ուղարկում Հովնանին, սակայն Երևանում խանի մարդիկ ձերբակալում են նամակատարին: Ամենայն հայոց կաթողիկոս **Սիմեոն Երևանցին** տեղեկանում է այդ մասին: Նա կշտամբում է Հերակլ II–ին «անզգույշ քայլերի» համար, որոնք կարող են առաջացնել պարսկական իշխանությունների վրեժխնդրությունը հայերի հանդեպ: Հերակլը ստիպված Էմինից պահանջում է հեռանալ Վրաստանից:

Մեկ տարի Հյուսիսային Կովկասում մնալուց հետո՝ 1766 թ., Էմինը վերադառնում է Հայաստան և հաստատվում **Գետաշենում**՝ Գյուլիստանի **մելիք Հովսեփի** մոտ: Արցախի իրադրությանը ծանոթանալու համար Էմինը լինում է նաև Շուշիում, ապա անցնում Գանձասար: Այստեղ նրան տեղեկացնում են, որ Սիմեոն Երևանցին հրամայել է չընդունել և չօժանդակել իրեն: Համոզվելով, որ Արցախում ևս կատարում են կաթողիկոսի պահանջը՝ Էմինը որոշում է վերադառնալ Ռուսաստան: Սակայն լսելով, որ Խոյի ու Սալմաստի քրիստոնյաները պատրաստ են 18 հազար զինվոր տրամադրել իրեն՝ Էմինը ճանապարհվում է Խոյ: Չունենալով պահանջվող գումարը՝ նա չի կարողանում զորք վարձել: Այսքանից հետո նա 1770 թ. վերադառնում է Հնդկաստան:


ՆՈՐ
ՏԵՏՐԱԿ
որ կոչի
ՅՈՐԴՈՐԱԿ

Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի անվանաթերթը

Մադրասի հայրենասիրական խմբակը: Հնդկաստանի **Մադրաս** քաղաքում **Շահամիր Շահամիրյանի** գլխավորությամբ մի խումբ հայրենասերներ XVIII դ. երկրորդ կեսին ստեղծեցին խմբակ: Նրանք հիմնավոր գործունեություն ծավալեցին Հայաստանի ազատագրումը նախապատրաստելու և հայկական պետականության վերականգնման գաղափարը քարոզելու ուղղությամբ: Հայության շրջանում խանդավառող դեր ունեցավ Հովսեփ Էմինի հայրենասիրական քարոզչությունը: Հնդկահայերը որոշում կայացրին Էմինին տրամադրել 12 000 ռուփի՝ բանակ ստեղծելու համար: Մեծահարուստ **Գրիգոր Խոջաջանյանը** նույնիսկ պատրաստակամություն հայտնեց այդ ծրագրի իրականացման համար կտակելու իր ունեցվածքի մեկ երրորդը, եթե ծրագրին հավանություն տա Սիմեոն Երևանցի կաթողիկոսը:

Շ. Շահամիրյանը Հայաստանի ազատագրությունը տեսնում էր համաժողովրդական ապստամբության միջոցով, որը պետք է գլխավորեին Արցախի մելիքներն ու Էջմիածնի հոգևորականները: Նրա համոզմամբ՝ հայ ժողովուրդը կարող էր օժանդակություն ստանալ Վրաստանից և Ռուսաստանից: Շ. Շահամիրյանը Հերակլ II–ին առաջարկում էր բարեփոխումների միջոցով հզորացնել իր երկիրը: Վրաց թագավորին նույնիսկ թանկարժեք նվերներ է ուղարկում և օգնելու նպատակով պատրաստակամություն հայտնում տեղափոխվելու Վրաստան: Հերակլ II–ն իր հերթին Լոռու գավառը նվիրաբերում է Շահամիրյանին և նրան շնորհում **իշխանի** տիտղոս:

ԳԻՐՔ
ԱՆՈՒՆԵԱԼ
ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ՝

«Որոգայթ փառաց» գրքի անվանաթերթը

Հնդկահայ գործիչները համոզվել էին, որ առանց ժողովրդի աջակցության ազատագրական գործում հնարավոր չէ հասնել հաջողության: Իրենք ազատագրական գաղափարների տարածման, երիտասարդությանը հայրենի երկրի պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու համար կարևորում էին գրականության դերը: Շ. Շահամիրյանի ջանքերով 1771 թ. Մադրասում հիմնվում է հայկական տպարան: Այստեղ էլ լույս է տեսնում **Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»** գիրքը (1772 թ.): Դա հայ իրականության մեջ հրապարակախոսական բնույթի առաջին տպագիր աշխատությունն էր:

Գիրքը ներկայացնում է հայ ժողովրդի հերոսական անցյալը և դրան հակադրում առկա անմխիթար

վիճակը: Կոչ է արվում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության: Հայոց պետականության անկումը հեղինակը բացատրում է հայերի անմիաբանությամբ, թուլությամբ և տգիտությամբ: Մ. Բաղրամյանը քննադատում է միապետական կարգը՝ այն համարելով պետականության անկման հիմնապատճառներից: Նա առաջարկում է ստեղծել սահմանադրություն և երկիրը կառավարել ժողովրդի ընտրովի ներկայացուցիչների միջոցով:

Արքեպիսկոպոս Հովսեփ Արղության

Մադրասի խմբակը հրատարակում է նաև «**Որոգայթ փառաց**» գիրքը (1773 թ.): Սա ապագա հայկական պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու էր՝ յուրահատուկ «Սահմանադրություն»: Հատկանշական է, որ այն ԱՄՆ–ի Սահմանադրությունից 14 տարի շուտ է լույս տեսել: Գիրքը Հայաստանում սահմանադրական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր և հայ քաղաքական մտքի կարևոր նվաճումներից:

Հայաստանի ազատագրության ծրագրերը: XVIII դ. 60–ական թվականներից Հայաստանի ազատագրության համար գործունեություն է սկսում նաև ռուսաստանահայ գաղութը: Դեպի հարավ ծավալվելու Ռուսաստանի ծրագիրը և հայ ազատագրական ուժերի նպատակադրումները համընկել էին: Հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերից էին Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ **Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը** և ազգային գործիչ **Հովհաննես Լազարյանը**:

Հայ գործիչներին ոգևորում էր 1783 թ. **Գեորգիևսկ** քաղաքում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված դաշնագիրը, որով Ռուսաստանն իր հովանավորության տակ էր առնում Վրաստանը և զորք տրամադրում նրան: Արղությանն ու Լազարյանը 1780–ական թթ. սկզբին բանակցություններ էին վարում կայսրության պետական գործիչների հետ Հայաստանն ազատագրելու վերաբերյալ: Նրանք կազմում են Հայաստանի ազատագրության և հայ–ռուսական դաշնագրի՝ 18 հոդվածից բաղկացած մի նախագիծ, որը հայտնի է «**Հյուսիսային ծրագիր**» անունով: Ըստ նախագծի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանի թագավորն ընտրվելու էր ռուսաց կայսեր կողմից:



Հովհաննես Լազարյան

Ռուսաստանի հովանու տակ հայկական պետականությունը վերականգնելու՝ 20 հոդվածից բաղկացած մեկ այլ նախագիծ է կազմում Շահամիր Շահամիրյանը: Այս նախագծով, որը հայտնի է «**Հարավային ծրագիր**» անունով, Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:

Հովսեփ Արղությանի և Շահամիր Շահամիրյանի նախագծերը ներկայացվեցին Ռուսաստանի կառավարությանը, սակայն ցարական իշխանությունները դրանց ընթացք չտվին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Նադիրը Հայաստանում:
2. Որո՞նք էին Խամսայի մելիքությունները, ի՞նչ կարգավիճակ ստացան դրանք Նադիրի օրոք:
3. Ինչո՞ւ XVIII դ. կեսերից արդիականացավ գաղութահայության՝ սեփական պետականություն ունենալու ձգտումը:
4. Ո՞վ էր Հովսեփ Էմինը: Ներկայացրե՛ք նրա գործունեությունը:
5. Ո՞ր երկրների հետ էր կապում Հայաստանի ազատագրության հարցը Հովսեփ Էմինը, ինչո՞ւ: Նրա ծրագիրը ինչո՞ւ չիրականացավ:
6. Ո՞վ էր ստեղծել Մադրասի խմբակը: Լուսաբանե՛ք դրա գործունեության արդյունքները:
7. Ներկայացրե՛ք Հովսեփ Արղությանի և Շահամիր Շահամիրյանի նախագծերը: Ի՞նչ անուններով են դրանք հայտնի:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով Հայաստանի ազատագրության երեք ծրագրերից ո՞րն էր առավել իրատեսական և ինչո՞ւ:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նադիր շահ, Եղվարդի ճակատամարտ, Խամսայի մելիքություններ, Հովսեփ Էմին, Սիմեոն Երևանցի, Շահամիր Շահամիրյան, Մովսես Բաղրամյան, «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», Մադրասի հայրենասիրական խմբակ, «Որոգայթ փառաց», Հովսեփ Արղության, Հովհաննես Լազարյան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դիզակի մելիք Եգանը հավատարմության և ազնիվ ծառայության համար Նադիր շահի կողմից ստացել էր Խամսայի մելիքությունների գերագահությունը: Մելիքը Նադիր շահի՝ Մուղանի դաշտում ձմեռելու ժամանակ նրա բանակն ապահովել է պարենով:

Մի անգամ ձմռանը Նադիր շահը մելիք Եգանին պատվիրում է իր համար սունկ բերել: Մելիքը հանձնառու է լինում, բայց մյուս մելիքները նրան ասում են, որ անհնարին գործ է հանձն առել. որտեղի՞ց պետք է ձմռան այդ եղանակին սունկ գտնի: Սակայն մելիք Եգանը հանգստացնում է նրանց՝ ասելով, թե ինքը կտա շահի պատասխանը: Եվ գնալով շահի մոտ՝ հայտնում է նրան. «*Ձեր հրամանի համաձայն՝ մարդիկ ուղարկեցի այնտեղ, որտեղ սունկ է լինում, սակայն այդ վայրերը ծածկված էին ձյունով*»:

Նադիր շահը ծիծաղում է և ասում, որ ինքը քաջ գիտեր, որ ձմռանը սունկ չի լինում, այլ պարզապես փորձում էր նրա հավատարմությունը: Եվ շահը նրան ասում է. «*Քանի որ բազմության մեջ իմ հրամանն ընկալեցիր որպես կատարելի, այդ պատճառով իմ հայրացուն ես արդարև*»:

ԳԼՈՒԽ II ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

§ 6. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Վարչաքաղաքական կացությունը: XIX դ. սկզբին Արևելյան Հայաստանը պարսկական տերության, իսկ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության տիրապետության տակ էր: Հյուսիսային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Արևելավրացական թագավորության կազմում էին: Արևելյան Հայաստանի մնացած տարածքը ընդգրկում էր **Երևանի, Նախիջևանի, Գանձակի** և **Ղարաբաղի** խանությունները:

Ամենաազդեցիկ վարչական միավորը Երևանի խանությունն էր: Երևանի խանը՝ **սարդարը,** նաև ամբողջ Արևելյան Հայաստանի կառավարիչներից ամենաազդեցիկն էր: Երևանի խանությունը բաժանված էր **15 մահալի՝ գավառի**: Մահալի կառավարիչ՝ **միրբոլուք,** նշանակում էր սարդարը: Առանձին վարչական միավոր էր Երևան քաղաքը, որի գլխավոր պաշտոնյան

Տեսարան հին Երևանից

կոչվում էր **քալանթար (քաղաքապետ)**: Երևան քաղաքի կառավարումը հաճախ իրականացնում էին հայ ազնվականական տոհմերի ներկայացուցիչները, մասնավորապես՝ **Մելիք-Աղամալյանները:**

Ղարաբաղի խանության կենտրոնը հայկական հինավուրց **Շուշին** էր: Արցախի և Սյունիքի զգալի մասը կազմող այս վարչական միավորը գերազանցապես հայաբնակ էր: Այստեղ դեռ իրենց ազդեցությունն էին պահպանում հայ մելիքական տները, ովքեր իրենց տիրույթներում ունեին որոշակի ինքնավար իրավունքներ:

XIX դ. սկզբին Ռուսաստանյան կայսրությունն սկսեց անդրկովկասյան տարածաշրջանի, այդ թվում՝ Արևելյան Հայաստանը գրավելու իր վաղեմի ծրագրի իրականացումը: Այդ նպատակի համար ռուսական իշխանությունները փորձում էին օգտագործել երկրամասի քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայերի ազատագրական ձգտումները:

1801 թ. Արևելավրացական թագավորությունը կցվեց Ռուսաստանին: Նրա հետ Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև Լոռի, Փամբակ, Շամշադին, Իջևան շրջանները: Այսպես սկսվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացը:

1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Գյուլիստանի հաշտությունը: Համոզվելով, որ Անդրկովկասի մնացած մասի նվաճումը խաղաղ եղանակով այլևս հնարավոր չէ, Ռուսաստանը 1804 թ. պատերազմ սկսեց Պարսկաստանի դեմ:

Ռուսական զորքերը նույն թվականի մայիսին գրավեցին Գանձակի խանության տարածքը և պաշարեցին Արևելյան Հայաստանում պարսիկների ամենաուժեղ հենակետը՝ Երևանի բերդը: Սակայն նրանք հանդիպեցին համառ դիմադրության և ստիպված էին վերադառնալ Վրաստան:

1805 թ. ռուսական բանակն անցավ նոր հարձակման և գրավեց **Շիրակը:** Այսպես Շիրակը միացվեց Ռուսաստանին: Ղարաբաղի խանը իր խանությունը հանձնեց Ռուսաստանյան կայսրությանը:

Ֆրանսիայի կայսր Նապոլեոնը 1812 թ. հունիսին ներխուժեց Ռուսաստան: Օգտվելով դրանից՝ պարսկական իշխանություններն ակտիվացրին իրենց գործողություններն Անդրկովկասում: Ֆրանսիայի ջախջախումից հետո միայն Ռուսաստանն անցավ հարձակման պարսկական ուժերի դեմ: Պարսից գահաժառանգ

Աբաս–Միրզան Արցախում, Մեղրիում և այլ վայրերում տեղի ունեցած մարտերում ծանր պարտություն կրեց:

Պարսկական կողմը հարկադրված էր **1813 թ. հոկտեմբերի 12–ին Արցախի Գյուլիստան** գյուղում կնքել **հաշտություն:** Այս պայմանագրով Իրանը հօգուտ Ռուսաստանի հրաժարվեց Արևելյան Վրաստանից, Արևելյան Անդրկովկասից, Գանձակից, Արցախից, Շիրակից, Զանգեզուրից, Լոռուց, Շամշադինից:

Այսպիսով՝ Արևելյան Հայաստանից Ռուսաստանին անցան զգալի տարածքներ: Երևանի և Նախիջևանի խանությունները դեռևս մնում էին Պարսկաստանի տիրապետության տակ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XIX դ. սկզբին Արևելյան Հայաստանը վարչական ի՞նչ բաժանում ուներ:
2. Ո՞րն էր Արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ վարչական միավորը: Ներկայացրե՛ք դրա կառուցվածքը և կառավարումը:
3. Հայաստանի ո՞ր մասերն էին մտնում Ղարաբաղի խանության կազմի մեջ:
4. Արևելյան Հայաստանի ո՞ր շրջաններն առաջինը միացվեցին Ռուսաստանին:
5. Ե՞րբ է սկսվել XIX դ. առաջին ռուս–պարսկական պատերազմը: Համառոտ ներկայացրե՛ք պատերազմի ընթացքը:
6. Ի՞նչ արդյունքներ ունեցավ ռուս–պարսկական պատերազմը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տետրում լրացրե՛ք աղյուսակը.

Պատերազմը	Տարեթվերը	Կարևոր իրադարձությունները	Պայմանագրի կնքման վայրը	Հիմնական արդյունքները
XIX դ. առաջին ռուս–պարսկական				

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի, Նախիջևանի, Գանձակի և Ղարաբաղի խանություններ, մահալ, միրբոլուք, քալանթար, սարդար, Մելիք–Աղամալյաններ, 1804–1813 թթ. ռուս–պարսկական պատերազմ, Աբաս–Միրզա, Գյուլիստանի հաշտության պայմանագիր

§ 7. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմը: Իրանը չհաշտվեց Այսրկովկասում ունեցած կորուստների հետ և պատրաստվում էր նոր պատերազմի: 1826 թ. հուլիսին Աբաս–Միրզայի 60–հազարանոց բանակը, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժեց Արցախ:

Գեներալ Պասկևիչ Երևանցի

Պարսկական զորքերը **հուլիսի 26–ին** պաշարեցին **Շուշիի** բերդը: Ռուսական կայազորը շրջակա գյուղերից հավաքված հայերի օգնությամբ դիմեց ինքնապաշտպանության: Շուշիի պաշտպանությունը տևեց 47 օր և կարևոր նշանակություն ունեցավ պատերազմի հետագա ընթացքի համար:

Երևանի խանի զորքերն էլ ներխուժեցին Շիրակ: Փոքր Ղարաքիլիսայի գյուղացիները ռուս սահմանապահ զինվորների հետ բարիկադներ կառուցեցին և դիմեցին ինքնապաշտպանության: Իսկ **1826 թ. սեպտեմբերի 3–ին Շամքորի** մոտ հայ նշանավոր գեներալ **Վ. Մադաթովի** 2–հազարանոց ջոկատը ջախջախեց պարսկական 10–հազարանոց զորամասը: Մարտի դաշտում թողնելով մեծ ավար՝ հակառակորդը փախուստի դիմեց: **Սեպտեմբերի 13–ին Ելիզավետպոլի** (Գանձակ) մոտ տեղի ունեցած ավելի մեծ ճակատամարտում ռուսական զորքերը նոր հարված հասցրին Աբաս–Միրզայի բանակին և դուրս շպրտեցին գրավված շրջաններից:

Ռուսական զորքերի հաջողությունները ոգեշնչեցին հայ բնակչությանը: 1827 թ. գարնանը Թիֆլիսում ձևավորվեց հայ կամավորական առաջին ջոկատը, որը կազմված էր ավելի քան 100 մարդուց: Արցախում և այլ վայրերում ևս կազմակերպվեցին կամավորական գումարտակներ՝ ազգային դրոշներով, հայ հրամանատարներով: Լոռի–Փամբակում ճանաչում ձեռք բերեցին **Մարտիրոս Վեքիլյանի,** Շամշադինում՝ **Գրիգոր Մանուչարյանի** ջոկատները:

1827 թ. գարնանից ռուսական զորքերը գեներալ **Իվան Պասկևիչի** հրամանատարությամբ ռազմական գործողություններ ծավալեցին Երևանի և Նախիջևանի խանությունների սահմաններում: Վիրահայոց հոգևոր առաջնորդ **Ներսես Աշտարակեցու** խոսքերով՝ մո-

Վալերի Մադաթով
(Ռոստոմ Մադաթյան)
Հայազգի գեներալ. աչքի է ընկել XIX դ. առաջին երեսնամյակում Ռուսաստանի մղած պատերազմներում:

տենում էր Արարատյան աշխարհի և հայ ժողովրդի ազատագրության ժամը:

Պարսկական մեծաքանակ բանակը հերթական պարտությունը կրեց **1827 թ. օգոստոսի 17–ին** Օշականի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում: Ռուսական կողմը ևս ունեցավ մեծ կորուստներ:

1827 թ. սեպտեմբերին ռուսական զորքերը գրավեցին **Սարդարապատը,** այնուհետև պաշարեցին **Երևանի** բերդը: Պասկևիչը Երևանի խանին առաջարկեց առանց կռվի հանձնել բերդը, բայց մերժում ստացավ: Սեպտեմբերի 30–ի գիշերը՝ մինչև լույս, անընդհատ ռմբակոծվում էր բերդը: Քանդվեցին հարավային պարիսպները: **1827 թ. հոկտեմբերի 1–ի** առավոտյան ռուսական զորքերն ու հայ կամավորները մտան բերդ:

Երևանի գրավումը մեծ ցնծությամբ ընդունվեց հայության կողմից: Այն, փաստորեն, վճռեց պատերազմի ելքը:

Թուրքմենչայի պայմանագիրը: 1827 թ. հոկտեմբերին ռուսական զորամասերը մտան Թավրիզ: Տեղի հայերը աղ ու հացով դիմավորեցին նրանց: 1827 թ. վերջերին և 1828 թ. սկզբներին ռուսական զորքերը գրավեցին Խոյը, Սալմաստը, Ուրմիան, շարժվեցին դեպի Իրանի մայրաքաղաք Թեհրան: Շահը ստիպված հաշտություն խնդրեց:

Երևանի բերդի գրավումը

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Դեղատեղիների սահմանները 1830 թ.
Արևելավրացական թագավորության սահմանը 1800 թ.
Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանի ընդհանուր սահմանները
Հայկական մարզի (1828–1840 թթ.) սահմանները
Արևելյան Հայաստանի և Ախալցխայի նախկին վարչամիավորների սահմանները
1801–1805 թթ. Ռուսաստանին միացված արևելահայկական տարածքներ
1828 թ. Ռուսաստանին միացված արևելահայկական տարածքներ
1829 թ. Ռուսաստանին միացված արևելահայկական տարածքներ
Ախալցխա
1829
Ախալքալաք
Թիֆլիս
Ղազախ
Գյումրի
1805
Կարս
Էրզրում
Ալաշկերտ
Դարաբիլիսա
Բայազետ
Մակու
Արճեշ
Բերկրի
Շորժա
Նախիջևան
1828
Գորիս
Մեղրի
Գանձակ
Տաղավարդ
Սևանա լիճ
Նոր Բայազետ
Երևան
Էջմիածին
Սարդարապատ
Դիլիջան
Ղարաքիլիսա
Ղարաքիլիսա
Ղարաքիլիսա

Օշականի ճակատամարտում (1827 թ. օգոստոսի 17) զոհվածների հիշատակը հավերժացնելու համար 1834 թ. Էջմիածնի կաթողիկոսության միջոցներով կառուցված հուշարձանը

1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայ գյուղում կնքվեց հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրով Արևելյան Հայաստանի ևս մի ընդարձակ տարածք՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցավ Ռուսաստանին: Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք տրվեց մեկ տարվա ընթացքում իրենց շարժական գույքով բնակություն հաստատելու Ռուսաստանին անցած շրջաններում: Ռուս-պարսկական սահմանի մի հատվածն անցնում էր Արաքս գետով: Պարսկահայք նահանգը՝ իր հայտնի Խոյ և Սալմաստ գավառներով, վերադարձվեց պարսիկներին:

Պարսկահայերի վերաբնակեցումը: 1828 թ. գարնանն սկսվեց պարսկահպատակ հայերի զանգվածային վերաբնակեցումը: Շուրջ **40–42 հազար** հայեր Թավրիզից, Մակուից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից և այլ շրջաններից բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում: Վերաբնակիչները 6 տարով ազատվեցին հարկերից ու տուրքերից: Աղքատներին դրամական որոշ օգնություն տրվեց բնակարաններ կառուցելու համար:

Հայերի վերաբնակեցումը կարևոր նշանակություն ունեցավ: Փաստորեն շահ Աբասի կողմից Պարսկաստան բռնագաղթված հայության մի մասը կրկին վերադարձավ իր հայրենի շեները: Այդ զանգվածային վերաբնակեցման շնորհիվ վերականգնվեց Արևելյան Հայաստանի հայկական ժողովրդագրական պատկերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի սկիզբը:
2. 1826 թ. ի՞նչ խոշոր ճակատամարտեր տեղի ունեցան:
3. Ի՞նչ մասնակցություն ունեցան հայերը պատերազմում:
4. Նկարագրե՛ք 1827 թ. ռազմական գործողությունները: Ի՞նչ նշանակություն ունեցավ Երևանի բերդի գրավումը:
5. Ե՞րբ է կնքվել Թուրքմենչայի պայմանագիրը, և ի՞նչ էր այն նախատեսում:
6. Ե՞րբ սկսվեց Պարսկաստանից հայերի վերաբնակեցումը: Որքա՞ն հայ վերաբնակվեց:
7. Ի՞նչ նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանում հայերի վերաբնակեցումը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Շարունակե՛ք նախորդ դասին լրացրած աղյուսակը՝ ավելացնելով XIX դ. երկրորդ ռուս–պարսկական պատերազմը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմ, Շուշիի 47–օրյա պաշտպանություն, Վ. Մադաթով, Շամքորի ճակատամարտ, Ելիզավետպոլի ճակատամարտ, Ի. Պասկևիչ, Ներսես Աշտարակեցի, Օշականի ճակատամարտ, Սարդարապատ, Թուրքմենչայի պայմանագիր, հայերի վերաբնակեցում

§ 8. ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՐՉԱՁԵՎԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վասիլ Բեհբութով (Բարսեղ Բեհբության) Ռուսական բանակի հայ գեներալ: Մասնակցել է XIX դ. առաջին կեսի և Ղրիմի պատերազմներին: 1830–1838 թթ. Հայկական մարզի վարչության պետն էր:

Հայկական մարզը: Արևելյան Հայաստանում խանական կարգերի տապալումից հետո անհրաժեշտ էր ստեղծել նոր իշխանություն: Դեռևս 1827 թ. վերջերին մի խումբ հայ հայրենասեր մտավորականներ՝ **Խ. Լազարյանը, Ա. Խուդաբաշյանը** և **Կ. Արղությանը,** Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար իշխանություն ստեղծելու վերաբերյալ նախագիծ կազմեցին: Նախագծի համաձայն՝ Արևելյան Հայաստանը պետք է ունենար ինքնավարություն, իր զինանշանը, ազգային դրոշը և օրենքները: Պետական պաշտոնյաները պետք է հայեր լինեին:

Հայկական պետության մեջ էին ընդգրկվելու Հին Հայաստանի բոլոր կենտրոնական նահանգները: Այսինքն՝ Հայաստանը պետք է միավորվեր, ունենար հայ կամավորականներից հավաքագրված բանակ, հայազգի պաշտոնյաներ: Երկրի պետական ծառայողներն իրենց կրթությունը ստանալու էին բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ Լազարյան ճեմարանում:

Ցարական կառավարությունը, սակայն, չընդունեց Հայաստանի ինքնավարության նախագիծը: Այդուհանդերձ, կատարեց հայերին սիրաշահելու քայլ. **1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի** հրամանագրով Երևանի և Նախիջևանի խանություններից կազմվեց **Հայկական մարզը**: Այն, որպես առանձին վարչական միավոր, մտնելու էր կայսրության կազմը, ունենալու էր իր դրոշը և զինանշանը: Սակայն վարչական այդ կազմավորումը իրական ինքնավարություն չէր:

Հայկական մարզը կառավարում էր մարզային վարչությունը, որի պետը 1830–1838 թթ. հայազգի գեներալ **Վասիլ Բեհբութովն** էր: Պարսկական օրենքներն ու վարչաձևերն աստիճանաբար փոխարինվեցին ռուսական օրենքներով ու վարչաձևերով:

Ամրապնդվելով Անդրկովկասում՝ ռուսական արքունիքը շուտով կատարեց մի շարք վարչական փոփոխություններ: **1840 թ.** վերացվեց Հայկական մարզը: **1844 թ.** հիմնվեց **Կովկասի փոխարքայությունը,** իսկ երկու տարի անց Անդրկովկասը բաժանվեց նահանգների: **1849 թ.** հիմնվեց **Երևանի նահանգը,**

որի մեջ մտան Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները: Վարչական այդ վերափոխումները չէին բխում տեղի ժողովուրդների շահերից և նպատակ ունեին հաստատելու ռուսական իշխանություն տարածաշրջանում:

1836 թ. եկեղեցական կանոնադրությունը: Ցարական կառավարությունը **1836 թ. մարտի 11–ին** հրապարակեց եկեղեցական հատուկ կանոնադրություն: Դրանով սահմանվում էին Հայ առաքելական եկեղեցու իրավունքները, պարտականությունները և փոխհարաբերությունները ռուսական պետության հետ:

Հայ եկեղեցին իրավունք չուներ զբաղվելու պետական գործերով, տնօրինելու էր միայն դպրոցի, ծեսերի և այլ հարցեր: Դրանով իշխանությունները փորձում էին Հայ առաքելական եկեղեցին պահել պետական հսկողության տակ:

Ըստ կանոնադրության՝ Ռուսաստանում ստեղծվելու էր հայկական հոգևոր **6 թեմ:** Ամենայն հայոց կաթողիկոսական երկու թեկնածուներից ռուսական կայսրն իր հայեցողությամբ հաստատելու էր մեկին. դրանով ռուսական արքունիքը հնարավորություն էր ստանում նաև միջամտելու հայոց կաթողիկոսների ընտրությանը:

Անշուշտ, կանոնադրությունը պարունակում էր նաև հայության համար դրական կետեր: Հայ եկեղեցին հսկայածավալ Ռուսաստանում ստանում էր պաշտոնական կարգավիճակ, հոգևոր–եկեղեցական ինքնավարություն, հայ մանուկների կրոնական ու ազգային դաստիարակությամբ զբաղվելու որոշակի հնարավորություն:

Հայկական մարզի տարածքը 21 000 քառ. կմ էր: 1833 թ. ուներ 5 գավառ՝ Երևանի, Նախիջևանի, Օրդուբադի, Սարդարապատի և Սուրմալուի (ներառում էր նաև Մասիս լեռը):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Ռուսաստանի հովանու ներքո ինքնավարություն ստեղծելու հայերի կազմած նախագիծը:
2. Ցարական արքունիքը վարչատարածքային ի՞նչ միավոր ստեղծեց Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից:
3. 1840–ական թթ. վարչական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասում:
4. Ե՞րբ է ռուսական կառավարության կողմից հաստատվել Հայ եկեղեցու կանոնադրությունը:
5. Կանոնադրությամբ Հայ եկեղեցու ո՞ր իրավունքներն էին սահմանափակվում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով 1836 թ. եկեղեցական կանոնադրությունն ավելի շատ դրա-կա՞ն, թե՞ բացասական հետևանքներ ունեցավ Հայոց եկեղեցու համար:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական մարզ, Վ. Բեհբութով, Խ. Լազարյան, Ա. Խուդաբաշյան, Կ. Արղության, Կովկասի փոխարքայություն, Երևանի նահանգ, 1836 թ. եկեղեցական կանոնադրություն

§ 9. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Վարչական բաժանումը: Արևմտյան Հայաստանը, ինչպես գիտեք, օսմանյան տիրապետության ներքո էր: Այն բաժանված էր **Էրզրումի (Կարին), Վանի, Կարսի, Ախալցխայի, Դիարբեքիրի և Սեբաստիայի նահանգների (վիլայեթ, փաշայություն): Կիլիկիայի** տարածքը հիմնականում ընդգրկված էր Ադանայի ու Մարաշի նահանգներում: Նահանգապետ–փաշաներից ամենաազդեցիկը Էրզրումի փաշան էր, որ կրում էր **սերասկյար** տիտղոսը: Նա միաժամանակ կայսրության արևելյան շրջաններում տեղակայված թուրքական զորքերի հրամանատարն էր:

Յուրաքանչյուր նահանգ բաժանված էր **գավառների (սանջակներ)**:

Հայ իշխանական տների շառավիղներն իրենց կիսանկախ վիճակը պահպանում էին **Սասունում, Մուշում, Մոկսում, Զեյթունում:**

1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմը: XIX դարի առաջին ռուս–պարսկական պատերազմի ժամանակ Ֆրանսիայի դրդմամբ Օսմանյան կայսրությունը 1806 թ. դեկտեմբերին պատերազմ սկսեց Ռուսաստանի դեմ: Թեև ռուսական բանակները միաժամանակ ստիպված էին մարտեր մղել և՛ թուրքական,

Մանուկ բեյ Միրզայան
Ռումինահայ դիվանագետ, հայտնի առևտրական գործիչ, բարերար

Էրզրումի համայնապատկեր

և՛ պարսկական զորքերի դեմ, այդուհանդերձ, ունեցան լուրջ հաջողություններ: **1807 թ. հունիսի 18–ին** Ախուրյան գետի մոտ՝ **Փոքր Ղարաքիլիսա** գյուղի ճակատամարտում նրանք պարտության մատնեցին թուրքական զորքերին:

Ռուսաստանի հաջողությունները ստիպեցին օսմանյան Թուրքիային **1812 թ. մայիսին** հայազգի դիվանագետ **Մանուկ բեյի** աջակցությամբ **Բուխարեստում** կնքել հաշտություն: Սակայն Անդրկովկասում ռուսների գրաված տարածքները վերադարձվեցին թուրքերին:

1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմը և արևմտահայությունը: Պարսկաստանի դեմ տարած հաղթանակներն ամրապնդեցին Ռուսաստանի դիրքերն Անդրկովկասում: Սակայն ռուսական արքունիքը դրանով չբավարարվեց: Սկսվեց նոր պատերազմ Օսմանյան կայսրության դեմ:

1828 թ. հունիսին ռուսական բանակը գեներալ Ի. Պասկևիչի հրամանատարությամբ անցավ Ախուրյան գետը և շարժվեց դեպի Կարս: Ռուսները և նրանց հետ ևս մի քանի հազար հայ կամավորներ պաշարեցին **Կարսի բերդը** և **հունիսի 23–ին** գրավեցին այն:

Կարսի գրավումն ունեցավ ռազմավարական խոշոր նշանակություն: Դրանից հետո ռուսական զորքերը **հուլիս–օգոստոսին** գրավեցին Ջավախք գավառը՝ **Ախալքալաք** կենտրոնով, **Ախալցխան** ու **Արդահանը:**

Ռուսական զորքերի հաղթանակները ոտքի հանեցին Բայազետի հայերին, որոնք կազմում էին տեղի բնակչության ճնշող մեծամասնությունը: 1828 թ. օգոս-

Բայազետի բերդը

1829 թ. հունիսին Վանի փաշան, ավերելով ու կողոպտելով հայկական գյուղերը, պաշարեց Բայազետի բերդը: Տեղի ռուսական կայազորը և հազար հայ կամավորներ քաջաբար դիմադրեցին հակառակորդին և անառիկ պահեցին բերդը: Այդ կռիվներում, ռուսների վկայությամբ, հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ:

տոսին ռուսական զորքերի Երևանյան ջոկատը տեղի հայերի աջակցությամբ գրավեց **Բայազետի** ու **Ալաշկերտի** գավառները:

Անգլիայի հրահրմամբ 1829 թ. փետրվար–մարտ ամիսներին թուրքական զորքերը, մեծ ուժեր կենտրոնացնելով Կարինում, հարձակման անցան Կարսի և Ախալցխայի ուղղությամբ: Նրանց հաջողվեց հանկարծակի ներխուժել Ախալցխա և մեծ կորուստներ պատճառել բնակիչներին ու կայազորին: Սակայն Ախալցխայի կայազորը պարետ, գեներալ **Վ. Բեհբութովի** գլխավորությամբ հերոսաբար մարտնչեց թշնամու դեմ և փախուստի մատնեց նրան:

1829 թ. ռուսական զորքերը գրավեցին Կարինը, Խնուսը, Մուշը, Բաբերդը, Օլթին և այլ վայրեր: Այս պատերազմում ևս հայերը, կարծելով, թե Ռուսաստանը իրենց պետք է ազատագրի մահմեդականների լծից, նյութական և ռազմական մեծ օգնություն ցուցաբերեցին ռուսական զորքերին:

Ադրիանուպոլսի պայմանագիրը: Ռուս–թուրքական պատերազմը ինչպես Բալկանյան, այնպես էլ Կովկասյան ճակատում ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: **1829 թ. սեպտեմբերի 2–ին Ադրիանուպոլսում** կնքվեց հաշտության պայմանագիր:

Այդ պայմանագրով Սև ծովի արևելյան ափերից ընդարձակ մի տարածք, ինչպես և Ախալցխայի ու Ախալքալաքի գավառներն անցան Ռուսաստանին: Թուրքական տիրապետության տակ եղած ժողովուրդների համար, ընդհանուր առմամբ, դա նպաստավոր պայմանագիր էր, բայց այն չարդարացրեց արևմտահայերի հույսերը:

Ավելին՝ Ադրիանուպոլսի պայմանագիրն արևմտահայերի համար ծանր կացություն ստեղծեց: Ռուսական զորքերի հեռանալուց հետո թուրքերը կարող էին վրեժխնդիր լինել ռուսներին օժանդակած հայերից: Իր հերթին ռուսական հրամանատարությունը, օգտվելով այդ վիճակից, շահագրգռեց հայերին՝ վերաբնակվելու Ռուսաստանին անցած շրջաններում: Այդ մասին հատուկ հոդված մտցվեց Ադրիանուպոլսի պայմանագրի մեջ:

Արևմտահայերի զանգվածային վերաբնակեցումը: 1829–1830 թթ. ընթացքում Կարինի, Կարսի, Բայազետի շրջաններից Ռուսաստանի տիրապետության տակ անցան շուրջ **75 հազար** հայեր: Կարին-

ցիները բնակություն հաստատեցին հիմնականում Ախալցխայի և Ախալքալաքի, կարսեցիները՝ Շիրակի և Թալինի շրջաններում, բայազետցիներն ու ալաշկերտցիները՝ Սևանա լճի ավազանում:

Վերաբնակիչները կառուցեցին բնակարաններ, հողատարածքներ մշակեցին, այգիներ տնկեցին, ջրանցքներ ու ճանապարհներ շինեցին, կենդանություն և շունչ տվեցին բազմաթիվ հին ու նոր բնակավայրերի: Ցարիզմի ցույց տված օգնությունը չնչին էր, ուստի երկար ժամանակ հայ վերաբնակիչները մեծ զրկանքներ կրեցին, և նույնիսկ նրանց մի մասը վերադարձավ Արևմտյան Հայաստան:

Ընդհանուր առմամբ, ինչպես պարսկահայերի, այնպես էլ արևմտահայերի վերաբնակեցումն ունեցավ մեծ նշանակություն. Արևելյան Հայաստանում հայության թիվն աճեց, և այն կրկին վերածվեց հայահավաք կենտրոնի: Սակայն Պարսկահայքն ու Արևմտահայաստանը միաժամանակ կորցրին իրենց հայ բնակչության մի ստվար հատված:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք XIX դ. սկզբի Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը:
2. Պարզաբանեք 1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմի ընթացքն ու արդյունքները:
3. Որո՞նք էին 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի պատճառները: Ներկայացրեք պատերազմի սկիզբը և Կարսի գրավման նշանակությունը:
4. Տարածքային ի՞նչ ձեռքբերումներ ունեցան ռուսական զորքերը 1829 թ. ընթացքում:
5. Ե՞րբ է կնքվել Ադրիանուպոլսի հաշտության պայմանագիրը:
6. Ի՞նչ էր նախատեսում այդ պայմանագիրը: Փորձեք վերհանել դրա նշանակությունը հայերի համար:
7. Որքա՞ն արևմտահայեր, ե՞րբ և ո՞ր շրջաններում վերաբնակվեցին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

1. Շարունակեք լրացնել պատերազմներին վերաբերող աղյուսակը:
2. Կազմեք Պարսկաստանից և Թուրքիայից եկած հայերի՝ Արևելյան Հայաստանում վերաբնակեցման մոտավոր գծապատկերը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էրզրումի, Վանի, Կարսի, Ախալցխայի, Դիարբեքիրի և Սեբաստիայի նահանգներ (փաշայություններ), սերասկյար, սանջակ, 1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմ, Մանուկ բեյ, Բուխարեստի հաշտության պայմանագիր, 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմ, Ադրիանուպոլսի պայմանագիր

ԳԼՈՒԽ III
ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

§ 10. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայ մշակույթի զարգացման պայմանները և կենտրոնները: XVII–XVIII դարերում հայ մշակույթը, մայր հայրենիքում ստեղծված քաղաքական ծանր կացության պատճառով, հիմնականում զարգանում էր օրեցօր ստվարացող հայկական գաղթավայրերում: Դրանք գտնվում էին Հնդկաստանում, Ռուսաստանում, Վենետիկում, Իրանում և այլուր:

XIX դ. առաջին երեսնամյակին գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանի անցումը Ռուսաստանին փոխեց տարածաշրջանի իրավիճակը: Ուժեղացավ գաղթավայրերից գիտամշակութային կենտրոնները հայրենի հողի վրա կամ դրան մոտ տեղափոխելու շարժումը: XIX դ. առաջին կեսից աստիճանաբար Թիֆլիսն ու Կ. Պոլիսը դարձան հայության ազգային և մշակութային կյանքի երկու գլխավոր կենտրոնները:

Նույն ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի կյանքում ոչ միայն դրական տեղաշարժեր չեղան, այլև արևմտահայերի զանգվածային վերաբնակեցումից հետո տնտեսությունն ու մշակույթը մնացին ծանր պայմաններում:

Դպրոցը: Կրթությունը մնում էր մշակույթի կարևորագույն բնագավառներից մեկը: XVIII դարում բացված հայտնի կրթօջախներից էին **Վենետիկի Ս. Ղազար**

Վենետիկի Ս. Ղազար կղզին (ժամանակակից տեսքը)

Լազարյան ճեմարանը

կղզու վանական և Կ. Պոլսի **Սկյուտար** թաղամասի դպրոցները: Դրանք մեծ դեր խաղացին հայ կրթական կյանքում: Մեծ նշանակություն ունեցավ հայրենի հողի վրա՝ **Էջմիածնում 1763 թ. Սիմեոն Երևանցու** ջանքերով դպրոցի հիմնադրումը:

Հայ կրթական կյանքը վերելք ապրեց հատկապես XIX դարում, երբ բացվեցին բազմաթիվ բարձրագույն դպրոցներ: Հատկապես աննախադեպ զարգացում ապրեց ռուսահայ բարձրագույն դպրոցը: **1810 թ. Աստրախանում** հիմնվեց **Աղաբաբյան դպրոցը, 1815 թ. Մոսկվայում** բացվեց նշանավոր **Լազարյան ճեմարանը:** Վերջինս Ռուսաստանյան կայսրությունում միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունն էր, որտեղ պատրաստվել են արևելյան լեզուների բարձրակարգ մասնագետներ, նշանավոր հայագետներ:

Վիրահայոց հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցին, կարևորելով հայահոծ Թիֆլիսի դերը, **1824 թ.** հիմնեց հայկական ուսումնարան: Այն հետագայում հայտնի դարձավ **Ներսիսյան դպրոց** անունով և մեծ համբավ ձեռք բերեց: Շուրջ մեկ դար այս դպրոցը մեծապես նպաստեց արևելահայ գրական–հասարակական կյանքի վերելքին:

1837 թ. Երևանում և 1838 թ. Շուշիում բացվեցին թեմական դպրոցներ: XIX դ. առաջին կեսին Վենետիկում գործում էր նշանավոր **Ռափայելյան** դպրոցը: Արևմտյան Հայաստանում գործող կրթօջախներից համեմատաբար ճանաչված էին Վանի, Էրզրումի, Ախալցխայի, Ախալքալաքի դպրոցները: Հայ երիտասարդու-



Ներսիսյան դպրոցը

թյունը կրթություն էր ստանում նաև եվրոպական համալսարաններում:

Տպագրությունը: Հայ տպագրությունը հասավ նոր հաջողությունների: Հիմնվեցին բազմաթիվ տպարաններ Ամստերդամում, Կ. Պոլսում, Վենետիկում: **Ոսկան Երևանցու** ջանքերով 1666 թ. Ամստերդամի տպարանում առաջին անգամ հայերենով լույս տեսավ ամբողջական Աստվածաշունչը:

Հայ տպագրության պատմության մեջ հատկապես հիշարժան է **1771 թ.**, երբ **Սիմեոն Երևանցի** կաթողիկոսը Էջմիածնում հիմնեց **տպարան**: Այն **առաջինն էր Հայաստանում**: Շուտով կառուցվեց նաև Էջմիածնի թղթի գործարանը:

Տպագրության բնագավառում մեծ հաջողություններ են գրանցվում նաև Կ. Պոլսում: **Պողոս Արապյանը** դառնում է Օսմանյան կայսրության ամենանշանավոր տպագրիչը: Նա տարբեր լեզուների համար ստեղծում է տառատեսակներ, այդ թվում՝ թուրքերենի:

Հայ մամուլի սկզբնավորումը: XVIII դ. վերջին հայ մշակույթի ամենախոշոր նվաճումը հայ մամուլի ստեղծումն էր: **1794 թ.** Հնդկաստանի Մադրաս քաղաքում **Հարություն Շմավոնյանի** խմբագրությամբ լույս է տեսնում հայկական առաջին ամսագիրը՝ **«Ազդարարը»:** Այն ուներ քաղաքական, տնտեսական լուրերի բաժիններ:

Հայկական մամուլը հաջորդ տասնամյակներին մեծ առաջընթաց ունեցավ: XIX դ. առաջին կեսին հրատարակվում էին 40 անուն թերթեր և ամսագրեր, բոլորն էլ՝ Հայաստանից դուրս:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր XVII–XVIII դարերում հայկական մշակույթը զարգանում գերազանցապես հայրենիքից դուրս:
2. Որտե՞ղ էր հիմնականում զարգանում հայ մշակութային կյանքը:
3. Ո՞ր քաղաքները դարձան հայության ազգային և մշակութային կյանքի երկու կենտրոնները:
4. Թվարկե՛ք XVIII դարից մինչև XIX դարի կեսերը բացված հայկական դպրոցներ:
5. Ե՞րբ և ո՞ւմ ջանքերով Էջմիածնում հիմնվեց տպարան:
6. Հայրենիքից դուրս որտե՞ղ էր զարգացել հայ տպագրությունը: Նշանավոր ի՞նչ տպագրիչների գիտեք:
7. Ո՞րն է հայկական առաջին ամսագիրը, ո՞վ էր հիմնադիրը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տետրում լրացրե՛ք աղյուսակը.

Դպրոցը	Վայրը	Հիմնադրման տարեթիվը

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վենետիկի Ս. Ղազար կղզու վանական դպրոց, Կ. Պոլսի Սկյուտարի դպրոց, Էջմիածնի դպրոց, Աստրախանի Աղաբաբյան դպրոց, Մոսկվայի Լազարյան ճեմարան, Ներսիսյան դպրոց, Երևանի և Շուշիի թեմական դպրոցներ, Ոսկան Երևանցի, Պողոս Արապյան, Հարություն Շմավոնյան, «Ազդարար»

§ 11. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Պատմագիտությունը: Այս ժամանակաշրջանում զարգացավ նաև հայ պատմագիտական միտքը:

XVIII դ. 20–ական թթ. ազատագրական շարժումների պատմության մասին կարևորագույն աղբյուրներ են **Եսայի Հասան-Ջալալյանի** «**Պատմութիւն Աղուանից**» և **Ստեփանոս Շահումյանի** «**Ընտիր պատմութիւն Դաւիթ բէկին**» աշխատությունները: **Աբրահամ Երևանցին** գրել է XVII–XVIII դարերի թուրք–իրանական պատերազմների և Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության մասին:

Միքայել Չամչյան

Հռչակավոր պատմաբան **Միքայել Չամչյանը** գրեց իր եռահատոր «**Հայոց պատմությունը**»: Այն, Մովսես Խորենացու աշխարհահռչակ գրքից հետո, հայոց ամբողջական պատմությունը ներկայացնող երկրորդ աշխատությունն էր:

Մխիթարյաններից նշանավոր էր նաև **Ղուկաս Ինճիճյանը**, ով պատմաաշխարհագրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ էր:

Վիեննայում լույս տեսած «**Տիեզերական պատմություն**» երկհատորյակը մեծ ճանաչում բերեց պատմաբան **Հովսեփ Գաթըրճյանին:**

Հայոց պատմությամբ սկսեցին զբաղվել նաև օտարները, ինչպես օրինակ՝ ռուս պատմաբան **Սերգեյ Գլինկան**: Նա գրեց «**Հայ ժողովրդի պատմության տեսություն**» աշխատությունը:



Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը»

Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: 1717 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում **Մխիթար Սեբաստացու** կողմից հիմնվեց հայտնի **Մխիթարյան միաբանությունը**: Դրան կից բացվեցին դպրոց, մատենադարան, տպարան և այլն: Շուտով միաբանությունը դարձավ հայ գիտության խոշորագույն կենտրոններից մեկը (գործում է մինչ օրս):

Միայն XVIII դ. Մխիթարյանները հրատարակել են 100 անուն գիրք:

Մեծ հաջողություններ արձանագրվեցին պատմության և աշխարհագրության ուսումնասիրման բնագավառներում:

1830–ական թթ. Մխիթարյանները հրատարակեցին «**Նոր բառգիրք Հայկազեան լեզուի**» բառարանը, որը 50 տարվա համառ աշխատանքի արդյունք էր:

Ս. Ներսիսյան.
«Խնջույք Քուռ գետի ափին»

Արվեստը: XVIII դարից հայտնի դարձան գեղանկարչության վարպետներ **Հովնաթանյանները:** Մկրտիչ Նաղաշի որդիներ **Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանները** հիմնականում ստեղծագործել են Թիֆլիսում: Հ. Հովնաթանյանը թողել է շուրջ 60 կտավ:

XIX դ. առաջին կեսին Ղրիմի **Թեոդոսիա** քաղաքում իր գործունեությունն է սկսում **Հովհաննես Այվազովսկին:**

Հայտնի նկարիչ էր Խ. Աբովյանի մանկության ընկեր **Ստեփան Ներսիսյանը**: Նա ստեղծել է բազմաթիվ հայ գործիչների դիմանկարներ:

Դեռ XVIII դարից օտար հեղինակները վկայում են Երևանում հայ գուսանների և թատրոնի մասին: Հայ հոգևոր երաժշտության անաղարտության պահպանման ու զարգացման գործում նշանակալից ավանդ ունեցավ պոլսահայ **Համբարձում Լիմոնճյանը:** Նրա մեծագույն ծառայությունը **1815 թ.** հայկական նոր ձայնագրության ստեղծումն էր: Միջնադարյան հայ երգարվեստի նմուշները, որոնք գրի էին առնված հայկական



Հովհաննես Այվազովսկի. «Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում»

հատուկ նոտաներով՝ խազերով, Հ. Լիմոնճյանը կարողանում է վերծանել, դրանք հարմարեցնել եվրոպական գծային նոտաներին և փրկել կործանումից:

Որոշակի դրսևորումներ ունեցավ հայ թատերական կյանքը: 1827 թ. Երևանում բեմադրվեց ռուս գրող **Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»** պիեսը՝ առաջին անգամ և հեղինակի ներկայությամբ: Ներկայացումներ էին տրվում նաև Թիֆլիսում՝ թատերասեր **Շերմազանյանների** տանը:

XIX դ. առաջին կեսին կրթամշակութային բնագավառում եղած ձեռքբերումների հիմքի վրա հայ մշակույթը հաջորդ ժամանակաշրջանում հասավ աննախադեպ բարձունքների:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմագիտության բնագավառում ինչ նոր աշխատություններ ստեղծվեցին XVIII դարում և XIX դարի առաջին կեսին:
2. Ո՞ւմ ջանքերով և ե՞րբ է հիմնադրվել Մխիթարյան միաբանությունը:
3. Ներկայացրե՛ք ժամանակաշրջանի խոշոր նկարիչներին:

4. Ի՞նչ ավանդ է ունեցել Հ. Լիմոնաձյանը հայ մշակույթի մեջ:
5. Ռուս գրողներից ո՞ւմ և ո՞ր ստեղծագործությունն է առաջին անգամ բեմադրվել Երևանում 1827 թ.:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տետրում լրացրեք աղյուսակը.

Բնագավառը	Գործիչը	Ստեղծագործությունը
Գիտություն		
Արվեստ		

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մխիթարյան միաբանություն, Մխիթար Սեբաստացի, Միքայել Չամչյան, Ղուկաս Ինաճիճյան, Հովսեփ Գաթըրճյան, Սերգեյ Գլինկա, «Նոր բառգիրք Հայ-կազեան լեզուի», Հովնաթանյաններ, Հովհաննես Այվազովսկի, Համբարձում Լիմոնաճյան, Ա. Գրիբոյեդով

I ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. XVII դարի կեսերից սկսվում է Հայոց պատմության նոր ժամանակաշրջանը: Հայաստանը Իրանի և Օսմանյան կայսրության տիրապետության ներքո էր: Աստիճանաբար սկսում են թուլանալ Մերձավոր Արևելքի այս երկու տերությունները, կասեցվում է Թուրքիայի առաջխաղացումը դեպի Եվրոպայի խորքերը: Նոր փուլ է սկսվում Հայաստանի ազատագրության և անկախ պետության վերականգնման համար մղվող պայքարում:
   - *Որո՞նք էին հայ ազատագրական շարժման վերելքի ներքին և արտաքին նախադրյալները: Նշե՛ք շարժման հայտնի գործիչների:*
   - *Ի՞նչ դեր են խաղացել Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը և Իսրայել Օրին:*
2. XVIII դարի ընթացքում ծավալվեց հայ ազատագրական շարժումը: Բուն հայրենիքում զինված պայքար սկսվեց պարսիկների ու թուրքերի դեմ: Նույնիսկ ստեղծվեցին հայկական իշխանություն և ինքնավարություն: Ապա շարժման կենտրոնը տեղափոխվեց հայկական գաղթավայրեր:
   - *Ինչո՞ւ հենց Սյունիքում և Արցախում տեղի ունեցավ զինված պայքար օտար տիրապետությունների դեմ: Թվարկե՛ք այդ պայքարի նշանավոր ղեկավարներին:*
   - *Զինված պայքարի մասնակիցներից ո՞ւմ կերպարն է ձեզ ավելի դուր գալիս, պատրաստե՛ք փոքրիկ ելույթ նրա մասին՝ օգտվելով նաև լրացուցիչ գրականությունից և համացանցից:*
   - *Ինչպե՞ս էր կոչվում Արցախում ստեղծված հայկական ինքնավարությունը: Ի՞նչ նշանակություն է ունեցել այն: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք դրա սահմանները:*
   - *Ինչո՞ւ հնդկահայ գաղութը միաժամանակ դարձավ ազատագրական շարժման գաղափարական և կազմակերպչական կենտրոն: Գնահատե՛ք Հ. Էմինի և Շ. Շահամիրյանի գործունեությունը:*
   - *Ո՞վ էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և ինչո՞վ է հայտնի հայ ազատագրական շարժման պատմության մեջ:*
3. XIX դարի առաջին կեսին որոշակի փոփոխություններ տեղի ունեցան մեր տարածաշրջանում, որտեղ հաստատուն մուտք գործեց Ռուսաստանյան կայսրությունը: Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ թուրքական տիրապետության ներքո:
   - *Ո՞ր պատերազմների արդյունքում Ռուսաստանը գրավեց Անդրկովկասը: Ի՞նչ ակնկալիքներ ուներ հայությունն այդ պատերազմներից: Պատերազմների արդյունքում որքա՞ն հայ վերաբնակվեց Հայաստանի արևելյան հատվածում: Պարզաբանե՛ք դրա բացասական և դրական կողմերը:*
   - *Վարչական ի՞նչ բաժանման ենթարկվեց երկրամասը: Համաձա՞յն եք այն մտքի հետ, որ Հայկական մարզը իրականում ոչ մի ինքնավարություն չուներ: Ինչո՞ւ ցարիզմը սահմանափակեց Հայ առաքելական եկեղեցու իրավունքները:*
   - *Ինչո՞ւ արևմտահայության վիճակը XIX դ. առաջին կեսին չբարելավվեց:*

4. Նոր դարերի առաջին փուլում՝ XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի կեսը, հայկական մշակույթը պահպանման և ինքնադրսևորման դժվարին փուլ անցավ: Զարգանալով հիմնականում Հայաստանից դուրս՝ այն ունեցավ որոշակի ձեռքբերումներ և նախապատրաստեց հաջորդ շրջափուլում ազգային մշակույթի զարթոնքն ու սրընթաց վերելքը:
   - *Թվարկեք այս ժամանակաշրջանի հայկական մշակույթի կենտրոնները: Նշանավոր ինչ ուսումնական հաստատություններ ստեղծվեցին, ե՞րբ և որտե՞ղ:*
   - *Մշակույթի ինչ նոր ճյուղ սկզբնավորվեց հայկական միջավայրում XVIII դարի վերջին:*
   - *Գնահատեք Մխիթարյան միաբանության դերն ազգային մշակույթի զարգացման և ազգապահպանության գործում:*
   - *Ներկայացրեք այս շրջանի հայ արվեստի ձեռքերումները և նշանավոր հեղինակներին:*

ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏՐՎՈՒՄ ՕԳՏՎԵԼ ՆԱԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՅՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՅՔԷՋԵՐԻՑ.

- *armhistory.ru/*
- *www.findarmenia.com/arm/history/*
- *hy.wikipedia.org/wiki/*
- *freebooks.do.am*
- *armenianhouse.org/armenian-history-am.html*
- *dasatu.ru*
- *giteliq.am*
- *www.encyclopedia.am*
- *www.e-armenians.com*

ԲԱԺԻՆ
II

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ԳԼՈՒԽ IV ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

§ 12. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական զարգացած երկրների համեմատ Ռուսաստանում ավելի ուշ սկսվեց արդյունաբերական հասարակության ձևավորումը: Երկրի հասարակական առաջընթացն արագացավ հատկապես Ալեքսանդր II կայսեր կողմից 1860–1870–ական թթ. իրականացված **ազատական (լիբերալ)** բարեփոխումների շնորհիվ: Արդիականացման գործընթացը ներթափանցեց նաև կայսրության ազգային երկրամասեր, այդ թվում՝ Արևելյան Հայաստան:

Բարեփոխումները: Ցարական հրովարտակով Ռուսաստանում **1861 թ.** վերացվեց ճորտատիրությունը: Դա մեծ հնարավորություններ բացեց երկրի զարգացման համար: Նկատի ունենալով, որ Արևելյան Հայաստանում ճորտատիրություն չկար, այստեղ ավելի ուշ իրականացվեց հողային վերափոխումը: **1870 թ. մայիսի 14–ի** ցարական օրենքն Արևելյան Հայաստանում հողի սեփականատեր ճանաչեց կալվածատերերին: Նրանցից կախյալ գյուղացիներին միայն բարձր փրկագնով իրավունք տրվեց դառնալու հողի սեփականատեր: Այդ պատճառով շատ քիչ գյուղացիներ կարողացան հող ձեռք բերել:

Կովկասի փոխարքայության տարածքում կատարվեցին նաև դատական և քաղաքների կառավարման բարեփոխումներ: Քաղաքներում ընտրվում էին **ինքնավարության մարմիններ՝ դումաներ**:

Վարչական հերթական փոփոխությամբ Անդրկովկասը բաժանվեց հինգ նահանգների: 1874 թ. օրենքով **Երևանի նահանգը** տրոհվեց յոթ գավառների՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Սուրմալուի և այլն: Ելիզավետպոլի նահանգի մեջ ամփոփվեցին Արցախը, Գանձակը, Զանգեզուրը, իսկ Լոռին ու Ջավախքն ընդգրկվեցին Թիֆլիսի նահանգի կազմում: 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում Ռուսաստանին անցած տարածքներից ստեղծվեցին Կարսի և Բաթումի մարզերը:

Կովկասի փոխարքայությունը **1882 թ.** վերափոխվեց կառավարչապետության (փոխարքայությունը վերականգնվեց միայն 1905 թ.):

Չնայած անկատարությանը՝ բարենորոգումներն առաջադիմական նշանակություն ունեցան:

Տնտեսության զարգացումը: Ռուսական կապիտալը սկսեց լայնորեն ներդրվել Անդրկովկասում: Երկրամասի տնտեսական կյանքի զարգացմանն էապես նպաստեց երկաթուղու շինարարությունը, որն այստեղ սկսվել էր XIX դ. 60–ական թթ. և շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: **1899 թ.** գործարկվեց Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղին, իսկ երեք տարի անց՝ Ալեքսանդրապոլ—Երևան հատվածը: Երկաթուղին նպաստավոր պայմաններ ստեղծեց կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացման համար:

Արևելյան Հայաստանում արդյունաբերության հիմնական ճյուղը պղնձի արտադրությունն էր, որը կենտրոնացած էր **Ալավերդիում** և **Կապանում**: Երկրորդ տեղն էր գրավում կոնյակի արտադրությունը: Արևելյան Հայաստանը կոնյակի և օղու արտադրությամբ աստիճանաբար ճանաչում ձեռք բերեց ամբողջ աշխարհում: Հատկապես նշանավոր էր Ն. Շուստովի գործարանի «**Արարատ**» ապրանքանիշի կոնյակը:

Երևանը, Շուշին, Ալեքսանդրապոլը, Կարսը, չնայած արդյունաբերական որոշ ձեռնարկությունների առկայությանը, հիմնականում առևտրի կենտրոններ էին:

Հայկական գյուղը, չնայած դանդաղ, բայց նույնպես մուտք գործեց շուկայական հարաբերությունների ոլորտ:

Ն. Շուստովի կոնյակի գործարանի շենքը Երևանում

Ալեքսանդր Մանթաշյան

Աստիճանաբար փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը, մարդկանց աշխարհայացքն ու կենցաղը: Թեև փոփոխություններ տեղի ունեցան հասարակական կյանքում՝ Արևելյան Հայաստանը նախկինի պես մնում էր թույլ զարգացած ագրարային երկրամաս արդյունաբերացող Ռուսաստանի կազմում:

Ազգային ճնշման ուժեղացումը: XIX դ. երկրորդ կեսին ռուսական ինքնակալությունը սաստկացրեց իր գաղութային քաղաքականությունը ազգային երկրամասերում: Անդրկովկասի նվաճումից հետո ռուսական արքունիքի սևեռուն նպատակն էր աստիճանաբար ռուսականացնել տեղական ժողովուրդներին:

Հայ ձեռներեցներից շատերը, չնայած ցարիզմի խտրական քաղաքականությանը, որոշակի հաջողությունների հասան տնտեսական մրցակցության մեջ և Անդրկովկասում դարձան նշանավոր ձեռնարկատերեր: Հայտնի էին **Ալեքսանդր Մանթաշյանը, Միքայել Արամյանցը** և շատ ուրիշներ: Նրանց մի մասը նաև մեծահամբավ բարեգործներ էին: Անձնական միջոցներով բացում էին դպրոցներ, հիվանդանոցներ, կառուցում էին եկեղեցիներ, նյութական օգնություն էին ցույց տալիս թատրոններին, մշակույթի գործիչներին: Հայ բարեգործները միջոցներ էին տրամադրում նաև

Հին Երևան,
Աստաֆյան փողոց

Արամյանցների ընտանիքը

շնորհալի երիտասարդներին, որպեսզի նրանք ուսանեին Եվրոպայի ու Ռուսաստանի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններում և դառնային հայրենիքի ու ազգի վերելքն ապահովող մասնագետներ:

Հայության ինքնության պահպանման խնդրով առաջնահերթ զբաղվում էին Հայոց եկեղեցին, ազգային դպրոցները և մշակութային հաստատությունները, որոնց դեմ էլ ցարական արքունիքն ուղղեց իր առաջին հարվածները:

1884 թ. ցարի հրամանով արգելվեց տարրականից բարձր հայկական դպրոցներ ունենալը, որի հետևանքով փակվեց հայկական 300 դպրոց:

Ի պատասխան հակահայ այդ քաղաքականության՝ բարձրացավ համաժողովրդական վրդովմունքի ալիք: Հայության պայքարը տվեց իր արդյունքները. 1886 թ. նոր ուսումնական տարվանից վերաբացվեցին հայկական դպրոցները:

Շարունակելով հայ ազգային դպրոցը վերացնելու քաղաքականությունը՝ ցարական իշխանությունները **1896 թ.** նորից փակեցին հայկական դպրոցները: Հարվածի թիրախ դարձան նաև հայկական բարեգործական և մարդասիրական ընկերությունները: Սաստկացան հալածանքները հրատարակչական գործի և հատկապես հայ մամուլի նկատմամբ, փակվեցին մի շարք պարբերականներ:

Ազգային ճնշման քաղաքականությունը շարունակվեց նաև XX դ. սկզբներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ռուսաստանում ե՞րբ են իրականացվել ազատական բարեփոխումներ Ալեքսանդր II–ի կողմից:
2. Ի՞նչ էր նախատեսում 1870 թ. մայիսի 14–ի ցարական օրենքը:
3. Վարչական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասում. ի՞նչ նպատակ էին դրանք հետապնդում:
4. Նշե՛ք Անդրկովկասում կատարված մյուս բարեփոխումները:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցավ երկաթուղու գործարկումն Արևելյան Հայաստանում: Արդյունաբերության ո՞ր ճյուղերն էին այստեղ զարգացած:
6. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան հասարակական կյանքում:
7. Ի՞նչ քաղաքականություն էր վարում ռուսական կառավարությունն Անդրկովկասում. ո՞րն էր դրա նպատակը: Ինչո՞ւ էր այդ քաղաքականությունն ուղղվում հատկապես հայերի դեմ:
8. Ե՞րբ և ինչո՞ւ են փակվել հայկական դպրոցները:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալեքսանդր II կայսր, ճորտատիրության վերացում, 1870 թ. մայիսի 14–ի ցարական օրենք, Կովկասի կառավարչապետություն, «Արարատ» ապրանքանիշով կոնյակ, Ա. Մանթաշյան, Մ. Արամյանց, հայերի ինքնության պահպանում, հայկական դպրոցների փակում

§ 13. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ. երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունն անկասելի անկում էր ապրում: Թուրքական տիրապետության ծանր պայմաններում գտնվող ազգերը հերոսական պայքար էին ծավալել իրենց անկախությունը վերականգնելու համար: Նրանցից շատերը հաղթանակով ավարտեցին ազգային–ազատագրական պայքարը և հասան բաղձալի արդյունքի: Այլ էր իրավիճակը Արևմտյան Հայաստանում:

Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը, բնակչությունը: Թուրքական կառավարությունը հաճախակի փոխում էր Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը: Դա արվում էր այն նպատակով, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնություն չկազմեին: Իսկ վարչական բաժանումներում արգելված էր գործածել **Հայաստան** անունը:

XIX դ. վերջին Արևմտյան Հայաստանի տարածքը բաժանված էր վեց նահանգների (վիլայեթներ): Դրանք էին՝ **Վանի, Էրզրումի (Կարին), Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի** և **Սեբաստիայի** նահանգները: Այս վարչական բաժանումը պահպանվեց մինչև Առաջին աշխարհամարտը:

Օսմանյան պետության հայահալած քաղաքականության հետևանքով բուն երկրում հայերի թիվը գնալով պակասում էր, իսկ մահմեդականներինը՝ ավելանում:

Վանի հայկական թաղամասի ավերակներն այսօր. պարզորոշ երևում են նախկին փողոցների, տների ուրվագծերը:

Էրզրում (Կարին)

Արծաթյա զարդեր
Վան, XIX դ.

Հայերի համար մեծ չարիք դարձան նախ Կովկասից, ապա Բալկաններից հայկական հողերում վերաբնակեցվող մահմեդականները՝ **չերքեզները** և **մուհաջիրները**: Նրանց տրվեցին զանազան արտոնություններ, ինչը սրեց ազգամիջյան հարաբերությունները հայկական նահանգներում:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի 1876 թ. տվյալներով՝ Օսմանյան կայսրությունում ապրում էր **3 միլիոն հայ,** որից մոտ 2 միլիոնը՝ Արևմտյան Հայաստանում: Իսկ այդ ժամանակ աշխարհում ապրում էր շուրջ 5 միլիոն հայ:

Հայ գյուղացիության վիճակը: Թուրքական կառավարությունը տարբեր միջոցներով արգելում էր հայ գյուղացիներին դառնալ հողի սեփականատերեր: Սուլթան Աբդուլ Համիդ II–ը թույլատրեց քուրդ ավատատերերին ամրանալ հայկական հողերի վրա, որի հետևանքով բազմահազար հայեր հողազրկվեցին:

Հայ գյուղացիության համար իսկական պատուհաս էին հարկահանության կիրառվող համակարգը, ավազակային հարձակումներն ու կողոպուտը: Այդուհանդերձ, XIX դ. վերջերին հայկական նահանգներում գյուղատնտեսությունն աստիճանաբար ներգրավվում էր ապրանքադրամական հարաբերությունների ոլորտը:

Արդյունաբերությունն Արևմտյան Հայաստանում: Եվրոպական զարգացած տերություններն

Արծաթյա գոտի
Վան, XIX դ. վերջ

իրականացնում էին Օսմանյան կայսրության գաղութացման քաղաքականություն: Աստիճանաբար կառուցվեցին արդյունաբերական ձեռնարկություններ և երկաթուղիներ: Դրան մասնակից էին դառնում նաև տեղական ձեռներեց հայերը, հույները, հրեաները: Սակայն Արևմտյան Հայաստանում արդյունաբերական ձեռնարկություններ և արդիական հաղորդակցության միջոցներ ստեղծելու ուղղությամբ օտարերկրյա կապիտալը ոչ մի նշանակալի ներդրում չկատարեց:

XIX դ. վերջերին զարգացած արդյունաբերական երկրներում ստեղծվում էին գերիզոր ձեռնարկություններ ու մենատիրություններ: Իսկ հայկական նահանգներում նոր միայն սկիզբ էր առնում ու զարգանում ձեռքի աշխատանքի վրա հիմնված **մանուֆակտուրային** արտադրությունը: Վանում, Կարինում, Խարբերդում, Բիթլիսում, Երզնկայում հիմնվում են տեքստիլ և սննդի արդյունաբերության մանուֆակտուրաներ:

Այս ժամանակահատվածում ստեղծվում են նաև առաջին **գործարանները**: Խարբերդում հիմնվում են մետաքսամշակման և կիսամեքենայացված մեքենաշինական գործարաններ: Մեքենաշինական գործարան է ստեղծվում նաև Վանում:

Այսպիսով՝ հայկական նահանգներում տիրապետող էին արտադրության կազմակերպման հին ձևերը, սակայն սկզբնավորվում և դանդաղորեն սկսում է ծավալվել գործարանային արդյունաբերությունը:

Քաղաքները, արհեստները և առևտուրը: Արևմտյան Հայաստանում նոր ժամանակների շունչն այնքան նկատելի չէր, որքան կայսրության մայրաքաղաքում և արևմտյան ծովափնյա քաղաքներում: **Մարդկանց ապրելակերպում գերիշխող էր ավանդականը**: Այնուհանդերձ, շուկայական հարաբերությունների և արդիական մշակույթի ազդեցությունը նույնպես դրսևորվում էր հայկական նահանգներում:

Արևմտյան Հայաստանի բնակչության միայն 10 %–ն էր ապրում քաղաքում: 1893 թ. տվյալներով **Կարինում** ապրում էր 40 000, **Վանում և Բիթլիսում՝**

Գորգ
Կարս–Կաղզվան,
XIX դ. վերջ

Հայ առևտրականները Թավրիզի մաքսատանը

30 000–ական մարդ: Արևմտյան Հայաստանի՝ համեմատաբար խոշոր քաղաքներում հայ բնակչությունը զբաղվում էր առևտրով, արհեստներով ու արդյունաբերական արտադրությամբ:

Հայկական նահանգներում գերիշխում էին արհեստավորներն ու առևտրականները: Արհեստավորների զգալի մասը միավորված էր **էսնաֆությունների՝ համքարությունների** մեջ: Շուկայական հարաբերությունները մուտք գործեցին արհեստի ոլորտը, և հայ արհեստավորները դարձան մանր ապրանք արտադրողներ: Նրանք անձամբ կամ միջնորդ առևտրականների միջոցով իրացնում էին իրենց ապրանքը տեղական և հեռավոր շուկաներում:

Արևմտահայ ձեռներեցները, աստիճանաբար նեղվելով օտարերկրյա կապիտալի մրցակցությունից, սկսեցին իրենց հիմնական միջոցները ներդնել հայկական միջավայրում և կայսրության մյուս երկրամասերում:

Օսմանյան տերության վարած տնտեսական, ազգային և կրոնական քաղաքականության հետևանքով հայերի ստվար զանգվածներ թողնում էին հայրենիքը: Նրանք ժամանակավոր կամ մշտական բնակության էին մեկնում տարբեր երկրներ կամ կայսրության արևմտյան քաղաքներ, հատկապես՝ Կոստանդնուպո-

լիս: Այսպես կոչված **պանդխտությունը** մեծ չարիք դարձավ հայության համար. բուն հայրենիքում նվազում էր հայության թվաքանակը, տկարանում էր ազգային ներուժը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ վիճակում էր Օսմանյան կայսրությունը նոր ժամանակների ավարտական փուլում:
2. Վարչական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Արևմտյան Հայաստանում: Ի՞նչ նպատակով էին դրանք իրագործվում:
3. Թվարկե՛ք հայկական վեց նահանգները:
4. Որքա՞ն էր հայ բնակչության թիվն Արևմտյան Հայաստանում:
5. Ներկայացրե՛ք արևմտահայ գյուղացիության վիճակը:
6. Ի՞նչ տնտեսական քաղաքականություն էին վարում եվրոպական զարգացած երկրներն Օսմանյան կայսրության նկատմամբ:
7. Ներկայացրե՛ք Արևմտյան Հայաստանի արդյունաբերության ընդհանուր պատկերը:
8. Ի՞նչ նշանավոր հայկական քաղաքներ կային, և որքա՞ն էր դրանց բնակչությունը: Տնտեսական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Արևմտյան Հայաստանի քաղաքներում:
9. Ի՞նչ է էսնաֆությունը: Ի՞նչ է պանդխտությունը, նշե՛ք դրանց հետևանքները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տրամագիր վարժության միջոցով համեմատե՛ք արևելահայ և արևմտահայ գյուղացիության դրությունը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական վեց նահանգներ, չերքեզներ, մուհաջիրներ, Օսմանյան կայսրության գաղութացում, արևմտահայ ձեռներեցներ, էսնաֆություն, պանդխտություն

Firefox https://ebooks.bonee.net/fumf/aifs/

ԳԼՈՒԽ V
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

§ 14. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Վարդապետ Գաբրիել Այվազովսկու դիմանկարը

XIX դ. երկրորդ կեսին Հայաստանի տնտեսության մեջ և սոցիալ-քաղաքական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը, Եվրոպայում ընթացող հեղափոխություններն իրենց ազդեցությունն ունեցան հայ քաղաքական մտքի զարգացման վրա: Հայ մտավորական շրջանակները սկսեցին լայնորեն քննարկել Հայաստանի ապագայի, հայ ժողովրդի ազատագրության, Հայ առաքելական եկեղեցու, հայոց լեզվի դերի և այլ կենսական հարցեր: Արդիական խնդիրների լուծման մոտեցումներից կախված՝ հայկական միջավայրում ձևավորվեցին հասարակական-քաղաքական տարբեր հոսանքներ՝ **պահպանողականություն, ազատականություն, ազգայնականություն** և այլն:

Հայկական պահպանողականությունը: XIX դ. 50-70-ական թթ. գոյություն ունեցած հայ քաղաքական հոսանքների մեջ առանձնանում էր **պահպանողականությունը:** Այս հոսանքի ներկայացուցիչները համոզված էին, որ հայ ժողովրդի ապագան ազգային արժեքների պահպանության մեջ է: Նրանք ձգտում էին վերականգնելու հայկական թագավորությունը, պահպանելու Հայոց եկեղեցու դերը, հայ նահապետական ընտանիքի բարոյական նկարագիրը, անաղարտ պահելու հին հայերենը՝ գրաբարը: Ուստի հաճախ դեմ էին արտահայտվում ամեն մի նորամուծության, եվրոպական արժեքների ընդօրինակմանը՝ դրանք համարելով ազգի համար վնասակար:

Միաժամանակ պահպանողականները փորձում էին Հայ եկեղեցու և դպրոցի միջոցով կրթել ազգի երիտասարդությանը, պատրաստել գիտնականներ, թարգմանիչներ, գրողներ, հոգևորականներ: Աչքի ընկնող ներկայացուցիչներից էին **Գաբրիել վարդապետ Այվազովսկին** (նկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը), **Հովհաննես Զամուռճյանը** և ուրիշներ: Պահպանողականներին համակրում էին ազգային-պահպանողական հայացքներ ունեցող գրող **Ծերեն-**

65 von 194 12.02.2021, 11:07

ցը, պատմաբաններ **Ս. Պալասանյանը**, **Ա. Երիցյանը** և ուրիշներ:

Ազատականությունը հայ իրականության մեջ: Հայ հասարակության մեջ հանդես եկած **ազատական** հոսանքի ներկայացուցիչները, ոգևորված եվրոպական ազատական (լիբերալ) գաղափարներով, պայքար սկսեցին հայության հասարակական կյանքը փոփոխելու, հայ ավանդական դպրոցն ու եկեղեցին բարեփոխելու համար:



Ծերենց

Ազատականները կամ ազատամիտները սուր քննադատության էին ենթարկում հայ իրականության հին՝ նահապետական բարքերը, հատկապես դրանց ջերմ պաշտպան եկեղեցուն: Հաճախ ազատականների այդ քննադատությունը հասնում էր ծայրահեղության: Ազատականները նույնիսկ ըստ պատշաճի չէին գնահատում Հայ եկեղեցու երկարամյա ազգային–մշակութային դերը, պահանջում էին հրաժարվել գրաբարից և անցնել ամբողջ ժողովրդի համար հասկանալի աշխարհաբարին:

Ազատականների մեծ մասը շատ զգուշավոր էր, ուստի դեմ էր արտահայտվում գոյություն ունեցող հասարակարգը հեղափոխական ճանապարհով փոխելու գաղափարներին, ապստամբական գործողություններին:

Արևելահայ ազատականների ամենանշանավոր դեմքերից էր **Ստեփանոս Նազարյանցը**: Նա Մոսկվայում լույս էր ընծայում «**Հյուսիսափայլ**» ամսագիրը: Նազարյանցի համոզմամբ՝ հայ ժողովուրդը պետք է ունենար մշակութային ինքնավարություն, լուսավորյալ, առաջադիմական դպրոց: Թիֆլիսում հրապարակախոս **Գրիգոր Արծրունին** հիմնադրեց «**Մշակ**» թերթը: Այն շուտով դարձավ հայկական լիբերալիզմի, հայ ազգային–հասարակական մտքի յուրահատուկ դարբնոց:

«Մշակ» թերթի համարներից

Արևմտահայ ազատականները՝ **Գրիգոր Օտյան**, **Նահապետ Ռուսինյան** և այլք, ավելի համարձակ մտքեր էին արտահայտում: Նրանք սուլթանական կառավարությունից և Կ. Պոլսի հայ վերնախավից պահանջում էին հայությանը շնորհել ընտրական իրավունք, համայնքային կյանքը կարգավորող հատուկ կանոնադրություն: Երգիծաբան **Հակոբ Պարոնյանը (1843–1891 թթ.)** և ուրիշներ ծաղրում էին սուլթանա-

Միքայել Նալբանդյան

Գրիգոր Արծրունի

կան իշխանության կամակատար հայ մեծահարուստ ամիրայական դասին:

Հայ ազգայնականությունը: XIX դ. երկրորդ կեսին ազատական հոսանքից անջատվեցին ավելի արմատական տրամադրված ներկայացուցիչներ, որոնք ձևավորեցին հասարակական–քաղաքական նոր ուղղություններ: Դրանցից մեկը ներկայացնում էր հասարակության հեղափոխական վերափոխման կողմնակից, մեծ ժողովրդավար **Միքայել Նալբանդյանը** (1829–1866): Նա համոզված էր, որ հայ ազգային արժեքները պետք է համապատասխանեցնել եվրոպական արժեքային համակարգին, ապստամբության ճանապարհով հասնել իրավահավասար, արդար հասարակության ստեղծմանը: Այսպիսով՝ Մ. Նալբանդյանն **ազգային հեղափոխական–ժողովրդավարական** ուղղության հիմնադիրն էր:

Արևմտահայության վիճակի ծանրացումը ստիպեց ազատականներին առաջին հերթին մտահոգվել ազգի ազատագրության խնդրով: Շուտով հայ ազատական միտքը, շնորհիվ **Մատթեոս Մամուրյանի, Գրիգոր Արծրունու** և հատկապես խոշոր տեսաբան ու մեծանուն վիպասան **Րաֆֆու (Հակոբ Մելիք–Հակոբյան, 1835–1888 թթ.)**, թևակոխեց իր **ազգայնականության** փուլը: Հայ ազգայնականները ջերմորեն ողջունեցին Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, հանգանակություններ կազմակերպեցին հերոս զեյթունցիներին օգնելու համար: Ապստամբության միջոցով ազատագրության հասնելու գաղափարները նոր բարձրության հասան Րաֆֆու ստեղծագործություններում:

Ազգայնական գաղափարների տարածումն ու ամրապնդումը հայ իրականության մեջ 1880–ական թթ. կեսերից հանգեցրեց ազգային կուսակցությունների առաջացմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գործոններ ազդեցին հայ քաղաքական մտքի զարգացման վրա:
2. Ի՞նչ հարցեր էին քննարկում հայ մտավորական շրջանակները: Թվարկե՛ք հայտնի հասարակական–քաղաքական հոսանքները:
3. Ովքե՞ր էին պահպանողականները, նշե՛ք հայտնի ներկայացուցիչների:
4. Ի՞նչ հայտնի գործիչներ ունեին հայ ազատականները, նշե՛ք նրանց հրատարակած պարբերականները:

5. Ո՞վ էր Միքայել Նալբանդյանը, ո՞ր ուղղության հիմնադիրն էր: Ի՞նչ համոզմունք ուներ նա, համաձա՞յն եք նրա հետ:
6. Ո՞ւմ շնորհիվ հայ ազատական միտքը թևակոխեց ազգայնականության փուլը: Ի՞նչ արդյունք տվեց ազգայնական գաղափարների տարածումը հայ իրականության մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք երեք հոսանքները և համեմատե՛ք նրանց հայացքները:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պահպանողականություն, ազատականություն, ազգայնականություն, Գաբրիել վարդապետ Այվազովսկի, Հովհաննես Զամուռձյան, Ծերենց, Ստեփանոս Նազարյանց, «Հյուսիսափայլ» ամսագիր, Գրիգոր Արծրունի, «Մշակ» թերթ, Գրիգոր Օտյան, Նահապետ Ռուսինյան, Հակոբ Պարոնյան, Միքայել Նալբանդյան, ազգային հեղափոխական–ժողովրդավարական ուղղություն, Ռաֆֆի (Հակոբ Մելիք–Հակոբյան)

§ 15. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԵՐԿՈՒ ՆՇԱՆԱՎՈՐ ՇՐՋԱԴԱՐՁԵՐԸ

Սահմանադրական շարժումը: Արևմտահայերը շարունակում էին մնալ Օսմանյան կայսրության իրավազուրկ հպատակներ (ռայա): Կ. Պոլսի հայ մեծահարուստների՝ **ամիրաների** դասը, որը սուլթանական իշխանությունների հետ սերտ կապեր ուներ, միայնակ տնօրինում էր արևմտահայության կյանքի բոլոր հարցերը: XIX դ. կեսերից չհանդուրժելով այդ վիճակը՝ պոլսահայ մյուս խավերը մեծահարուստների դասի մենաշնորհը վերացնելու և իրենց իրավունքների համար պայքար ծավալեցին:

1857 թ. մի խումբ մտավորականներ՝ **Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը** և ուրիշներ, Կ. Պոլսի հայ համայնքի Ազգային ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացրին արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրության մի նախագիծ: Այդ կանոնադրությունը ստացավ **«Ազգային սահմանադրություն»** անվանումը: Նախագիծը, բացի հոգևորականներից ու ամիրաներից, որոշակի իրավունքներ էր տալիս նաև արևմտահայ մյուս խավերին: Դրա մեջ տեսնելով իրենց իրավունքների սահմանափակում՝ ամիրաները թուրքական իշխանությունների աջակցությամբ պայքար ծավալեցին սահմանադրության դեմ: Սակայն ժո-

Կ. Պոլիսը XIX դ. վերջին

ղովուրդը ոտքի կանգնեց իր իրավունքների պաշտպանության համար:

1860 թ. մայիսին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատեց կանոնադրությունը: Սակայն կողմերի միջև պայքարը շարունակվեց: Սահմանադրությունը գործադրելու համար դեռ անհրաժեշտ էր, որ սուլթանը հաստատի այն: Իշխանությունների հրահանգով ստեղծված հանձնաժողովները զգալիորեն վերանայեցին նախագիծը, որից հետո միայն՝ **1863 թ. մարտին,** սուլթանն այն վավերացրեց:

Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվեցին արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններ՝ **Ազգային ժողով, Ազգային կենտրոնական վարչություն,** տարբեր խորհուրդներ: Օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը, ընտրվում էր ամբողջ ազգի կողմից: Գործադիր իշխանությունը տրվում էր Հայոց պատրիարքին և Ազգային կենտրոնական վարչությանը:

Անշուշտ, հայ համայնքի կառավարման համար ստեղծված վերոհիշյալ մարմինները ժողովրդավարական իշխանության լիարժեք մարմիններ չէին: Թուրքական բռնապետության պայմաններում ժողովրդավարության մասին խոսք լինել իսկ չէր կարող:

Զեյթունցի

Զեյթունի
«Կոտորածի ձորը»

Այդուհանդերձ, սահմանադրությունը հնարավորություն էր տալիս համայնքի լայն խավերին ևս մասնակից դառնալու արևմտահայության կրթալուսավորչական, տնտեսական կյանքի կառավարմանը: Այն հայ հասարակական–քաղաքական կյանքում ունեցավ առաջադիմական նշանակություն:

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը: Արևմտահայերի, ընդհանրապես ողջ հայության կյանքում, շրջադարձային նշանակություն ունեցավ զեյթունցիների ազատագրական զինված պայքարը:

Կիլիկիայի հյուսիս–արևելքում ընկած Զեյթունի լեռնային համայնքում ապրում էր շուրջ 40 հազար հայ: Քաջարի զեյթունցիները, շնորհիվ հերոսական պայքարի, շարունակում էին պահպանել իրենց ինքնավար կարգավիճակը: Նրանք ապրում էին փակ տնտեսությամբ. արտադրում էին իրենց անհրաժեշտ գրեթե ամեն ինչ, այդ թվում՝ զենք և միայն սահմանափակ քանակությամբ հարկեր վճարում Մարաշի փաշային:

1862 թ. ամռանը թուրքական կառավարությունը Զեյթունը հպատակեցնելու նոր փորձ կատարեց: Թնդանոթներով զինված օսմանյան զորքը զանազան քոչվոր ցեղախմբերի ուղեկցությամբ շարժվեց դեպի լեռնագավառ: Թուրքերն սկսեցին հրետակոծել հայկական դիրքերը: Սպանվեց մոտ 200 խաղաղ բնակիչ:

Զենքի դիմած շուրջ հինգ հազար զեյթունցիների պայքարը գլխավորեցին չորս տանուտեր իշխանները՝ **Մկրտիչ Յաղուբյանի** հրամանատարությամբ: Հուլիսի վերջին Ս. Աստվածածնի վանքում գումարվեց ինքնապաշտպանության ղեկավարների խորհրդակցություն: Մարտիկները բաժանվեցին խմբերի՝ իրենց հրամանատարներով: Որոշվեց կռվել մինչև վերջին մարդը:

Թուրքական զորքերի լայնածավալ գրոհը տարբեր ուղղություններով սկսվեց **օգոստոսի 2–ին:** Զեյթունցիները միահամուռ ուժերով ամբողջ օրը կատաղի դիմադրություն ցուցաբերեցին: **Մահտեսի Գրիգոր վարդապետի** գլխավորած քաջարի ռազմիկները հարյուրավոր զոհեր պատճառեցին թշնամուն, նրանից խլեցին մեծ քանակությամբ զինամթերք: Երիտասարդ ռազմիկ **Մարկոս Թաշճյանը** կարողացավ հասնել հայկական դիրքերի վրա կրակ տեղացող թշնամու հրանոթաձիգին և իր կյանքի գնով վնասազերծել նրան:

Մարտերից մեկի ժամանակ Զեյթունի ձորում լեռնագավառի պաշտպանները ծուղակի մեջ գցեցին թուրքերին, կոտորեցին ավելի քան 750 հոգու, մյուսներին փախուստի մատնեցին: Առ այսօր թուրքերը հիշում են իրենց այդ պարտությունը և շարունակում ճակատամարտի վայրը կոչել «**Կոտորածի ձոր**»:

Թուրքական կողմի զոհերի ընդհանուր թիվն անցնում էր 2 հազարից: Հաղթանակը հայերին տրվեց շուրջ 600 քաջորդիների արյան գնով:

Օսմանյան կայսրությունում իր պետության ազդեցությունն ամրապնդելու նպատակով Կ. Պոլսում նստող Ֆրանսիայի դեսպանը փորձեց օգտագործել պատեհ առիթը: Նա Զեյթունի վերնախավի ներկայացուցիչներին խոստացավ օգնել՝ կաթոլիկություն ընդունելու պայմանով: Զեյթունցիները ստիպված համաձայնեցին: Սուլթանը, զգուշանալով, որ զեյթունցիների կաթոլիկություն ընդունելը հնարավորություն կտա Ֆրանսիային միջամտելու Թուրքիայի ներքին գործերին, գնաց զիջման: Կնքվեց հաշտություն. վերացվեց գավառակի շրջափակումը, ձերբակալված զեյթունցիներն ազատ արձակվեցին: Հայերը պարտավորվեցին վճարել հարկերը:

Զեյթունը կորցրեց իր իրավունքների մի մասը: Սակայն համայնքի ներքին կյանքին վերաբերող շատ հարցերում շարունակեց գործել ինքնուրույն:

1862 թ. ապստամբությունը հսկայական ազդեցություն ունեցավ հայ ազատագրական շարժման ծավալման, հասարակական–քաղաքական մտքի զարգացման վրա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կ. Պոլսում ե՞րբ և ինչո՞ւ սկսվեց արևմտահայության պայքարը հայ ամիրայական դասի դեմ: Ի՞նչ անունով է հայտնի այդ շարժումը և ինչո՞ւ:
2. Ովքե՞ր էին կազմել արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրության նախագիծը: Ե՞րբ է այն վավերացվել Կ. Պոլսի Ազգային ժողովի և սուլթանի կողմից:
3. Ներկայացրե՛ք Զեյթունի ինքնավար վիճակը:
4. Ե՞րբ սկսվեց Զեյթունի հզոր ապստամբությունը: Նշե՛ք դրա պատճառները:
5. Նկարագրե՛ք ապստամբության ընթացքը: Որքա՞ն էին կողմերի կորուստները:
6. Ինչո՞վ ավարտվեց ապստամբությունը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ի՞նչ նշանակություն է ունեցել Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրական շարժում, ամիրայական դաս, Ազգային սահմանադրություն, Ազգային ժողով, Ազգային կենտրոնական վարչություն, Զեյթունի ինքնավար կարգավիճակ, Մկրտիչ Յաղուբյան, մահտեսի Գրիգոր վարդապետ, Մարկոս Թաշճյան, Զեյթունի 1862 թ. ապստամբություն

ԳԼՈՒԽ VI ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

§ 16. ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ 1877–1878 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ռուս–թուրքական պատերազմի սկիզբը: Ղրիմի պատերազմում (1853–1856 թթ.) թուրքերից ու նրա եվրոպական դաշնակիցներից կրած ծանր պարտությունը խաթարել էր Ռուսաստանի միջազգային վարկը: Կորցրած հեղինակությունը վերականգնելու և Բալկաններին ու Արևմտյան Հայաստանին տիրելու նպատակով **1877 թ. ապրիլին** Ռուսաստանը պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ:

Գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքով

Կովկասյան ճակատում ռուսական կողմի գլխավոր հարվածող ուժը 52–հազարանոց Կովկասյան կորպուսն էր: Կորպուսի հրամանատարն էր հայազգի նշանավոր զորավար **Միխայիլ Լոռիս–Մելիքովը (Լոռու Մելիքյան):** Պատերազմին մասնակցում էին հայազգի բազմաթիվ այլ զորավարներ: Ճակատի ձախ թևում կռվող **Երևանյան ջոկատի** հրամանատարը գեներալ **Արշակ Տեր–Ղուկասովն (Տեր–Ղուկասյան)** էր: Նրա զորաջոկատը, անցնելով Արարատ լեռը Հայկական պարից բաժանող լեռնանցքով, պատերազմի առաջին ամսին գրավեց Բայազետի ու Ալաշկերտի գավառները: Մայիսին ռուսները գրոհով վերցրին Արդահանը:

Սակայն ճակատի աջ թևում ռուսական ուժերի կրած անհաջողությունից հետո Տեր–Ղուկասովի զորաջոկատը, հայտնվելով շրջապատման վտանգի մեջ, նահանջի հրաման ստացավ: Փորձառու զորավարն այդ նահանջը կատարեց մեծ վարպետությամբ: Նա կարողացավ իր ջոկատի հետ ապահովել նաև բազմահազար հայ գյուղացիների անկորուստ նահանջը:

Երևանյան ջոկատի հրամանատար Արշակ Տեր–Ղուկասով

Բայազետի պաշտպանությունը: Հայերի մասնակցությունը պատերազմին: 1877 թ. հունիսին մոտ 10–հազարանոց թուրքական զորքը պաշարեց Բայազետը: Տեղի ռուսական կայազորն ու շրջակա գյուղերի բազմաթիվ հայ գյուղացիներ հերոսաբար հետ մղեցին թշնամու բոլոր գրոհները: Նրանք 23 օր անառիկ պահեցին բերդաքաղաքը: Սպառվում էին նյութական

Ռաֆֆու «Խենթը» վեպի գլխավոր հերոսն իր քաջերի հետ

ու ռազմական բոլոր պաշարները: Դրսից օգնություն չստանալու դեպքում այլևս անկարելի էր շարունակել դիմադրությունը: Իրենց օրհասական դրության մասին Տեր–Ղուկասովին լուր հասցնելու բազմաթիվ փորձեր ապարդյուն անցան:

Եվ վերջապես, հայ պաշտպաններից **Սամսոն Տեր–Պողոսյանին** հաջողվեց քրդական տարազով ծպտված անցնել շրջապատման օղակը և լուր հասցնել Տեր–Ղուկասովին: Երևանյան ջոկատն օգնության եկավ Բայազետի կայազորին և համառ մարտերից հետո ազատագրեց քաղաքը պաշարումից: Այս դեպքերը գեղարվեստական վարպետությամբ նկարագրված են Ռաֆֆու նշանավոր «Խենթը» վեպում:

Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը խանդավառել էր նաև հայությանը: Իր ազատագրության հույսը նա նորից կապել էր Ռուսաստանի հաղթանակի հետ: Այդ նպատակով շատերը զինվորագրվում էին ռուսական բանակին, պարեն մատակարարում զորքերին, իրականացնում հետախուզական աշխատանք, հանգանակություններ կատարում: Անդրկովկասի զանազան շրջաններում կազմավորված հեծյալ և հետևակային ութ կամավորական ջոկատները հիմնականում համալրված էին հայերով: Դրանք ակտիվ մասնակցություն ունեցան ռուս–թուրքական հերթական պատերազմին:

Պատերազմի ավարտը: 1877 թ. աշնանը ռուսական զորքերը պաշարեցին **Կարսը,** որի գրավումը հանձնարարվեց հայազգի մեկ այլ գեներալի՝ **Հովհաննես Լազարևին (Լազարյան):** Խիզախ զորավարը հայտնեց Լոռիս–Մելիքովին, որ ինքը անդադար գրոհելու է մինչև բերդի անկումը: Եվ իսկապես այն չուշացավ: **Նոյեմբերի 6–ին** հայ կամավորների առա-

ջապահ ջոկատի ուղեկցությամբ ընթացող վաճառական գրոհն ավարտվեց փայլուն հաղթանակով:

1878 թ. փետրվարին թուրքերն առանց լուրջ դիմադրության հանձնեցին նաև Արևմտյան Հայաստանի ռազմավարական մյուս կենտրոնը՝ **Կարինը,** ինչպես նաև Սև ծովի առափնյա մի շարք շրջաններ:

Բալկանյան ճակատում ռուսական զորքերը հասան Կ. Պոլսի մատույցներին: Ջախջախված Թուրքիան ընդունեց իր պարտությունը և կնքեց զինադադար: Այսպիսով՝ ռուսական բանակը հերթական անգամ հաղթեց իր դարավոր թշնամուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր պատերազմից հետո էր ընկել Ռուսաստանի միջազգային հեղինակությունը:
2. Ո՞րն էր ռուս–թուրքական հերթական պատերազմի գլխավոր պատճառը: Ե՞րբ է սկսվել այն:
3. Ովքե՞ր էին Կովկասյան կորպուսի և Երևանյան ջոկատի հրամանատարները:
4. Որքա՞ն է տևել Բայազետի հերոսական պաշտպանությունը: Ո՞վ լուր հասցրեց Երևանյան ջոկատի հրամանատարին: Գեղարվեստական ի՞նչ գործ է նվիրված այս իրադարձությանը:
5. Ներկայացրե՛ք հայերի մասնակցությունը պատերազմին: Ի՞նչ ակնկալիք ուներ հայ ժողովուրդը Ռուսաստանից:
6. Ո՞ւմ գլխավորությամբ և ե՞րբ ռուսական զորքը գրավեց Կարսը: Ինչպե՞ս ավարտվեց պատերազմը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմ, Միխայիլ Լոռիս–Մելիքով (Լոռու Մելիքյան), Արշակ Տեր–Ղուկասով (Տեր–Ղուկասյան), Սամսոն Տեր–Պողոսյան, Հովհաննես Լազարև (Լազարյան)

§ 17. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և Հայկական հարցը: Կ. Պոլսի մերձակայքում գտնվող **Սան Ստեֆանո** ավանում՝ հայ մեծահարուստ **Առաքել Դադյանի** ամառանոցում, **1878 թ. փետրվարի 19-ին** կնքվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիր: Ըստ դրա՝ Ռուսաստանին էին անցնելու Կարսը՝ իր շրջակա գավառներով, Ալաշկերտն ու Բայազետը, Սև ծովի առափնյա շրջանները: Կարինը և Բասենը վերադարձվում էին օսմանյան տերությանը: Այդ գավառների հայ բնակիչները նորից հայտնվում էին թուրքական վրեժխնդրության վտանգի առջև:

Ռուս-թուրքական բանակցությունների օրերին մի խումբ հայ ազգային գործիչներ, այդ թվում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք **Ներսես Վարժապետյանը,** հանդիպումներ ունեցան ռուսական պատվիրակության ղեկավար կոմս **Ն. Իգնատևի** հետ: Հայոց պատրիարքը պահանջում էր պայմանագրում համապատասխան կետ մտցնել Ռուսաստանի հովանավորության տակ Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծելու կամ ռուսական զորքերի գրաված շրջանները Ռուսաստանին միացնելու վերաբերյալ:

Սան Ստեֆանոյի պայմանագրով միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ ձևակերպում ստացավ **Հայկական հարցը**: Պայմանագրի **16-րդ**

«Բեռլինի կոնգրեսը» Հեղինակ՝ Անտոն ֆոն Վերներ, 1881 թ.

հոդվածով սուլթանական կառավարությունը պարտավորվում էր ռուսների գրաված և կրկին Թուրքիային վերադարձվող հայկական գավառներում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Այդ միջազգային փաստաթղթում գործածվել է **Հայաստան** բառը: Դրանով թուրքական իշխանություններն ընդունում էին, որ այդ երկրամասը հայկական է:

Պայմանագիրը նախատեսում էր նաև, որ ռուսական զորքերը 6 ամիս ժամկետով՝ մինչև բարեփոխումների իրականացումը, պետք է մնային Հայաստանում: Թուրքական իշխանությունները պարտավորվում էին բռնություններ չգործադրել պատերազմում ռուսական զորամասերին աջակցած քրիստոնյաների նկատմամբ:

16–րդ հոդվածն իրականում չէր կարող բավարարել արևմտահայության պահանջները: Այդուհանդերձ, պայմանագիրը պարունակում էր նաև դրական կետեր. նախ՝ Արևմտյան Հայաստանի մի զգալի հատվածն անցնում էր ռուսական տիրապետության տակ: Երկրորդ՝ նոր ժամանակներում միջազգային փաստաթղթի մեջ թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական հողերն անվանվում էին **Հայաստան:** Երրորդ՝ Հայկական հարցի միջազգայնացումը ոգևորում էր հայերին և մղում ազատագրական նոր պայքարի:

Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում: Սան Ստեֆանոյի պայմանագիրն ամրապնդում էր Ռուսաստանի դիրքերն Արևմտյան Հայաստանում և Բալկաններում: Դա հարուցեց առաջին հերթին Մեծ Բրիտանիայի և Ավստրո–Հունգարիայի դժգոհությունը: Մեծ տերությունները Ռուսաստանին սպառնացին պատերազմով և պահանջեցին 1878 թ. հունիսին Բեռլինում գումարել վեհաժողով՝ ռուս–թուրքական հաշտության պայմանները վերանայելու նպատակով:

Հայերի պահանջները վեհաժողովին ներկայացնելու համար **Մկրտիչ Խրիմյանի** (Խրիմյան Հայրիկ) գլխավորությամբ հատուկ պատվիրակություն կազմվեց: Հայ պատվիրակները մինչև վեհաժողովի սկսվելը հանդիպումներ ունեցան եվրոպական մի շարք երկրների ղեկավարների հետ, ստացան օգնության խոստումներ: Բայց ինչպես ցույց տվեց կյանքը, եվրոպացի պետական գործիչները բնավ ցանկություն չունեին օգնելու հայերին: Նրանք Հայկական հարցն օգտագործում էին Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար: Այս-

Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակությունը Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ, 1878 թ.

Խրիմյան Հայրիկ

Բեռլինի վեհաժողովից հետո Մ. Խրիմյանը շատ պատկերավոր ներկայացրել է հայ պատվիրակության անհաջողության պատճառը. «Գնացի Եվրոպա՝ ձեզ ազատություն բերելու, և ի՞նչ տեսա այնտեղ. Բեռլինում դրված էր մի մեծ պղինձ [կաթսա], մեջը լիքը հարիսա: Գալիս էին զանազան ազգերի պատվիրակներ երկաթե շերեփներով և հարիսայից վերցնում ու գնում... բուլղարը, սերբը... ամենն ալ առին իրենց մասերը... Մի աղերսաթուղթ ունեի ձեռքիս, ան ալ թրջվեց ու հարիսին մեջ մնաց. ուստի և եկած եմ այսպես դատարկաձեռն. շերեփների մասին մտածեցե՛ք»:
Իսկ Գրիգոր Արծրունին ազդարարեց. «Այն ազգը, որ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»:

պես՝ վեհաժողովի նախօրյակին Անգլիան Թուրքիայի հետ կնքած գաղտնի պայմանագրով ստացավ Կիպրոս կղզին և պարտավորվեց վեհաժողովում պաշտպանել նրա շահերը: Պատահական չէ, որ հայ պատվիրակներին թույլ չտրվեց նույնիսկ մտնել վեհաժողովի շենքը: Հայկական հարցը վճռվեց առանց հայերի մասնակցության: 16–րդ հոդվածի փոխարեն Բեռլինի պայմանագրում տեղ գտավ նոր հոդված՝ 61–րդը:

61–րդ հոդվածը նույնպես թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր հայկական մարզերում բարեփոխումներ անցկացնել, ապահովել հայերի անվտանգությունը: Բայց բարեփոխումների հսկողությունը դրվելու էր ոչ միայն Ռուսաստանի, այլև վեհաժողովի մասնակից բոլոր պետությունների վրա: Մեծ տերությունների ղեկավարները համոզված էին, որ բարեփոխումները սուլթանի կողմից չեն կատարվելու: Դա վերջիններիս հնարավորություն կտար շարունակաբար միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և նրանից նոր զիջումներ կորզելու:

Պայմանագիրը նախատեսում էր ռուսական զորքերի անհապաղ դուրսբերում գրաված տարածքներից: Դրանով ոչ մի երաշխիք չէր մնում 61–րդ հոդվածի կենսագործման համար: «Հայաստան» հասկացության փոխարեն պայմանագրում հայտնվել էր «հայաբնակ մարզեր» բառակապակցությունը: Այսինքն՝ այժմ խոսքը ոչ թե Հայաստանի, այլ սոսկ հայերով բնակեցված տարածքի մասին էր: Ռուսաստանին էին մնում միայն Կարսն ու շրջակայքը: Ալաշկերտն ու Բայազետը նույնպես վերադարձվելու էին կայսրությանը:

Բեռլինի վեհաժողովը մեծ հիասթափություն առաջացրեց հայերի շրջանում: Հայ ժողովրդի մեջ զգալիորեն պակասեց հավատը Եվրոպայի նկատմամբ: Հայկական պատվիրակությունը բողոք ներկայացրեց վեհաժողովի ղեկավարությանը: Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը և ուրիշ շատ գործիչներ հանդես եկան հայ ժողովրդին ուղղված կոչերով՝ օտար տերություններին խնդրագրեր ներկայացնելու փոխարեն անցնել զինված պայքարի կազմակերպմանը:

Մի առիթով Մ. Խրիմյանն ասել է. «*Վեհաժողովի դռան վրա գրված էր՝ իրավունքը ուժովինն է, քաղաքագիտությունը գթություն չունի, իրավունքն ալ սուրի ծայրին է: Հայաստանցինե՛ր, սիրեցե՛ք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի*»:

Մեծ տերությունների կողմից Հայկական հարցի միջազգայնացումն իրականում ոչինչ չտվեց հայությանը: Ընդհակառակը՝ ավելի սրեց մեծ տերությունների հակասությունները, նպաստեց Օսմանյան կայսրությունում հակահայկական տրամադրությունների աճին: Հայկական հարցից ազատվելու համար սուլթան Համիդ II–ն ընտրեց խնդրի լուծման բարբարոսական ճանապարհ՝ հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտե՞ղ և ե՞րբ կնքվեց ռուս–թուրքական հաշտության պայմանագիրը: Ներկայացրե՛ք դրա արդյունքները Ռուսաստանի համար:
2. Ի՞նչ գործունեություն էին ծավալել հայ գործիչները Սան Ստեֆանոյի հաշտության կնքումից առաջ և ի՞նչ առաջարկ ներկայացրին ռուսական կողմին:
3. Ներկայացրե՛ք Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածը: Գնահատե՛ք այն:
4. Ինչո՞ւ մեծ տերությունները ստիպեցին Ռուսաստանին վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը:
5. Ո՞վ էր գլխավորում հայկական պատվիրակությունը, և ի՞նչ գործունեություն ծավալեց այն մինչև Բեռլինի վեհաժողովը:
6. Պարզաբանե՛ք 61–րդ հոդվածի էությունը: Մեծ տերություններն ինչո՞ւ անտեսեցին հայ ժողովրդի շահերը Բեռլինի վեհաժողովում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է Հայկական հարցը:
2. Որքանո՞վ են արդիական Խրիմյան Հայրիկի և Գրիգոր Արծրունու՝ Բեռլինի վեհաժողովի դասերը ներկայացնող խոսքերը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սան Ստեֆանոյի պայմանագիր, Առաքել Դադյան, Հայկական հարց, Ներսես Վարժապետյան, Ն. Իգնատև, Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդված, Մկրտիչ Խրիմյան (Խրիմյան Հայրիկ), Բեռլինի վեհաժողով, Բեռլինի պայմանագրի 61–րդ հոդված, «ձեր փրկությունը երկաթով կլինի»

Firefox https://ebooks.bonee.net/fumf/aifs/

ԳԼՈՒԽ VII
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ 70-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 18. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ալեքսանդրապոլի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, 1847 թ.

Ազատագրական խմբակների առաջացումը: Արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների ճնշումները սաստկացան XIX դարի երկրորդ կեսից: Սուլթանական բռնատիրության դեմ պայքարի կոչեր հնչեցրին ժամանակի նշանավոր գործիչներ Գ. Արծրունին, Ռաֆֆին, Ռ. Պատկանյանը, Մ. Խրիմյանը և ուրիշներ: Հայկական հարցի միջազգայնացումը մի կողմից՝ զարկ տվեց հայերի ազատագրական պայքարին, մյուս կողմից՝ ավելի սրեց հայ–թուրքական հարաբերությունները:

Հայ ազատագրական պայքարը կազմակերպելու նպատակով 1870–1880–ական թթ. ստեղծվեցին բազմաթիվ գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ:

1869 թ. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) հիմնվեց արևելահայ առաջին ազատագրական խմբակը: Այն կոչվում էր «**Բարենպատակ ընկերություն**», ղեկավարը երիտասարդ մանկավարժ **Արսեն Կրիտյանն** էր: Խմբակը գործեց 6 տարի: 1874 թ. **Մեծ Ղարաքիլիսայում** (Վանաձոր) ստեղծվեց խմբակ, որը կրում էր «**Հայրենիքի սիրո գրասենյակ**» անունը: Այս խմբակները նպատակ էին դրել հասնելու Հայաստանի ազատագրությանը, նրա երկու հատվածների միավորմանը:

Արևմտահայ առաջին խմբակը՝ «**Միություն ի փրկություն**», ստեղծվեց **1872 թ. Վանում:** Այն գաղտնի կապեր ուներ արևելահայերի հետ, որոնց միջոցով դիմում էր Ռուսաստանին և խնդրում՝ հայ ժողովրդին փրկել «բարբարոսների ձեռքից»: Խմբակը գոյություն ունեցավ մոտ երկու տարի և լայն գործունեություն ծավալել չկարողացավ: 1870–ական թթ. վերջին Վանում ստեղծվեցին նոր խմբակներ՝ «**Սև խաչը**» և «**Զինակիրը**»: Վերջիններս կարևորում էին ժողովրդին զինելը, ինքնապաշտպանության նախապատրաստումը:

Հին Ղարաքիլիսա

Նոր կազմակերպությունների ստեղծումը: Ավելի ծավալուն ու եռանդուն աշխատանք կատարե-

81 von 194 12.02.2021, 11:07

ցին 1880–ական թթ. հիմնադրված կազմակերպությունները:

Դրանցից առանձնանում է **1881 թ. Կարինում** ստեղծված «**Պաշտպան հայրենյաց**» գաղտնի կազմակերպությունը: Այն հիմնադրել էր **Խաչատուր Կերեքցյանը**: Նրա անդամների մեջ մեծ թիվ էին կազմում տեղի նշանավոր Սանասարյան վարժարանի սաները: Քիչ չէին նաև արհեստավորներն ու գյուղացիները: Պատահական չէ, որ իր համակիրներով «Պաշտպան հայրենյացի» անդամների թիվը հասնում էր 5 հազարի: Կազմակերպությունը նպատակ էր դրել ազատագրելու Հայաստանը:

«Պաշտպան հայրենյացը» փորձեց իր մասնաճյուղերը ստեղծել նաև այլ գավառներում, կապեր հաստատեց մյուս կազմակերպությունների և արևելահայ գործիչների հետ, զբաղվեց զենք ու դրամ ձեռք բերելու խնդրով: Կազմակերպության ունեցած տպագրական մեքենայով տպագրվեցին ու տարածվեցին հայրենասիրական կոչեր:

1882 թ. նոյեմբերի վերջերին թուրքական կառավարությունը բացահայտեց կազմակերպությունը, եղան ձերբակալություններ: «Պաշտպան հայրենյացի» առավել ակտիվ անդամների դատավարությանն անձամբ հետևում էր սուլթան Համիդ II–ը: Հայության շրջանում հուզումներ չառաջացնելու համար իշխանությունները ստիպված եղան մեղմել գրեթե բոլոր դատապարտյալների պատժաչափերը, փոխել մահապատժի մասին դատարանի նախնական վճիռը: Այս կազմակերպության գործունեությունն անհետևանք չմնաց: «Ձայն մը հնչեց Էրզրումի լեռներեն» հայտնի ազգային–հեղափոխական երգը նվիրված է «Պաշտպան հայրենյացին»:

1882 թ. մոսկվաբնակ մի խումբ հայ ուսանողներ հիմնեցին «**Հայրենասերների միությունը**»: Միությունը գաղտնի տպագրեց «**Ազատության ավետաբեր**» թերթը: Այն առաջին հայ քաղաքական լրագիրն է: «Հայրենասերները» կոչ էին անում՝ հույսը դնել սեփական ուժերի վրա, հրաժարվել Եվրոպայի օգնությամբ ազատագրվելու անհեռանկար գործելակերպից, Հունաստանի օրինակով՝ զենքի միջոցով, ազատագրվել օտար տիրապետությունից:

1880–ական թթ. Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում ևս ստեղծվեցին ազատագրական կազմա-

կերպություններ: Երևանի «**Հայասեր–ազգասեր**» խմբակը, որ ուներ մոտ 30 անդամ, նպատակ էր դրել պայքարելու հայոց լեզվի ու դպրոցի պահպանման համար, ազատագրել Հայաստանը ինչպես ռուսական, այնպես էլ օսմանյան տիրապետությունից: 1883 թ. ոստիկանությունը բացահայտեց կազմակերպությունը, նրա անդամների մեծ մասն աքսորվեց:

Հայկական հարցի լուծումն իր գլխավոր նպատակն էր համարում նաև **1882 թ. Թիֆլիսում** ստեղծված խմբակը, որի հիմնադիրը **Գ. Արծրունին** էր: Նրա աշխատանքներին մասնակցում էին Րաֆֆին, Գ. Սունդուկյանը և ուրիշներ:

Ազգային–ազատագրական առաջին կազմակերպությունները երկար կյանք չունեցան: Սակայն նրանց գործունեությունն անհետևանք չմնաց: Դրանց հիմքի վրա շուտով ձևավորվեցին հայ ազգային–քաղաքական կուսակցությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գործիչներից ովքե՞ր հնչեցրին պայքարի կոչը:
2. Ի՞նչ նպատակով ստեղծվեցին ազատագրական առաջին խմբակներն ու կազմակերպությունները:
3. 1860–1870–ական թթ. ի՞նչ խմբակներ ստեղծվեցին Հայաստանի երկու մասերում:
4. Ե՞րբ, որտե՞ղ և ո՞վ է հիմնադրել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը: Ներկայացրե՛ք դրա գործունեության արդյունքները:
5. Ինչպե՞ս էր կոչվում Մոսկվայում ստեղծված միությունը: Ինչո՞վ էր այն հայտնի:
6. Երևանում և Թիֆլիսում ի՞նչ խմբակներ էին ստեղծվել:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ի՞նչ նշանակություն ունեցավ ազատագրական խմբակների գործունեությունը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ազատագրական խմբակներ, «Բարենպատակ ընկերություն», Արսեն Կրիտյան, «Հայրենիքի սիրո գրասենյակ», «Միություն ի փրկություն», «Սև խաչ», «Ջինակիր», Խաչատուր Կերեքցյան, «Պաշտպան հայրենյաց», «Հայրենասերների միություն», «Ազատության ավետաբեր», «Հայասեր–ազգասեր»

§ 19. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային կուսակցությունների ստեղծման անհրաժեշտությունը: XIX դ. 70–80–ական թթ. հայ ժողովուրդը հայտնվել էր սոցիալ–տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններում: Հայաստանի ազատագրության համար պայքարն ավելի արդյունավետ մղելու համար անհրաժեշտ էր քաղաքական կազմակերպվածության ավելի բարձր մակարդակ, քանի որ ազատագրական խմբակների հնարավորությունները սահմանափակ էին:

Սկսվեց խմբակների և միությունների միավորման գործընթաց, որն էլ հանգեցրեց ազգային–քաղաքական կուսակցությունների առաջացմանը: Կուսակցությունների ձևավորմանը մեծապես նպաստեց նաև Հայկական հարցի միջազգայնացումը, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում հեղափոխական, ժողովրդավարական ու ազգայնական շարժումների ծավալումը:

Մկրտիչ Փորթուգալյան

Արմենական կուսակցություն: Վասպուրական աշխարհի կենտրոն **Վան** քաղաքում գործող խմբակները, կրթամշակութային հաստատությունները, բազմաթիվ հայտնի մտավորականների աշխույժ գործունեությունը ազգային գաղափարների տարածման համար բարենպաստ հող էին նախապատրաստել: Այնտեղի երիտասարդների ոգեշնչողներն էին ազգային գործիչներ, ժողովրդի մեջ հայտնի «նշանավոր երեք Մկրտիչները»՝ **Խրիմյանը, Փորթուգալյանը** և **Ավետիսյանը:**

Թուրքական իշխանությունների հետապնդումներից խուսափելով՝ ուսուցիչ Մ. Փորթուգալյանը տեղափոխվեց Ֆրանսիայի **Մարսել** քաղաք, որտեղ սկսեց հրատարակել **«Արմենիա»** թերթը: Փորթուգալյանի սաները չդադարեցրին իրենց գործունեությունը: Վանում այդ գործունեության արդյունքում **1885 թ.** երիտասարդ մտավորական Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ ստեղծվեց **առաջին** հայ ազգային–քաղաքական կուսակցությունը՝ **«Արմենականներ»** անունով: Այդ անունը նրանք կուսակցությանը վերագրեցին իրենց ուսուցիչ Մ. Փորթուգալյանի հրատարակած թերթի հայրենասիրական գաղափարներին հետևելու համար:

Մկրտիչ Ավետիսյան (Թերլեմեզյան)



Ավետիս Նազարբեկյան

Արմենականներն իրենց գլխավոր նպատակ հռչակեցին արևմտահայության ազատագրումը, Հայկական հարցի լուծումը: Այդ նպատակին հասնելու համար նրանք կարևորում էին ինչպես եվրոպական երկրների օգնությունը, այնպես էլ զինված պայքարը:

Կուսակցության ծրագրում նշվում էր, որ անհրաժեշտ է առանց ցուցամոլության ժողովրդին նախապատրաստել համաժողովրդական ապստամբության: Արմենականների մեծ մասն անօգուտ և վտանգավոր էր համարում հայդուկային պայքարը: Միայն Հայաստանի ազատագրումից հետո, ըստ արմենականների՝ կարելի էր պայքարել հեռավոր նպատակի՝ իրավահավասար հասարակություն ստեղծելու համար:

Հնչակյան կուսակցություն: XIX դ. 70–80–ական թթ. Եվրոպայում սովորում էին զգալի թվով հայ ուսանողներ: Նրանք գտնվում էին ժամանակի առաջադիմական գաղափարների ազդեցության տակ: Այդպիսի ուսանողների մի խումբ **1887 թ.** Շվեյցարիայի **Ժնև** քաղաքում ստեղծեց հայ ազգային նոր կուսակցություն: Նրա հիմնադիրներն էին **Ավետիս Նազարբեկյանը, Ռուբեն Խանազատը, Մարո Վարդանյանը** և ուրիշներ: Նրանք սկսեցին հրատարակել «**Հնչակ**» թերթը, որի անունից էլ կուսակցությունը կոչվեց **Հնչակյան:**

Սկզբում հնչակյանները ռուսական հեղափոխական հայտնի մի ուղղության՝ նարոդնիկության ազդեցության տակ էին: Նրանք ընդունեցին սոցիալիզմի գաղափարը: Ուստի սոցիալիստական, այն է՝ հավասարության և արդարության վրա հիմնված հասարակություն ստեղծելու դրույթը կարևոր տեղ զբաղեցրեց հնչակյանների ծրագրում:

«Հնչակ» թերթը

Սոցիալիզմի գաղափարը որքան էլ հոգեհարազատ լիներ հնչակյաններին, չէր կարող ավելի կարևորվել, քան ազգի ազատագրության խնդիրը: Հայ քաղաքական մտքի պատմության մեջ հնչակյաններն առաջինն էին, որ Հայկական հարցի լուծումը տեսնում էին հայրենիքի անջատ–անջատ մասերի միավորման, ամբողջական պետականության վերաստեղծման մեջ: Այդ նպատակին հասնելու համար նրանք իրենց գրեթե բոլոր ուժերը և գործունեությունը կենտրոնացրել էին Արևմտյան Հայաստանում. ստեղծում էին հայդուկային խմբեր, կազմակերպում ցույցեր, զինված ելույթներ և այլն:

Հնչակյանները 1890–ական թթ. բողոքի ցույցեր կազմակերպեցին Կ. Պոլսում, գործուն մասնակցություն ունեցան Սասունի 1894 թ. ինքնապաշտպանության և Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբության կազմակերպմանը:

1896 թ. Լոնդոնում հրավիրված առաջին համագումարում Հնչակյան կուսակցությունը պառակտվեց **սոցիալիստական** և **ազգային** թևերի: Սոցիալիստական թևը, որը Ա. Նազարբեկյանի ղեկավարությամբ փոքրամասնություն կազմեց, պահանջում էր կուսակցության ծրագրի մեջ պահպանել սոցիալիզմի մասին կետը: Համագումարի մասնակիցների մեծամասնության՝ ազգային թևի ներկայացուցիչների կարծիքով՝ սոցիալիզմի մասին խոսելը դեռ վաղ էր, քանի որ առաջնահերթ խնդիրն օտար տիրապետությունից ազատագրվելն էր: Անշուշտ, այս ուղղության ներկայացուցիչներն իրավացի էին: Նրանք հրապարակախոս **Արփիար Արփիարյանի** գլխավորությամբ հեռացան կուսակցությունից և իրենց կոչեցին «**Վերակազմյալ հնչակյաններ**»:

Հայ հեղափոխական դաշնակցություն:

1880–ական թթ. վերջին հակասուլթանական պայքարը վերելք ապրեց: Թուրքական բռնատիրության դեմ մարտնչող մարդկանց՝ **հեղափոխականների** հաջողությունը հնարավոր կդառնար միայն միավորման, միմյանց հետ **դաշնակցելու** դեպքում: Ուստի **1890 թ. Թիֆլիսում** ստեղծված նոր կուսակցությունն իրեն կոչեց **Հայ հեղափոխականների դաշնակցություն:** Նրա հիմնադիրներն էին **Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմ)**: Շուտով դաշնակցությունը դարձավ հայ իրականության ամենաազդեցիկ կուսակցությունը:

Դաշնակցականները հրատարակում էին «**Դրոշակ**» թերթը: Նրանք ևս իրենց կարևորագույն խնդիրն էին համարում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը: Այդ կենսական հարցում միանման մոտեցումը կարող էր լավ հիմք հանդիսանալ հայ հեղափոխական բոլոր ուժերի միավորման համար: Պատահական չէ, որ դաշնակցականները փորձեցին միավորվել հնչակյանների հետ: Նույնիսկ եղավ միավորման մասին ընդհանուր հայտարարություն: Սակայն ծագած գաղափարական տարաձայնությունների հետևանքով միավորման փորձը ձախողվեց:

Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանը, Ստեփան Զորյանը և Սիմոն Զավարյանը

ՀՅԴ զինանշանը

Այդ պատճառով **1892 թ.** Թիֆլիսում հրավիրված առաջին ընդհանուր ժողովը կուսակցությունը վերանվանեց **«Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ):** Երկու տարի անց «Դրոշակում» տպագրված կուսակցության ծրագիրը նախատեսում էր զինել ժողովրդին, ձևավորել մարտական խմբեր, իրականացնել ապստամբական և ահաբեկչական գործողություններ:

Արդեն **1890 թ. սեպտեմբերին** դաշնակցականները կազմակերպեցին **Սարգիս Կուկունյանի** արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան՝ երկիրն ազատագրելու նպատակով: **1896 թ.** 30 հայ երիտասարդներ ներխուժեցին Կ. Պոլսի **Օտտոմանյան** բանկը՝ պահանջելով անհապաղ գործադրել 61–րդ հոդվածը՝ հակառակ դեպքում սպառնալով պայթեցնել կայսրության գլխավոր բանկը: **1897 թ.** դաշնակցությունը Պարսկաստանից կազմակերպեց **Խանասորի** արշավանքը (Խանասորի դաշտի անունից) և պատժեց Վանի 1896 թ. ինքնապաշտպանության 1500 մասնակիցներին դավադրաբար սպանած քուրդ մազրիկ ցեղին: Դարավերջին դաշնակցությունն իր հսկողության տակ վերցրեց հայդուկային շարժումը՝ տալով հայ ֆիդայիների բազմաթիվ փայլուն դեմքեր: ՀՅԴ–ն գլխավորեց Սասունի 1904 թ. ապստամբությունը:

Դաշնակցականներն ինքնապաշտպանական լուրջ աշխատանք կատարեցին 1905–1906 թթ. հայ–թաթարական կռիվներում, ծանրակշիռ դեր ունեցան 1914–1916 թթ. կամավորական շարժման կազմակերպման և 1918 թ. մայիսին հայկական պետականության վերականգնման գործում:

Խանասորի արշավանքի մասնակիցներ

Հայ ազգային կուսակցություններն իրենց գործելակերպով և ծրագրային դրույթներով տարբերվել են միմյանցից: Սակայն արևմտահայությանը թուրքական դժնդակ տիրապետությունից ազատագրելը բոլորն էլ համարել են իրենց առաջնային խնդիրը: Այդ նպատակին հասնելու համար նրանք գործի են դրել հնարավոր բոլոր միջոցները, առաջին հերթին՝ զինական պայքարը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր անհրաժեշտ ազգային կուսակցությունների ստեղծումը:
2. Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել հայ ազգային առաջին կուսակցությունը: Ինչի՞ հետ էր կապված անվանումը: Ո՞վ էր հիմնադիրը, և ո՞ւմ գործունեությամբ էր նախապատրաստվել դրա ստեղծումը:
3. Ովքե՞ր հիմնադրեցին Հնչակյան կուսակցությունը: Ըստ նրանց ծրագրի՝ ինչպե՞ս էր լուծվելու Հայկական հարցը: Ինչո՞ւ և ե՞րբ Հնչակյան կուսակցությունը պառակտվեց:
4. Ե՞րբ է հիմնադրվել ազգային երրորդ կուսակցությունը: Ինչո՞ւ էր սկզբում կուսակցությունը կոչվում հեղափոխականների, իսկ հետո՝ հեղափոխական:
5. Համեմատե՛ք երեք կուսակցությունների ծրագրերը, ի՞նչ նմանություններ և տարբերություններ կային:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմե՛ք ազգային երեք կուսակցությունների մասին աղյուսակ՝ ներկայացնելով հիմնադիրներին, վայրը, տարեթիվը, ծրագրային հիմնական պահանջները, գործունեության նշանավոր իրադարձությունները:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ազգային կուսակցություններ, «նշանավոր երեք Մկրտիչներ», «Արմենիա» թերթ, Արմենական կուսակցություն, Ավետիս Նազարբեկյան, Ռուբեն Խանազատ, Մարո Վարդանյան, «Հնչակ» թերթ, Հնչակյան կուսակցություն, «Վերակազմյալ հնչակյաններ», Արփիար Արփիարյան, «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) կուսակցություն, Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Ստեփան Զորյան (Ռոստոմ), «Դրոշակ» թերթ, Սարգիս Կուկունյան, բանկ Օտտոմանի գործողություն, Խանասորի արշավանք

§ 20. ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արաբո

Հայդուկային շարժման սկիզբը: Սուլթան Աբդուլ Համիդ II–ի հաստատած արյունալի վարչակարգի դեմ հայ ժողովուրդը դուրս եկավ ազատագրական պայքարի: Արևմտահայ գյուղացին ինքնաբուխ ծավալեց անհատական, պարտիզանական շարժում, որն ստացել է **հայդուկային** կամ **ֆիդայական** անվանումը: Հայդուկները (հունգարերեն՝ հետևակ) կամ **ֆիդայիները** (արաբերեն՝ զոհ, այսինքն՝ ինքնազոհ) վրիժառուներ էին, ովքեր բարձրանում էին լեռները, հեռանում անտառները և փոքրիկ խմբերով անզիջում պայքար ծավալում օսմանյան իշխանությունների դեմ: Նրանք հաճախ անձնական վրիժառություն էին իրականացնում թուրք ու քուրդ ատելի պաշտոնյաների և հայերին կեղեքողների նկատմամբ: Նշանավոր հրապարակախոս ու գրող Ռաֆֆին նրանց անվանել է ժողովրդական վրիժառուներ ու հեղափոխականներ:

Արևմտյան Հայաստանում հայդուկային շարժման հանդես գալը պատահական երևույթ չէր: Այն հետևանք էր արևմտահայության քաղաքական և սոցիալ–տնտեսական ծանր վիճակի: Հայդուկային պայքարը հատկապես ուժեղացավ 1890–ական թթ.: Ազգային կուսակցությունները, մասնավորապես՝ դաշնակցությունը, սկսեցին ուղղորդել շարժումը:

Առաջին ֆիդայիներից էին **Մարգար Վարժապետը, Արաբոն, Թորոս Ծառուկյանը** և ուրիշներ: 1880–ական թթ. վերջին Փոքր Հայքում՝ Սեբաստիայի նահանգում, առաջացան զինված ջոկատներ՝ **չելլոներ** անունով: Չելլոներում ընդգրկված հայ ֆիդայի-

Հայ ֆիդայիներ

ները ներկայանում էին որպես քրդեր, որպեսզի չառաջացնեն թուրքական իշխանությունների վրեժխնդրությունը հայության նկատմամբ:

Նշանավոր հայդուկապետերը: Հայդուկային շարժումը տվեց հայդուկապետերի մի ողջ համաստեղություն: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ ուներ **Արաբոն:** Նա ծնվել է 1863 թ. Սասունի **Կոռթեր** գյուղում, կռվել է չելլոների կազմում: Արաբոն շուտով անհատ վրիժառուից դառնում է հայդուկապետ:

Խուսափելով իշխանությունների հետապնդումներից՝ Արաբոն անցնում է Այսրկովկաս, մտնում դաշնակցության շարքերը, մասնակցում նրա առաջին ընդհանուր ժողովին: Ցավոք, 1893 թ. Արևմտյան Հայաստան վերադառնալիս նրա ջոկատն ընկնում է շրջապատման մեջ: Արաբոն և իր 16 ֆիդայիները հերոսաբար զոհվում են: Ժողովուրդը երկար ժամանակ չի հավատում իր առաջնորդի մահվանը և սպասում է նրա վերադարձին:

1890–ական թթ. մեծ ժողովրդականություն ձեռք բերած ֆիդայապետերից էր **Աղբյուր Սերոբը** (Սերոբ Վարդանյան, ծնվել է 1864 թ.): Նրա ծննդավայրը Նեմրութ լեռան լանջին ընկած **Սոխորդ** գյուղն էր: Կինը՝ **Սոսեն**, ով իր ամուսնու հետ կիսեց հայդուկային կյանքի բոլոր դժվարությունները, հարևան **Թեղուտ** գյուղից էր: Նեմրութը հետագայում դարձավ Սերոբի գործունեության կարևոր վայրերից մեկը:

1890–ական թթ. կեսերին Աղբյուր Սերոբին հաջողվում է միավորել Արևմտյան Հայաստանում գործող հայդուկային խմբերի մեծ մասը: Հատկապես **Բաբշենի** 1898 թ. հաղթական կռվից հետո Սերոբը դառնում է Արևմտյան Հայաստանի ազատարարի խորհրդանիշ: Նրա գործունեությունից անհանգստացած՝ իշխանությունները ջանք չեն խնայում «Նեմրութի հսկային» վերացնելու համար: 1899 թ. Սասունի **Գելիեզուզան (Ընկուզաձոր)** գյուղում Սերոբին դավադրաբար սպանում են: Մեկ տարի անց Սերոբի հավատարիմ զինվորներ Գևորգ Չավուշն ու Անդրանիկը վրեժխնդիր են լինում իրենց առաջնորդին մատնած դավաճան Ավեից և սպանության կազմակերպիչ, քուրդ ցեղապետ Բշարե Խալիլից: Անդրանիկն ու Գևորգը փոխարինում են իրենց հայդուկապետին:

Աղբյուր Սերոբ

Անդրանիկ Օզանյանը հայդուկային շարժման պայծառ դեմքերից էր: Ծնվել է 1865 թ. **Շապին Կարահիսար** քաղաքում: Սկզբում կռվել է տարբեր խմբե-

Գևորգ Չավուշ

րում, ապա միացել Աղբյուր Սերոբին: 1901 թ. Գևորգի հետ նա ղեկավարել է Ս. Առաքելոց վանքի կռիվը, իսկ 1904 թ. գլխավորել է Սասունի ապստամբությունը: Անդրանիկը ժողովրդական հերոսի համբավ է ձեռք բերել Բալկանյան և Առաջին համաշխարհային պատերազմների ժամանակ: Հայտնի է հայդուկային կռիվների վերաբերյալ նրա հեղինակած «**Մարտական հրահանգներ**» կանոնագիրքը:

Հայդուկապետերից **Գևորգ Չավուշը** (ծնվել է 1870 թ. Սասունի Մկդենք գյուղում) տարիքով ամենաերիտասարդն էր: 24 տարեկանում նա արդեն ճանաչված ֆիդայի էր՝ Սասունի ապստամբության ղեկավարներից մեկը: Հայդուկային բազմաթիվ կռիվների մասնակցած Գևորգը քաջաբար զոհվել է **1907 թ. Մշո Սուլուխ** գյուղի մոտ տեղի ունեցած անհավասար կռվում:

Վերոհիշյալ հայդուկապետերը համոզված էին, որ եթե անգամ իրենց պայքարը դատապարտված է անհաջողության, միևնույն է՝ կռիվը չպետք է դադարեցնել: Բայց շարժման մեջ կային գործիչներ, ովքեր, անհեռանկար համարելով հայդուկային պայքարը, առաջարկում էին հրաժարվել անհատական վրիժառությունից, ցուցամոլական գործողություններից և ժողովրդին հանդարտ նախապատրաստել համընդհանուր ապստամբության: Այդպիսի գործիչներից էր սասունցի **Հրայր Դժոխքը**: Նրա համար կուսակցությունները միջոց էին՝ ազատագրության գործն առաջ տանելու համար: Հրայրը հույսեր չէր կապում եվրոպական տերությունների օգնության հետ և կարևորում էր սուլթանական վարչակարգի դեմ հայ–քրդական դաշինքի ստեղծումը: Հրայրը Սասունի 1904 թ. ապստամբության ղեկավարներից էր, որի ժամանակ էլ զոհվել է:

Անկասկած, հայդուկային պայքարը չէր կարող հանգեցնել Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Սակայն ֆիդայական կռիվները հաճախ ստիպում էին իշխանություններին մեղմել ժողովրդի հարստահարումը, հրաժարվել խաղաղ բնակչությանը կոտորելու քայլերից և ամենակարևորը՝ ժողովրդական լայն զանգվածներին մղում էին նոր պայքարի, հասունացնում համաժողովրդական ապստամբության գաղափարը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է նշանակում հայդուկ և ֆիդայի: Պարզաբանե՛ք հայդուկային շարժման առաջացման պատճառները:
2. Ովքե՞ր էին առաջին հայ ֆիդայիները: Ո՞վ էր Արաբոն, ի՞նչ գիտեք նրա մասին:
3. Ներկայացրե՛ք Աղբյուր Սերոբի գործունեությունը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
4. Ովքե՞ր վրեժխնդիր եղան Աղբյուր Սերոբի համար: Պատմե՛ք նրանց մասին:
5. Ի՞նչ մոտեցում ուներ Հրայր Դժոխքը հայդուկային պայքարի հարցում: Գնահատե՛ք նրա մոտեցումը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օգտվելով դասանյութից, «Հայկական հարց» հանրագիտարանից և համացանցի կայքէջերից՝ պատրաստե՛ք ելույթ հայ նշանավոր որևէ հայդուկապետի մասին:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայդուկային կամ ֆիդայական շարժում, հայդուկ, ֆիդայի, Մարգար Վարժապետ, Արաբո, Թորոս Ծառուկյան, չելլո, Աղբյուր Սերոբ, Սոսե, Բաբշեն, Գելիեզուզան (Ընկուզաձոր), Անդրանիկ Օզանյան, Գևորգ Չավուշ, Սուլուխի կռիվ, Հրայր Դժոխք

§ 21. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ: ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1890–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Քուրդ համիդիեական սպա

Արևմտահայության բնաջնջման համիդյան ծրագիրը: Բեռլինի պայմանագրի 61–րդ հոդվածը չիրագործվեց սուլթան Համիդ II–ի կողմից: Ավելին՝ նա նախընտրեց բարբարոսական մոտեցում՝ հայերին բնաջնջելու ուղին. «*Չկա հայ ժողովուրդ, չկա և Հայկական հարց*»:

Սուլթանը պաշտոնապես պետական գաղափարախոսություն դարձրեց **պանիսլամիզմը** (համաիսլամականություն) և **պանթյուրքիզմը** (համաթյուրքականություն): Պանիսլամիզմի գաղափարն իշխանություններին հնարավորություն էր տալու Թուրքիայի դրոշի ներքո միավորելու իսլամադավան, իսկ պանթյուրքիզմը՝ թյուրքալեզու ժողովուրդներին: Երկու դեպքում էլ **սրբազան պատերազմի՝ ջիհադի** կոչ էր արվում բոլոր ոչ մահմեդականների՝ գյավուրների (անհավատներ) դեմ:

Աբդուլ Համիդը **1891 թ.** քրդերից ու հյուսիսկովկասյան գաղթականներից (հայտնի էին «չերքեզներ» հավաքական անունով) ստեղծեց հատուկ հեծյալ գնդեր: Դրանք իր անունով կոչվեցին **համիդիե:** Համիդիեականները կառավարությունից ռոճիկ էին ստանում, իրավունք ունեին ազատորեն կողոպտելու հայ բնակչությանը, իսկ ձմռան ամիսներին իրենց բազմաքանակ անասուններով ապրելու հայկական գյուղերում: Այս խորամանկ քայլով սուլթանը սիրաշահեց ապստամբ քրդերին և նրանց ուղղելով հայերի դեմ՝ առաջացրեց հայ–քրդական հակամարտություն:

Բռնաճնշումները հասան աներևակայելի չափերի: Բանտերը լցվեցին հայ քաղաքական գործիչներով, կախաղան բարձրացվեցին հայդուկային շարժման բազմաթիվ մասնակիցներ: Մամուլում մտցվեց խիստ գրաքննություն, արգելվեց «Հայաստան» բառի գործածությունը:

Հայերի զանգվածային կոտորածները որպես ցեղասպանության սկիզբ: Հայերի առաջին զանգվածային կոտորածներն սկսվեցին 1890–ական թթ. սկզբին նախ Կարինում, ապա՝ Կ. Պոլսում: Օսմանյան մայրաքաղաքի Գում Գափու թաղամասում ոստիկանությունը կրակ բացեց խաղաղ հայ ցուցարարների

վրա: Եղան զոհեր ու ձերբակալություններ: Շուտով ջարդերը տարածվեցին ամբողջ կայսրությունում:

1894 թ. համիդիե ջոկատները նետվեցին Արևմտյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների վրա: Առաջին հարվածն ուղղվեց ազատատենչ **Սասունի** դեմ: Հայերի դիմադրությունը ճնշվեց արյան մեջ:

Մեծ տերությունները հատուկ հանձնախումբ ուղարկեցին գավառ: Հանձնաժողովի նյութերին ծանոթանալուց հետո պարզ դարձավ, որ Սասունի շուրջ 40 գյուղերում բնաջնջվել է 10 հազար խաղաղ բնակիչ: Ոճրագործության նյութերի հիման վրա մեծ տերությունները **1895 թ. մայիսի 11-ին** օսմանյան կառավարությանը ներկայացրին «**Մայիսյան բարենորոգումների ծրագիրը**»:

Սակայն իշխանությունները կազմակերպեցին հայերի զանգվածային նոր կոտորածներ. սեպտեմբերին՝ **Տրապիզոնում, Կ. Պոլսում, Բաբերդում,** ապա՝ գրեթե ողջ Արևմտյան Հայաստանում: Կ. Պոլսում կառավարության նստավայրի առջև հնչակյանների կազմակերպած խաղաղ ցույցը կրկին գնդակոծվեց, զոհվեցին հազարավոր մարդիկ:

Ամենուր մահմեդական մոլեռանդ հոգևորականությունը լուրեր էր տարածում, թե հայերը նախապատրաստում են ապստամբություն, ուստի ալլահը պահանջում է հաշվեհարդար տեսնել նրանց հետ:

Ստանալով Տրապիզոնում բազմաթիվ հայերի ծովում ջրասույզ անելու լուրը՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին ստեղծեց կտավներ՝ կոտորածների թեմաներով:

Մի շարք վայրերում հայերը կազմակերպվեցին ու դիմեցին ինքնապաշտպանության:

Ուրֆայի (Եդեսիա) հայերը երեք ամիս հետ մղեցին տեղի մահմեդականների գրոհները: Հավատալով, թե կառավարական զորքերը եկել են քաղաքում

Տրապիզոնի նավահանգիստը

Մեծն Մուրադ

կարգ ու կանոն հաստատելու՝ հայերը չխոչընդոտեցին նրանց մուտքը հայկական թաղամաս: Սակայն զորքն իր հերթին սկսեց կոտորածներ՝ ոչնչացնելով 7 հազար մարդու:

Բազմահազար արևմտահայեր գաղթեցին տարբեր երկրներ, հայկական մի շարք գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին թուրքերով ու քրդերով: Զարդերից խուսափելու նպատակով շատ հայեր ստիպված ընդունեցին մահմեդականություն: Օսմանյան կայսրությունում **1890–ական թթ. ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ:** Այս կոտորածները բնորոշվում են մեկ ընդհանուր անվանումով՝ **ցեղասպանություն**:

Սուլթան Համիդին չհաջողվեց 1890–ական թթ. հայությանը ցեղասպանելու իր հրեշավոր ծրագիրը ավարտին հասցնել: Համաշխարհային առաջադեմ հանրության բարձրացրած բողոքի ձայնը և հայերի դիմադրական կռիվները ձախողեցին նրա ծրագիրը: Սակայն հայ ժողովրդին ոչնչացնելու և հայրենազրկելու ծրագիրը թուրքական պետության օրակարգից չհանվեց:

Սասունի և Զեյթունի հերոսամարտերը: Արևմտահայաստանի և Կիլիկիայի տարբեր շրջաններում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: 1890–ական թթ. կեսերին հակասուլթանական պայքարի գագաթնակետը կազմեցին Սասունի և Զեյթունի հերոսամարտերը:

1890–ական թթ. Բիթլիսի նահանգի լեռնային Սասուն գավառը՝ իր 35 հազար հայ բնակչությամբ, դարձել էր հայդուկային շարժման կենտրոններից մեկը: Սասունցիները պահպանում էին իրենց կիսանկախ վիճակը և նույնիսկ հրաժարվում էին հարկեր վճարելուց: **1894 թ. հուլիսին** օսմանյան զորքը, որը բաղկացած էր նաև համիդիե ջոկատներից, շարժվեց դեպի Սասուն:

Համայնապատկեր Սասունից

Թուրքական զորքերը հանդիպեցին սասունցիների ուժեղ հակահարվածին: Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարն էր **Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան)**, իսկ կռիվները գլխավորեցին **Գևորգ Չավուշը** և **Հրայրը:** Թուրքերը համաձայնեցին գնալ բանակցությունների: Սակայն նենգաբար սպանեցին բանակցություններին ներկայացած հայերին և վերսկսեցին հարձակումները: Միայն օգոստոսի վերջին թշնամուն հաջողվեց ներխուժել Սասուն:

1895 թ. հոկտեմբերին թուրքերի դեմ մարտեր սկսվեցին **Զեյթունում:** Ծերունազարդ **Ղազար Շովրոյանի** և հնչակյան գործիչ **Գարուն Աղասու** գլխավորությամբ զեյթունցիները զինաթափեցին թուրքական կայազորը, գրավեցին պահակատունը և մեծ քանակությամբ զինամթերք: Շուտով դեպի Զեյթուն շարժվեց թուրքական երկու բանակ: Մինչև դեկտեմբերի 13–ը տևած մարտերում կրելով ծանր կորուստներ՝ թուրքերը նահանջեցին: Զեյթունը գրավելու ուղղությամբ թուրքական կողմի հետագա փորձերը ևս անհաջողության մատնվեցին:

Գործին միջամտեցին մեծ տերությունները: Նրանց միջնորդությամբ **1896 թ. հունվարի 30–ին Հալեպում** կնքվեց հաշտություն: Թուրքերը գնացին մեծ զիջումների. պարտավորվեցին զորքերը հետ քաշել Զեյթունից, բռնություններ չգործադրել ապստամբության մասնակիցների նկատմամբ, երաշխավորել նրանց գույքի ապահովությունը: Զեյթունում կառավարիչը պետք է լիներ եվրոպացի, իսկ տեղական պաշտոնյաները՝ հայեր: Այս ամենի դիմաց հնչակյան գործիչները պարտավորվում էին զենքը հանձնել և եվրոպացի դիվանագետների օգնությամբ հեռանալ Զեյթունից: Ակնհայտ էր, որ զեյթունցիների այս պայքարը պսակվել էր հաղթանակով:

Պաշտպանական կռիվները Վանում: Հայերը հերոսական դիմադրություն կազմակերպեցին նաև **Վանում:** Թուրքական զորքերը **1896 թ. հունիսի 3–ին** ներխուժեցին քաղաք: Նրանց միացան համիդիեական զորքերը: Հայերը կատաղի մարտի նետվեցին թշնամու դեմ: Վանի պաշտպանությունն իրենց վրա վերցրին հիմնականում արմենականները՝ **Մկրտիչ Ավետիսյանի** գլխավորությամբ: Նրանց միացան տեղի դաշնակցականներն ու հնչակյանները:

Վանի բերդը

Վանում ևս գործին միջամտեցին եվրոպացի հյուպատոսները: Հայերը համաձայնեցին վերջիններիս միջնորդությամբ առաջարկված հաշտության պայմաններին: Թուրքական իշխանությունները խոստացան պաշտպաններին թույլատրել անարգել անցնելու Պարսկաստան: Սակայն թուրքերն իրենց խոստումը դրժեցին: Երբ 1500 վանեցիներ հասել էին Պարսկաստանի սահմանագլխին, նրանց վրա հարձակվեցին քրդական **մազրիկ** ցեղի հրոսակները: Փրկվեց միայն 30 մարդ: Զոհվեց նաև Մկրտիչ Ավետիսյանը:

Վանում և շրջակայքում թուրքերը սպանեցին մոտ 20 հազար մարդու, ավերեցին Վասպուրականի մի շարք վանքեր, ոչնչացրին բազմաթիվ ձեռագրեր:

Հայերը թուրք–քրդական ջարդարարներին լուրջ հակահարված հասցրին նաև Մալաթիայում, Մուշում, Դիարբեքիրում, Շատախում և այլուր: Դրանց շնորհիվ հնարավոր եղավ կանխել բազմաթիվ մարդկանց կոտորածը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է պանիսլամիզմը և պանթյուրքիզմը: Սուլթան Աբդուլ Համիդն ի՞նչ էր ծրագրել Հայկական հարցը լուծելու համար:
2. Ո՞ր վայրերում տեղի ունեցան հայերի զանգվածային կոտորածներ: Որքա՞ն հայ կոտորվեց 1890–ական թթ. Օսմանյան կայսրությունում: Ինչպե՞ս է որակվում այդ գործողությունը:
3. Ինչի՞ հետ էր կապված Մայիսյան բարենորոգումների ծրագրի ի հայտ գալը: Ինչո՞վ պատասխանեց սուլթանը այդ ծրագրին: Հայերը որտե՞ղ դիմադրություն ցույց տվեցին թուրք ջարդարարներին:
4. Ինչո՞ւ թուրքերը 1894 թ. հուլիսին զորքեր շարժեցին Սասունի դեմ: Ովքե՞ր գլխավորեցին տեղի հերոսամարտը: Ինչո՞վ ավարտվեց այն:
5. Նկարագրե՛ք Զեյթունի հերոսամարտի սկիզբը, ընթացքը և ավարտը: Ովքե՞ր էին գլխավորում տեղի ապստամբությունը:
6. Ե՞րբ է սկսվել Վանի ինքնապաշտպանությունը: Ինչո՞ւ հայերը համաձայնվեցին դադարեցնել դիմադրությունը և հեռանալ Պարսկաստան: Ի՞նչ պատահեց նրանց հետ: Հիշե՛ք՝ ովքեր և երբ լուծեցին նրանց վրեժը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պանիսլամիզմ (համաիսլամականություն), պանթյուրքիզմ (համաթյուրքականություն), համիդիե, Սասունի 1894 թ. հերոսամարտ, Մայիսյան բարենորոգումների ծրագիր, Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբություն, Ղազար Շովրոյան, Գարուն Աղասի, Վանի 1896 թ. ինքնապաշտպանություն

Firefox https://ebooks.bonee.net/fumf/aifs/

ԳԼՈՒԽ VIII ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

§ 22. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոր մարտավարության ընդունումը: XX դարասկզբին աբդուլհամիդյան վարչակարգը հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու փոխարեն ավելի սաստկացրեց ճնշումները հայերի նկատմամբ:

Հայ ազատագրական շարժման ղեկավար ուժերը այս պայմաններում որդեգրեցին **նոր մարտավարություն**: ՀՅԴ–ն ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանում (Երկիր) ընդհանուր ապստամբության նախապատրաստմանը: Կռվող խմբերի և զինամթերքի կենտրոնացման վայրեր ընտրվեցին Վասպուրականն ու Տարոն–Սասունը:

Հնչակյանները նույնպես ստեղծում էին զինված խմբեր և նախապատրաստվում համընդհանուր ապստամբության: Դրա կենտրոնը, ըստ նրանց ծրագրի, դառնալու էր Կիլիկիան: Այն ուներ նպաստավոր աշխարհագրական դիրք և ծովով կապված էր Եվրոպայի հետ:

Այսպիսով՝ հայոց ազատամարտի գլխավոր խնդիրը դարձավ ժողովրդին ընդհանուր ապստամբության նախապատրաստելը:

Ս. Առաքելոց վանքի կռիվը: 1890–ական թթ. վերջերից արևմտահայության մոտ ստեղծվել էր հուսահատական վիճակ: Նման պայմաններում չէր կարելի լիովին հրաժարվել հայդուկային պայքարից: Հայդուկային պայքարի շարունակման կողմնակիցներ **Անդրանիկը** և **Գևորգ Չավուշը** փորձում էին վրեժխնդրական քայլերով ոգևորել ժողովրդին:

Ստեղծված իրադրությունում բարոյահոգեբանական մեծ ազդեցություն ունեցավ Աղբյուր Սերոբին սպանած քուրդ ցեղապետ Բշարե Խալիլին պատժելը (1900 թ.): Դա բարձրացրեց նաև Անդրանիկի, Չավուշի և մյուսների հեղինակությունը:

Այս առումով նշանավոր իրադարձություն էր նաև **Ս. Առաքելոց** վանքի կռիվը:

Քրիստափոր Միքայելյան

Կ. Պոլսում նախապատրաստվում էր մահափորձ արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի դեմ: Այն նախաձեռնել էր դաշնակցությունը: Նրա առաջնորդ Ք. Միքայելյանը գլխավորեց այդ նպատակով ստեղծված խումբը: Սակայն նրան վիճակված չէր անձամբ իրականացնել իր մտահղացումը. 1905 թ. մարտի 17–ին նա նահատակվեց Սոֆիայի մոտ գտնվող Վիտոշ լեռան լանջին՝ նռնակներ փորձարկելիս: Այնուամենայնիվ, 1905 թ. հուլիսի 21–ին ծրագրված մահափորձն իրականացվեց, սակայն սուլթանը հրաշքով կենդանի մնաց: Գործողությունը միջազգային մեծ արձագանք ստացավ:

98 von 194 12.02.2021, 11:07

1901 թ. նոյեմբերի 3–ին Անդրանիկը 37 հայդուկների և 20 զինված գյուղացիների հետ մտնում է Մուշից հարավ–արևելք ընկած Ս. Առաքելոց վանքը և այն վերածում ինքնապաշտպանական ամրոցի: Թուրքական զորքը շրջապատում է վանքը: Երեք օր անց սկսվում է մարտը: Հայ կռվողների թիվը հայդուկների հետ միասին շուտով հասնում է 140–ի: Թշնամու ուժն անհամեմատ ավելի էր:

Բիթլիսի նահանգապետը, որ ստանձնել էր թուրքական զորքի հրամանատարությունը, բանակցություններ է սկսում: Հայկական կողմը պահանջում է ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին, զինաթափել ու պատժել քրդական զինված ավազակախմբերին, հայերին վերադարձնել նրանցից զավթված հողերը և այլն: Քանի որ բավարարվեց միայն առաջին պահանջը, կատաղի մարտերը վերսկսվեցին:

Պաշարվածների զինամթերքը սպառվում էր: Այդ պատճառով նոյեմբերի 27–ի գիշերը հայդուկները, տեղացած ձյան պայմաններում սպիտակ սավաններով փաթաթված, աննկատ հեռանում են վանքից: Ս. Առաքելոց վանքի հերոսական կռիվը մեծ տպավորություն գործեց և բարձրացրեց հայության մարտական ոգին:

Մշո Ս. Առաքելոց վանքի ներկա վիճակը

Թորգոմի խումբը

Սասունի 1904 թ. ապստամբությունը: Ընդհանուր ապստամբությունը նախատեսված էր սկսել 1905 թ. ամռանը Սասունում և Վասպուրականում: Դա աննկատ չմնաց, և սուլթանական կառավարությունն սկսեց ուժեր կենտրոնացնել Սասունի մատույցներում:

Արևելյան Հայաստանում և ամբողջ Այսրկովկասում ծավալվում է Սասունին օգնելու շարժում: Ուղարկված մեկ տասնյակից ավելի հայդուկային խմբերից միայն **Թորգոմի «Մրրիկ»** ձիավոր խմբին է հաջողվում 1903 թ. ամռան սկզբներին հասնել նշանակման վայր:

Նույն տարվա աշնանը Սասունի հայտնի **Գելիեզուզան** գյուղում ստեղծվում է ինքնապաշտպանության ղեկավար մարմին՝ **Անդրանիկի** գլխավորությամբ: Այդ մարմնի անդամներ էին **Մուրադը, Սմբատը, Սեպուհը** և ուրիշներ:

1904 թ. գարնան սկզբներին թուրքական 10–հազարանոց զորքը սկսում է իր առաջխաղացումը: Սասունի դեմ են դուրս բերվում նաև մի քանի հազար զինված քրդեր: Նրանց դիմագրավում են 200 փորձված հայդուկներ և շուրջ 1000 զինված սասունցիներ:

Ապրիլի 1–ին թշնամին միաժամանակ հարձակվում է հարավային և հյուսիսային կողմերից: Թուրքական հրամանատարությունն առաջարկում է զենքը վայր դնել: Անդրանիկն ու Հրայրը պատասխանում են, որ զենքը վայր կդնեն միայն Մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման դեպքում: Թշնամին վերսկսում է հարձակումը:

Հրայր Դժոխք

Սուլուխի կամուրջը

Ապրիլի 13–ի կատաղի մարտերում զոհվում է **Հրայրը**: Նրա մարմինն ընկերները հողին են հանձնում Գելիեգուզանում՝ Աղբյուր Սերոբի կողքին:

Թշնամին միայն մեծ զոհերի գնով ապրիլի 22–ին կարողանում է գրավել Գելիեգուզանը: Սակայն կռիվները շարունակվում են մինչև մայիսի կեսերը:

Սասունի 1904 թ. ապստամբությունն ավարտվեց պարտությամբ: Հայերի անձնազոհ կռիվները և մեծ տերությունների միջամտությունը հարկադրեցին սուլթանին հրաժարվել Սասունի հայերին բնաջնջելու ծրագրից:

Սասունցի ֆիդայի

Հայդուկային շարժման անկումը: Ազատագրական պայքարի ղեկավարները Մշո դաշտի հայությանը չվտանգելու համար վերջ տվեցին պարտիզանական գործողություններին: Ի վերջո որոշվեց հայդուկներին դուրս բերել երկրից և դադարեցնել ֆիդայական պայքարը: Հայ ազատամարտիկների մի մասը հաստատվեց Պարսկաստանում: Մյուսներն անցան Արևելյան Հայաստան, ուր հայ–թաթարական կռիվների ժամանակ կարևոր դերակատարում ունեցան:

Միայն **Գևորգ Չավուշն** իր խմբով հետ ուղարկվեց Մուշ և Սասուն՝ ժողովրդի կողքին լինելու, նրան պաշտպանելու նպատակով: **1907 թ. մայիսի 27–ին Սուլուխ** գյուղի մոտ տեղի ունեցած կռվում հայրենիքի ազատության պայքարին իր կյանքը նվիրաբերած հայորդին հերոսաբար զոհվում է:

Չնայած մեծ դժվարություններին՝ հայությունը շարունակեց պայքարը իր ազատության և ազգային–պատմական իրավունքներին վերատիրանալու համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արևմտահայության հանդեպ XX դ. սկզբին ի՞նչ քաղաքականություն էր վարում սուլթանական վարչակարգը:
2. Ի՞նչ մարտավարություն ընտրեցին հայ ազատագրական շարժման ղեկավար ուժերը: Ի՞նչ աշխատանքներ էին տարվում Տարոն–Սասունում, Վասպուրականում և Կիլիկիայում:
3. Ովքե՞ր էին կողմ շարունակելու հայդուկային պայքարը: Ի՞նչ գործողություններ նրանք իրականացրին:
4. Ներկայացրե՛ք Մշո Ս. Առաքելոց վանքի կռվի սկիզբն ու ընթացքը: Ի՞նչ նշանակություն ունեցավ այն:
5. Ընդհանուր ապստամբությունը ե՞րբ պետք է սկսվեր: Կովկասահայության շրջանում ի՞նչ շարժում էր ծավալվել:
6. Ներկայացրե՛ք Սասունի 1904 թ. ապստամբության ընթացքը: Ձեր կարծիքով ինչո՞ւ այն ավարտվեց պարտությամբ:
7. Ինչո՞ւ որոշվեց դադարեցնել ֆիդայական պայքարը Երկրում: Ե՞րբ և որտե՞ղ է զոհվել Գևորգ Չավուշը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Հայդուկային պայքարը արդյոք սպառե՞լ էր իրեն, և ճի՞շտ էր դրանից հրաժարումը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրում ընդհանուր ապստամբության նախապատրաստում, Ս. Առաքելոց վանքի կռիվ, Թորգոմ, «Մրրիկ» խումբ, Սասունի 1904 թ. ապստամբություն, Սուլուխի կռիվ, հայդուկային շարժման անկում

§ 23. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ

Նիկոլայ II կայսր
(1894–1917 թթ.)

Հայոց եկեղեցու իրավունքների ոտնահարումը և համահայկական ցասումը: XX դ. սկզբին ռուսական միապետության գաղութային քաղաքականությունը հայերի նկատմամբ նոր դրսևորումներ ունեցավ:

Ինչպես գիտեք, Հայոց եկեղեցու ունեցվածքից ստացվող եկամուտների հաշվին էին պահվում հայկական դպրոցները և մշակութային այլ հաստատություններ: Կովկասի կառավարչապետ **Գ. Գոլիցինը** կազմել էր Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիր: Նիկոլայ II կայսրն ընթացք տվեց դրան ու **1903 թ. հունիսի 12–ին** հաստատեց Հայոց եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին օրենքը: Սկսվեց Հայ առաքելական եկեղեցու կալվածքների, գույքի, ավանդների պետականացման գործընթաց:

Ցարիզմի այդ քայլը մեծ վրդովմունք առաջացրեց հայության գրեթե բոլոր խավերի մեջ: Մայր աթոռն ու հայ ազգային ուժերը կազմակերպեցին ժողովրդի դիմադրությունը: Թիֆլիսում ստեղծվեց **«Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»,** որտեղ վճռական դեր էր խաղում Ռոստոմը (Ստեփան Զորյան):

Ամենայն հայոց կաթողիկոս **Մկրտիչ Խրիմյանը** ևս կանգնեց ազգային իրավունքների պաշտպանության համար ծավալվող շարժման գլուխ:

Բողոքի առաջին ցույցը տեղի ունեցավ **1903 թ. հուլիսի 29–ին Ալեքսանդրապոլում**: Հաջորդ ամիսներին հուժկու ելույթներ ու կառավարական ուժերի հետ

Թիֆլիսը XX դ. սկզբին

բախումներ եղան Երևանում, Գանձակում, Թիֆլիսում, Բաքվում, Լոռիում և այլուր:

Պայքարի ձևերից մեկն էլ դարձավ հայատյաց պաշտոնյաների ահաբեկումը, որն իրականացնում էին ազգային–հեղափոխական կուսակցությունները: 1903 թ. հոկտեմբերին հնչակյանները Գ. Գոլիցինի դեմ մահափորձ կազմակերպեցին, սակայն վերջինս ողջ մնաց:

Ոտքի ելան նաև հայության մյուս հատվածները: Պոլսահայությունը բուռն գործունեություն ծավալեց արևմտահայերի շրջանում՝ ի պաշտպանություն Մայր աթոռի ավանդական իրավունքների: Իր բողոքն ու համերաշխությունը հայտնեց նաև Եվրոպայի ու Ամերիկայի հայությունը: Պայքարի մեջ մտավ նաև Եվրոպայի բուհերում սովորող հայ ուսանողությունը:

Նիկոլ Դուման

Հայության համազգային պայքարը շարունակվեց երկու տարի և ի վերջո պսակվեց հաջողությամբ: Հայատյաց կառավարչապետը հեռացվեց պաշտոնից, իսկ հակահայ օրենքը 1905 թ. օգոստոսի 1–ին չեղյալ հայտարարվեց: Հայ առաքելական եկեղեցուն վերադարձվեցին բռնագրավված հողերը, գույքը, դրամը, իսկ հայկական տարրական դպրոցները նորից հանձնվեցին նրա տնօրինությանը:

Հայ–թաթարական ազգամիջյան բախումը: Ազգերին ճնշելու ցարական վարչակարգի քաղաքականությունը նոր ձևով արտահայտվեց ռուսաստանյան առաջին հեղափոխության (1905–1907 թթ.) ժամանակ: **1905 թ. հունվարի 9–ին** սկսված այդ հեղափոխության նպատակն էր տապալել Ռուսաստանի առաջընթացի գլխավոր խոչընդոտ միապետությունը և երկրում հաստատել սահմանադրական կարգեր:



Ձախից՝ Քեռի (Արշակ Գավաֆյան), Համազասպ Սրվանձտյանց (կանգնած) և Վարդան (Սարգիս Մեհրաբյան)

Հեղափոխության ալիքը արագ հասավ նաև Արևելյան Հայաստան և Կովկասի փոխարքայության մյուս տարածքներ: Կայսր Նիկոլայ II–ը, սակայն, մտադիր չէր հեշտությամբ զիջել իր միահեծան իրավունքները:

Հեղափոխության ուժերը մասնատելու նպատակով ցարիզմը կրոնական և ազգային թշնամանք բորբոքեց կայսրությունում ապրող ազգերի ու ժողովուրդների միջև: Դրա հետևանքով Այսրկովկասում կռիվներ ծավալվեցին հայերի և տեղի մուսուլմանների (կովկասյան թաթարներ՝ այժմյան ադրբեջանցիները) միջև:

Հայ–թաթարական բախումները սկիզբ առան **1905 թ. փետրվարի 6–ին**: Բաքվի նահանգապետ **Մ. Նակաշիձեի** անմիջական հրահրմամբ քաղա-

Սևքարեցի Սաքո

քում սկսվեցին և մի քանի օր շարունակվեցին հայերի ջարդեր: Հայերի համար անակնկալ էր ռուսական իշխանության և մուսուլմանների նման զազրելի գործողությունը, ահա թե ինչու նրանք զգալի կորուստներ ունեցան: Սակայն Ռուսաստանի նավթային կենտրոն Բաքվի հայերը շատ արագ համախմբվեցին և հայդուկապետ **Նիկոլ Դումանի** գլխավորությամբ արժանի հակահարված հասցրին հակառակորդներին:

Ազգամիջյան կռիվները շուտով տարածվեցին երկրամասի այլ նահանգներ: Ընդհարումներ եղան Երևանում, այնուհետև Բաքվում, փոխարքայության կենտրոն Թիֆլիսում և Արևելյան Հայաստանի տարբեր գավառներում:

Հայ–թաթարական ընդհարումները երկրամասում, մերթ ընդ մերթ ուժգնանալով, տևեցին մինչև **1906 թ. սեպտեմբերը**: Այդ ժամանակ արդեն ռուսաստանյան առաջին հեղափոխությունն անկում էր ապրում, ուստի ցարական իշխանությունը որոշեց դադարեցնել ազգամիջյան բախումները:

Հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը: Հայությունն այդ դժվարին օրերին ապավինեց սեփական ուժերին և պաշտպանեց ազգի ու հայրենիքի պատիվը:

Ինքնապաշտպանության ղեկավարումն իր ձեռքը վերցրեց ՀՅԴ կուսակցությունը: Նիկոլ Դումանը (Բաքվից հետո) ղեկավարեց Երևանի նահանգի, **Վարդանը**՝ Ղարաբաղի, **Արմեն Գարոն**՝ Թիֆլիսի ինքնապաշտպանությունը: Կռիվներում աչքի ընկան նշանավոր հայդուկներ և ազգային–հեղափոխական հարյուրավոր գործիչներ, ինչպես օրինակ՝ **Քեռին, Սևքարեցի Սաքոն, Դրոն, Համազասպը, Մուրադը** և ուրիշներ:

Նակաշիձեի ահաբեկումը Դրոյի կողմից
Բաքու, մայիսի 11, 1905 թ.

Առավել հայատյաց գործիչների նկատմամբ դաշնակցությունը մահապատժի վճիռ կայացրեց: **Դրոն** Բաքվում սպանեց Մ. Նակաշիձեին: Նման պատժի արժանացան նաև Նախիջևանի հայերի կոտորածի կազմակերպիչ գեներալ Դ. Ալիխանով–Ավարսկին և շատ ուրիշ հայատյաց պաշտոնյաներ:

Ազգային իրավունքների համար զինված պայքարում զգալի ներդրում ունեցավ նաև **Հնչակյան կուսակցությունը**: Վերջինիս մարտական խմբերը մասնակցեցին Նախիջևանի, Էջմիածնի և այլ գավառների հայության ինքնապաշտպանությանը: Զանգեզուրում

էր մարտնչում հնչակյան հայտնի գործիչ **Փարամազի** (**Մատթեոս Սարգսյան**) խումբը:

Այդ ծանր ժամանակաշրջանում իր ժողովրդի կողքին էր և նրան աջակցում էր Հայոց եկեղեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ:

Չնայած հայ ժողովուրդը 1905–1906 թթ. ունեցավ նյութական ու մարդկային զգալի կորուստներ, սակայն ձեռք բերեց մարտական կարևոր փորձառություն: Այդ դժոխային օրերին իրենց արևելահայ եղբայրներին օգնության էին շտապել արևմտահայերը: Հայության երկու հատվածների ազատամարտիկներին մեկտեղել էր ազգային միասնության և սեփական իրավունքների պաշտպանության վեհ գաղափարը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ քայլեր ձեռնարկեց ցարիզմը Հայոց եկեղեցու իրավունքները սահմանափակելու համար:
2. Ձեր կարծիքով, ո՞րն էր 1903 թ. հունիսի 12–ի օրենքի իրական նպատակը: Ինչ ավարտ ունեցավ հայության միահամուռ պայքարը:
3. Ե՞րբ է տեղի ունեցել ռուսաստանյան առաջին հեղափոխությունը. ո՞րն էր դրա գլխավոր նպատակը:
4. Որո՞նք էին Այսրկովկասում ազգամիջյան բախումների պատճառները:
5. Ո՞ւմ հրահրմամբ և որտեղի՞ց սկսվեցին հայ–թաթարական ընդհարումները:
6. Ո՞ր կուսակցությունը գլխավորեց հայերի ինքնապաշտպանությունը: Ովքե՞ր աչքի ընկան կռիվներում:
7. Ինչ դիրքորոշում ուներ Հայոց եկեղեցին այդ օրերին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչ հետևանքներ և նշանակություն ունեցան հայ–թաթարական կռիվները:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1903 թ. հունիսի 12–ի օրենք, Թիֆլիսի «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե», ռուսաստանյան առաջին հեղափոխություն, հայ–թաթարական կռիվներ (1905–1906 թթ.), կովկասյան թաթարներ, Մ. Նակաշիձե, Նիկոլ Դուման, Համազասպ, Սևքարեցի Սաքո, Վարդան, Արմեն Գարո, Դրո, Փարամազ

§ 24. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Երիտթուրքերի հեղաշրջումը: XX դ. սկզբներին Օսմանյան կայսրությունում աստիճանաբար ուժեղանում էր հակահամիդյան պայքարը: Շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը: Հայ ազգային ուժերի մի մասը, այդ թվում՝ ՀՅԴ–ն, սուլթանական բռնակալության տապալման համար մղվող պայքարում անհրաժեշտ համարեց համագործակցել Օսմանյան կայսրությունում գործող ընդդիմադիր բոլոր ուժերի, այդ թվում՝ երիտթուրքերի հետ: Դաշնակցությունն իր նոր ծրագրում առաջադրեց Արևմտյան Հայաստանում (հայկական վեց նահանգներում) լայն ինքնավարություն ստեղծելու պահանջը:

Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի՝ **1907 թ. դեկտեմբերին Փարիզում** հրավիրված երկրորդ համաժողովը որոշեց զինված ապստամբության միջոցով տապալել համիդյան բռնատիրությունը և հաստատել սահմանադրական կարգեր:

1908 թ. հուլիսին տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Երիտթուրք սպաները, զորքի գլուխ անցած, Մակեդոնիայից շարժվեցին Կ. Պոլիս՝ սուլթանից պահանջելով վերականգնել 1876 թ. սահմանադրությունը: Ահաբեկված սուլթանը տեղի տվեց: Երկիրը հռչակվեց սահմանադրական միապետություն:

Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները մեծ հույսեր էին կապել այս հեղաշրջման հետ: Մեծ էր ոգևորությունը նաև հայկական միջավայրում: Հայ ազատագրական ուժերը նույնիսկ պայքարի օրակարգից հանեցին արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու խնդիրը:

Կիլիկիայի կոտորածները և ինքնապաշտպանությունը: Ոգևորությունը շատ կարճ տևեց: Երիտթուրքերը ոչ միայն սահմանադրական քիչ թե շատ էական բարեփոխումներ չիրագործեցին, այլ ավելի վատթար ձևով շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի հակահայ քաղաքականությունը:

Դրա առաջին ցայտուն քայլը կատարվեց երիտթուրքերի հեղաշրջումից մեկ տարի չանցած: **1909 թ. ապրիլին Ադանայի նահանգում** տեղի ունեցավ հայերի կոտորած: **Ադանա քաղաքում ապրիլի 1–ին**

Ադանայի կոտորածներից մազապուրծ մի խումբ հայեր

սկսվեց և երեք օր շարունակվեց հայերի կոտորածը: Հայերը դիմեցին ինքնապաշտպանության և կարողացան արժանի հակահարված հասցնել թուրքերին:

Սակայն իշխանությունները խաբեությամբ Ադանայի հայերից հավաքեցին զենքը: Ապրիլի 12–14–ին տեղի ունեցավ կոտորածի երկրորդ փուլը: Այս անգամ ջարդեր տեղի ունեցան ինչպես Ադանայի, այնպես էլ Հալեպի նահանգների հայկական մի շարք բնակավայրերում: Կոտորածներին մասնակցեց նաև զորքը:

Կ. Պոլսի Ազգային ժողովի հատուկ հանձնախմբի հավաքած տվյալներով՝ ընդհանուր առմամբ սպանվել էր 30 հազար հայ, որից 20 հազարը՝ Ադանայի նահանգում: Ավերվել էին տասնյակ եկեղեցիներ, դպրոցներ, հարյուրավոր տներ, խանութներ, ագարակներ և այլն:

Հայերի կորուստներն ավելի մեծ կլինեին, եթե չդիմեին ինքնապաշտպանության: Դիմադրություն կազմակերպվեց **Հաճընում, Սիսում** և այլ վայրերում: Հաճընի հայության 12 օր տևած պաշտպանությունը գլխավորում էր **Ներսես վարդապետը**: Սիս քաղաքում 1500 հայեր 7 օր շարունակ **Ղևոնդ** և **Գյուտ վարդապետների** գլխավորությամբ հաջողությամբ դիմագրավեցին թշնամուն:

Կիլիկիայի դեպքերը ցույց տվին, որ երիտթուրքերը որդեգրել են հայերի բնաջնջման աբդուլհամիդյան պետական ծրագիրը:

Հայկական հարցը 1912–1914 թթ.: Բալկանյան երկրներ Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը և Չեռնոգորիան 1912 թ. հոկտեմբերին պատերազմ սկսեցին Օսմանյան կայսրության դեմ (Բալկանյան առաջին

Գևորգ Ե Սուրենյանց

պատերազմ): Նրանց նպատակն էր թուրքերին վռնդել Եվրոպայից:

Հայկական հարցի վերաբացման համար առաջացավ նպաստավոր միջազգային իրավիճակ: Մեծ դեր խաղաց նաև Ռուսաստանի արդեն փոխված՝ դրական դիրքորոշումը Հայկական հարցում:

Հայ ազգային մարմինները եռանդուն գործունեություն ծավալեցին: **1912 թ. հոկտեմբերին** Թիֆլիսում ստեղծվեց **Հայոց ազգային բյուրոն**: Նրա գլխավոր նպատակն էր նպաստել Հայկական հարցի լուծմանը:

Ամենայն հայոց կաթողիկոս **Գևորգ Ե-ն 1912 թ. հոկտեմբերի 2-ին** Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսական կայսրին՝ հայերին պաշտպանելու խնդրանքով: Այնուհետև նոյեմբերի 10-ի կոնդակով **Պողոս Նուբար փաշան** նշանակվեց Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ: Նրա գլխավորությամբ ստեղծված **Ազգային պատվիրակությունը** հայկական բարենորոգումների հուշագիր պատրաստեց տերություններին ներկայացնելու համար:

1913 թ. ամռանը Հայկական հարցը կրկին դարձավ վեց տերությունների (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա) դիվանագիտական պայքարի առարկա:

Կ. Պոլսում ռուսական դեսպանության թարգմանիչ **Անդրեյ Մանդելշտամը** կազմեց հայկական բարենորոգումների նախագիծ: Ըստ նախագծի՝ հայկական վեց նահանգներից՝ **Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա,** կազմվելու էր **մեկ նահանգ**: Նահանգի գերագույն կառավարիչը՝ ընդհանուր նահանգապետը, պետք է լիներ թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի: Անտանտի երկրները հավանություն տվեցին ռուսական նախագծին, իսկ Եռյակ միության երկրները մերժեցին:

Պողոս Նուբար փաշա

Ի վերջո սկսվեց բանակցությունների նոր փուլ՝ այս անգամ ռուսական ու թուրքական կողմերի միջև: **1914 թ. հունվարի 26-ին** ստորագրվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը: Ըստ համաձայնագրի՝ յոթ նահանգներից (ավելացվել էր Տրապիզոնի նահանգը) ձևավորվում էր **վարչական երկու միավոր**: Դրանք կառավարելու էին օտարերկ-

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՎԱՐՉԱՄԱՐԱՊՈՐԵՐԸ՝ ԸՍՏ 1914 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

ոյա երկու տեսուչները: Նրանք էին տնօրինելու դատական, ոստիկանական, վարչական գործերը:

Անշուշտ, ռուս–թուրքական համաձայնագիրը հայերին ինքնավարություն չէր տալիս և ավելի համեստ պահանջներ էր առաջադրում, քան Մանդելշտամի ծրագիրը: Այդ էր պատճառը, որ Հայկական հարցի լուծման համար պայքարի այս փուլում հայ ազգային քաղաքական ուժերը խզեցին կապերը երիտթուրքերի հետ և դարձան իշխանություններին ընդդիմություն:

Երիտթուրքերի կառավարությունը տարբեր պատճառներով նորից ձգձգում էր հայկական բարենորոգումների իրագործումը: Վերջապես 1914 թ. ապրիլին տեսուչներ ընտրվեցին հոլանդացի դիվանագետ **Լ. Վեստենենկը** և նորվեգացի գնդապետ **Ն. Հոֆը**: Վեստենենկը նշանակվեց Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ **Էրզրում**), իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգները ներառող մասի տեսուչ (նստավայրը՝ **Վան**): Հոֆը նոր էր եկել Արևմտյան Հայաստան, իսկ Վեստենենկը դեռ չէր ժամանել, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Օգտվելով իրավիճակի կտրուկ շրջադարձից՝ Թուրքիան չեղյալ համարեց բարենորոգումների ծրագիրը և կասեցրեց եվրոպացի տեսուչների աշխատանքը:

Այսպիսով՝ հայկական բարենորոգումների իրագործման այս փորձը նույնպես ձախողվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս էր կոչվում երիտթուրքերի կազմակերպությունը:
2. Հայկական հարցում ի՞նչ պահանջ էր առաջադրել ՀՅԴ–ն իր նոր ծրագրով:
3. Ե՞րբ է տեղի ունեցել երիտթուրքական հեղաշրջումը: Ի՞նչ մարտավարություն ընտրեցին հայ քաղաքական ուժերը հեղաշրջումից հետո:
4. Հայկական հարցում ի՞նչ ծրագիր որդեգրեցին երիտթուրքերը: Նկարագրե՛ք Կիլիկիայի 1909 թ. դեպքերը և հայերի ինքնապաշտպանական մարտերը:
5. Ե՞րբ սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը: Ո՞րն էր դրա նպատակը:
6. Հայկական ազգային ի՞նչ նոր մարմիններ ստեղծվեցին 1912 թ., և ո՞րն էր նրանց գործունեության նպատակը:
7. Ո՞վ էր Մանդելշտամը և ի՞նչ նախագիծ կազմեց:
8. Ե՞րբ է ստորագրվել ռուս–թուրքական համաձայնագիրը:
9. Ինչո՞ւ էր երիտթուրքական կառավարությունը ձգձգում բարենորոգումների իրագործումը: Ե՞րբ և ովքե՞ր ընտրվեցին տեսուչներ. ո՞րն էր նրանց նստավայրը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ չիրականացավ հայկական բարենորոգումների 1914 թ. ծրագիրը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Միություն և առաջադիմություն» կազմակերպություն, երիտթուրքական հեղաշրջում, Կիլիկիայի հայության 1909 թ. կոտորածներ և ինքնապաշտպանական մարտեր, Հայկական հարցի վերաբացում, Հայոց ազգային կենտրոնական բյուրո (Հայոց ազգային բյուրո), Պողոս Նուբար, Ազգային պատվիրակություն, Անդրեյ Մանդելշտամ, ռուս–թուրքական 1914 թ. համաձայնագիր, Լ. Վեստենենկ, Ն. Հոֆ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/aifs/

ԳԼՈՒԽ IX
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 25. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

Հայաստանը և Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը: Առաջին աշխարհամարտն սկսվեց **1914 թ. օգոստոսի 1-ին** (հին տոմարով՝ **հուլիսի 19-ին**): Անարդարացի ու զավթողական այդ պատերազմն ընթանում էր մեծ տերությունների երկու խմբավորումների՝ **Անտանտի** և **Եռյակ** (մեկ տարի անց՝ **Քառյակ**) դաշինքի միջև:

Անտանտի հակառակորդ Գերմանիային հաջողվեց օսմանյան Թուրքիային ներգրավել իր դաշինքի մեջ՝ վերջինիս խոստանալով ըստ ամենայնի աջակցել Անտանտի դեմ պատերազմի ժամանակ: Գլխավոր պատճառը, որ դրդեց երիտթուրքերին ներքաշվելու մեծ պատերազմի հորձանուտը, թուրք-ռուսական վաղեմի հակամարտությունն էր:

Երիտթուրքերը մտադիր էին Ռուսաստանյան կայսրությունում բնակվող թյուրքալեզու, ինչպես նաև մուսուլման մյուս ժողովուրդներին օգտագործել ռուսների դեմ և ապագայում միավորել նրանց «Մեծ Թուրանի» մեջ: Պանթյուրքական այդ ծրագրի իրագործման ճանապարհին լուրջ խոչընդոտ էին հայերն ու Հայաստանը: Հետևաբար Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակներից էր նաև **հայ ժողովրդի բնաջնջումը, նրա հայրենազրկումը**:

Ռուսաստանը ևս մեծ ակնկալիքներ ուներ Թուրքիայի հետ ռազմական հերթական բախումից: Նա ձգտում էր ընդլայնելու իր ազդեցության ոլորտները՝ տեր դառնալու սևծովյան նեղուցներին և Կ. Պոլսին, նվաճելու Արևմտյան Հայաստանը, ամրապնդելու իր դիրքերն Իրանում:

Կովկասյան ճակատը 1914-1917 թթ.: Թուրքական հրամանատարությունը կարևոր նշանակություն էր տալիս Կովկասյան ճակատին: Այս ուղղությամբ թուրքերը կենտրոնացրել էին 300-հազարանոց երրորդ բանակը: Երբ գերմանական ու թուրքական ռազ-

113 von 194 12.02.2021, 11:07

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ ԵՎ ՃԱԿԱՏԱՅԻՆ ԹԻԿՈՒՆՔԸ
(1917 թ. մայիս–դեկտեմբեր)

մանավերը 1914 թ. հոկտեմբերի 16–17–ը (նոր տոմարով՝ հոկտեմբերի 29–30–ը) (այսուհետ՝ մինչև 1918 թ. ապրիլի 18–ը, տարեթվերը տրված են հին տոմարով) անսպասելի հարվածներ հասցրին Ռուսաստանի սևծովյան նավահանգիստներին, ռուսական կառավարությունը մի քանի օր անց պաշտոնապես պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

Պատերազմի սկզբում ռուսները Կովկասյան ճակատում ունեին մոտ 182–հազարանոց զորք: Մեկ ամիս անց ճակատային գիծը Բաթումի մոտից ձգվում էր մինչև Ուրմիա լճից արևելք ընկած վայրերը՝ կազմելով 720 կմ:

Կովկասյան ճակատում առաջին նշանավոր իրադարձությունը **Սարիղամիշի** ճակատամարտն էր: Այն ընթացավ **1914 թ. դեկտեմբերի 9–ից մինչև 1915 թ. հունվարի 5–ը**: Թուրքական երրորդ բանակը, որի հրամանատարությունն անձամբ ստանձնել էր Էնվեր փաշան, կարողացավ գրավել Օլթին, Արդահանը և Կարս–Սարիղամիշի շրջանում դուրս գալ ռուսական զորքերի թիկունքը: Սակայն ռուս զինվորների ու հայ կամավորների հերոսական կռիվների շնորհիվ օսմանյան 90–հազարանոց բանակը գլխովին ջախջախվեց: Էնվերը մի կերպ խուսափեց գերի ընկնելուց: Թուրքական զորքից փրկվեց միայն 12 000 հոգի:

Թուրքերը միաժամանակ հարձակման էին անցել Իրանի հյուսիսում: Օսմանյան կանոնավոր ուժերը և տեղական թուրք–քուրդ–թաթարական խաժամու-

Ռուսական զորքը Սարիղամիշի ճակատային տեղամասում, 1914 թ. դեկտեմբեր

Էնվերը Կոնիայի կայարանում՝ Կովկասյան ճակատից դեպի Կ. Պոլիս փախուստի ճանապարհին

ժը հաշվեհարդար տեսան Ատրպատականի հայերի նկատմամբ: 1915 թ. հունվարի դրությամբ այդ վայրերից մոտ 50 հազար հայ էր ներգաղթել Այսրկովկաս:

Ռուսական կովկասյան բանակը 1915 թ. գարնանը գրավեց Թավրիզը, Վանը: Ռուսական զորամասերը, նրանց հետ նաև հայկական կամավորական ուժերը հասան Մուշի և Բիթլիսի մատույցները, բայց այս անգամ չկարողացան գրավել այդ շրջանները:

Անսպասելիորեն Վանի զորախումբը 1915 թ. հուլիսի կեսերին նահանջեց: Ռուսական զորքը օգոստոսի սկզբին վերստին նվաճեց նախկին դիրքերը, սակայն Բիթլիսի և Մուշի հայությունն այդ ընթացքում կոտորածների ենթարկվեց թուրքերի կողմից:

Կովկասյան ճակատում թվական շոշափելի առավելություն ապահովելով՝ ռուսական զորքերը 1915 թ. վերջից անցան վճռական գործողությունների: Ձմռան դաժան սառնամանիքի պայմաններում **1916 թ. փետրվարի 3-ին** նրանք գրավեցին Էրզրումը: Դա Կովկասյան ճակատում ռուսների ամենախոշոր հաղթանակն էր: Այնուհետև կովկասյան բանակը մի քանի ամսվա ընթացքում գրավեց **Տրապիզոն, Երզնկա** և **Բաբերդ** քաղաքները:

Այսպիսով՝ Ռուսաստանը 1916 թ. ամռան վերջին գրավել էր Անտանտի իր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ որոշված՝ Օսմանյան կայսրությունից իրեն հասանելիք տարածքները և շատ քիչ փոփոխություններով այդ դիրքերում մնաց մինչև 1917 թ. վերջը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է սկսվել Առաջին աշխարհամարտը: Ո՞ւմ միջև էր պատերազմը:
2. Ներկայացրե՛ք Օսմանյան կայսրության և Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը Մերձավոր Արևելքում:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ Թուրքիան դարձավ Գերմանիայի դաշնակիցը:
4. Ե՞րբ է սկսվել պատերազմը Կովկասյան ճակատում:
5. Ե՞րբ է տեղի ունեցել Սարիղամիշի ճակատամարտը: Պարզաբանե՛ք դրա գլխավոր արդյունքները:
6. Նշանակալի ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել Կովկասյան ճակատում 1915 թ.:
7. Հայկական ո՞ր քաղաքները գրավեց ռուսական բանակը 1916 թ. ընթացքում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ի՞նչ հետևանքներ ունեցավ ռուսական զորքի անսպասելի նահանջը Վանից:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատ, Անտանտ, Եռյակ (Քառյակ) դաշինք, Սարիղամիշի ճակատամարտ, Էնվեր փաշա, Վանի զորախմբի նահանջը

§ 26. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Կամավորական ջոկատների ստեղծումը: Ռուսաստանն ու Թուրքիան կարևորում էին հայերին պատերազմում իրենց կողմը ներգրավելու խնդիրը: Պատահական չէ, որ այդ օրերին հայ քաղաքական ղեկավար մարմինների առջև ծառացել էր դժվարագույն խնդիր՝ ինչ դիրքորոշում ունենալ, ինչպես գործել, որպեսզի առաջնահերթ ապահովվի հայության ֆիզիկական անվտանգությունը:

Անդրանիկ Օզանյան

Անդրկովկասի ռուսական իշխանությունները 1914 թ. աշնան սկզբներին դիմեցին գործնական քայլերի՝ թուրքերի դեմ պատերազմի դեպքում հայերի աջակցությունը ստանալու նպատակով: Կովկասի փոխարքա Վորոնցով–Դաշկովի և Հայոց ազգային բյուրոյի ներկայացուցիչների միջև տեղի ունեցան բանակցություններ, ձեռք բերվեց փոխադարձ համաձայնություն:

Այդ օրերին արևելահայության մեջ տիրում էր ընդհանուր ոգևորություն: Գրեթե ոչ ոք կասկած չուներ ռուսական բանակի արագ հաղթանակի հարցում: Հայրենասիրական բուռն վերելքի պայմաններում էլ **Ազգային բյուրոն** գլխավորեց հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքները: Ջոկատների ձևավորմամբ անմիջականորեն զբաղվում էր բյուրոյի կազմած գործադիր մարմինը՝ **Հովսեփ Արղությանի** ղեկավարությամբ:

Հայ քաղաքական հիմնական ուժերը կամավորական շարժման գլխավոր նպատակ հռչակեցին **հայկական ինքնավարության ստեղծումը**՝ Ռուսաստանի հովանու ներքո: Այդ նպատակի իրագործման համար որոշվեց ձևավորել հայկական զորաջոկատներ և ռուսական բանակի կողքին կռվել թուրքերի դեմ:

Երկիրն ազատագրելու կոչին արձագանքեցին հազարավոր հայեր: Աստիճանաբար Թիֆլիսում կենտրոնացան հայդուկային պայքարի քաջարի հրամանատարներն ու մարտիկները: Կամավորներ էին գալիս Ռուսաստանի ամենատարբեր վայրերից, Բալկաններից և հեռավոր ԱՄՆ–ից:

1914 թ. նոյեմբերի սկզբին արդեն ձևավորվել էին կամավորական չորս ջոկատներ: I ջոկատը ստեղծվեց **Անդրանիկի** հրամանատարությամբ: II ջոկատը ղեկավարեց **Դրոն**: III ջոկատի հրամանատար դարձավ

Այն ժամանակ գերիշխում էր այն տեսակետը, որ մի քանի ամսում կովկասյան ռուսական զորքը կգրավի Վանը, Էրզրումը, Բիթլիսը, և արևմտահայերը կազատագրվեն թուրքական տիրապետությունից: «Ինչի՞ս են պետք կոշիկ ու մուշտակ,— ասում էր Անդրանիկը,— զինվորին կուտամ չարուխ ու հալվա և հինգ օրեն Վան եմ»: Դեպքերից մի քանի տարի անց Ա. Խատիսյանը գրում է. «Այս մտայնությունը այնքան հզոր և տիրական էր, որ համակեց նույնիսկ չեզոքության կողմնակիցներին»:

Վարդանն իր զինակիցներով

Համազասպը, իսկ IV ջոկատինը՝ **Քեռին**: Պահեստային ուժերի հիման վրա շուտով կազմավորված V ջոկատի հրամանատարությունը ստանձնեց **Վարդանը**:

VI ջոկատի դրամական ապահովումը և կամավորների հավաքագրումն իրականացրեց Հնչակյան կուսակցությունը: Ջոկատի հրամանատարն էր կապիտան **Ա. Ջանփոլադյանը**:

Հայ կամավորները մարտի դաշտում: Առաջինը ռազմի դաշտ մեկնեց Անդրանիկի ջոկատը: Հայ կամավորները խիզախորեն և անձնուրացաբար էին մարտնչում թշնամու դեմ մղվող կատաղի մարտերում:

1915 թ. ապրիլի սկզբին Դրոյի, Համազասպի, Քեռու և Վարդանի ջոկատները **Քանաքեռում** միավորվեցին: Ստեղծվեց, այսպես կոչված, **Արարատյան գունդը**՝ Վարդանի գլխավորությամբ, որը շուտով մեկնեց ճակատ:

Քեռի

Ճանապարհին հայ բնակչությունը ամենուրեք խանդավառությամբ էր ընդունում Արարատյան գնդի զինվորներին: **Էջմիածնում** նրանց օրհնեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն: Բայազետ հասնելով՝ գունդը միացավ ռուսական զորաջոկատին, որն առաջադրանք էր ստացել՝ հարձակվելու Վանի ուղղությամբ:

Վանում հայերը 1915 թ. ապրիլի սկզբից հերոսական պայքար էին սկսել թուրք–քրդական գերակշիռ ուժերի դեմ: Հայոց գունդն անցավ հարձակման՝ Վանի պաշտպաններին օր առաջ օգնության հասնելու նպատակով: **Մայիսի 5–ին** 150–հոգանոց հայկական հեծյալ ջոկատն առաջինը մտավ հայոց հինավուրց մայ-

ռաքաղաքը: Հաջորդ օրը Վան հասան Արարատյան գունդը և ռուսական զորաջոկատը:

Հայ կամավորների միացյալ գունդը շուտով ազատագրեց նաև **Շատախի** և **Մոկսի** գավառները:

Այս ընթացքում Անդրանիկն իր ջոկատով մի շարք հաղթական կռիվներ մղեց թուրքական ուժերի դեմ: Հատկապես նշանավոր էր **1915 թ. ապրիլի 16–18–ի Դիլմանի ճակատամարտում** նրա ջոկատի տարած փայլուն հաղթանակը: Այնուհետև Անդրանիկն անցավ Վանի նահանգ և միացավ հայկական գնդին:

Սակայն Վանի ընդհանուր նահանջի ժամանակ հայ բնակչության հետ հարկադրված նահանջեցին նաև հայ կամավորները:

Միառժամանակ տիրած հիասթափությունից հետո կամավորական շարժումը 1915 թ. աշնանը կրկին թափ հավաքեց: Համալրվեցին նախկին վեց ջոկատները: Ստեղծվեց ևս 2 ջոկատ:

Կամավորների ընդհանուր թիվը 1915 թ. վերջին հասավ **10 հազարի**: Հայ կամավորները կրկին մեկնեցին ճակատային դիրքեր ու փառքով պսակեցին իրենց և ազգի պատիվը:

1916 թ. հունվար–փետրվարին հայկական ջոկատները ազատագրեցին **Խնուսը, Մուշը, Բիթլիսը**: Ռևանդուզի մոտ տեղի ունեցած կռիվներից մեկում՝

Հայ կամավորները ձգտում էին օր առաջ մտնելու հայկական նահանգները և ռուսական զորամասերի հետ ազատելու արևմտահայ եղբայրներին սպառնացող մեծ աղետից: «Պատերազմը, երևի, ամառը կվերջանա,— գրում էր Սիմոն Վրացյանը 1915 թ. փետրվարի վերջին, ՀՅԴ Ամերիկայի կոմիտեին ուղարկած նամակում,— և պատերազմից հետո կմեկնեմ Ամերիկա, ուր հավանաբար կլինեմ սեպտեմբերի մեջ... կմնամ մի քանի տարի, մինչև որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք... Հույս կա, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Անգլիան ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտ ապագայում կստեղծվի ազատ Հայաստան: Համենայն դեպս, այդ հույսով ենք ապրում բոլորս և միայն դրա համար աշխատում»:

Գևորգ Ե կաթողիկոսն օրհնում է հայ կամավորներին, 1915 թ. ապրիլ

1916 թ. մայիսի 15–ին, զոհվեց IV ջոկատի հրամանատար, նշանավոր հայդուկ **Քեռին**:

Հայ կամավորները կարևոր ներդրում ունեցան ռուսական զորքի տարած հաղթանակներում: Կամավորներից մոտ 800–ն իր կյանքը տվեց հանուն ապագա անկախ Հայաստանի:

Ռուսական իշխանություններն իրազեկ էին հայերի ինքնավարական և անկախական նպատակներին: Այդ պատճառով նրանք որոշեցին լուծարել հայկական ջոկատները: Հայոց ազգային բյուրոն, սակայն, կարողացավ դրանցից կանոնավոր զորամիավորներ ստեղծելու իրավունք ձեռք բերել:

Կամավորական 8 ջոկատները 1916 թ. ամռանը վերակազմավորվեցին **վեց հայկական հրաձգային գումարտակների**: Դրանք մտան ռուսական կանոնավոր զորքերի կազմը: **Այսպիսի շարունակություն գտավ հայկական ազգային զինուժի պատմությունը Կովկասյան ճակատում**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էին ռուսական և թուրքական կողմերը փորձում հայերին ներգրավել իրենց կողմը:
2. Ինչպե՞ս սկիզբ առավ ու ծավալվեց կամավորական շարժումը: Ո՞ր մարմինն էր ղեկավարում կամավորական շարժումը, իսկ ո՞րը՝ անմիջականորեն ջոկատների ստեղծումը:
3. 1914 թ. ո՞ր ջոկատները կազմվեցին. թվարկե՛ք դրանց հրամանատարական կազմը:
4. 1915 թ. վերջին որքա՞ն էր հայ կամավորների և ջոկատների թիվը:
5. Ի՞նչ ներդրում ունեցան հայ կամավորները Կովկասյան ճակատում: Ովքե՞ր աչքի ընկան:
6. Ի՞նչ նշանակություն ունեցավ հայ կամավորական շարժումը:
7. Ինչո՞ւ կամավորական ջոկատները վերածվեցին հրաձգային գումարտակների:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ի՞նչ դիրքորոշում կորդեգրեիք պատերազմի և կամավորական շարժման հարցում, եթե մասնակից լինեիք այն օրերի իրադարձություններին:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1914–1916 թթ. հայ կամավորական շարժում, Ազգային բյուրոյի գործադիր մարմին, Հովսեփ Արղության, կամավորական 8 ջոկատներ, Ա. Ջանփոլադյան, Ն. Աղբալյան, Արարատյան գունդ, Քանաքեռ, Դիլմանի ճակատամարտ, վեց հայկական հրաձգային գումարտակներ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴՐՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՑԱՐԻՆ

Պատերազմի առաջին օրերին Կովկասի փոխարքայության կյանքում տեղի ունեցավ արտասովոր իրադարձություն: 1914 թ. նոյեմբերի 26–ին Թիֆլիս ժամանեց Նիկոլայ II ցարը: Նա եկել էր՝ ոգևորելու տեղի ժողովուրդներին: Չորս օր Թիֆլիսում մնալուց հետո նա մեկնեց ճակատ, եղավ անգամ Սարիղամիշի ճակատային առաջավոր դիրքերում:

Փոխարքայության նստավայրում գտնվելու օրերին այցելեց նաև Թիֆլիսի քաղաքային հիվանդանոց՝ քաղաքապետ Ա. Խատիսյանի ուղեկցությամբ: Վերջինս ցարին տարավ այն հիվանդասենյակը, ուր պառկած էր Բայազետի կռիվներում վիրավորված, երկրորդ ջոկատի հրամանատար Դրոն: Այցի մասնակից գեներալ Յուդենիչը փայլուն գնահատական է տալիս հայ հրամանատարին: Ցարը, շրջվելով դեպի Դրոն, հարցնում է. «*Դուք որտե՞ղ եք ստացել ձեր զինվորական կրթությունը*»: Հետևում է պատասխանը. «*Հեղափոխական գործի մեջ, Ձե՛րդ մեծություն*»: Նման պատասխանից ցարը մի պահ այլայլվում է («հեղափոխություն» բառը միշտ էլ նրան սարսափեցնում էր), սակայն Դրոն կարողանում է շտկել իրավիճակը. «*Մեր հեղափոխական գործը կատարվում էր Թուրքիայում*»: Ռուսական ինքնակալը հանդարտվում է, ապա հայ ռազմիկի «*շապկին կպցնում Գեորգիևյան խաչը*»:

(Ըստ Ա. Խատիսյանի հուշերի)

§ 27. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱԿ–ի գլխավոր գրասենյակը Նյու Յորքում

«Ցեղասպանություն» հասկացությունը: XX դարի սկզբներին միջազգային իրավունքի մեջ դեռ չկար «ցեղասպանություն» հասկացությունը: Կիրառվում էին «կոտորած», «ջարդ», «եղեռն» և այլ եզրեր: Միայն **1948 թ. դեկտեմբերի 9–ին Միավորված ազգերի կազմակերպության ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին»** կոնվենցիայում տրվեց դրա իրավական ձևակերպումը:

Ըստ այս կարևոր փաստաթղթի՝ ցեղասպանություն են համարվում այն գործողությունները, որոնք կիրառվում են որևէ ազգի կամ կրոնական համայնքի լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով: Այդ գործողություններից են՝ «*ա) խմբի կամ համայնքի անդամների սպանությունը, բ) նրանց մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում հասցնելը, գ) երեխաների հանձնումը մարդկային մի խմբից մյուսին...*» և այլն:

Հայության նկատմամբ թուրքերը իրականացրել են ցեղասպանությունը որակող բոլոր գործողությունները:

Հայերի ցեղասպանության երիտթուրքական պետական ծրագիրը: Երիտթուրքերը շարունակեցին հայերի ոչնչացման աբդուլհամիդյան ծրագիրը: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը այդ ծրագիրը հաստատել էր դեռ 1910–1911 թթ. Սալոնիկում կայացած իր գաղտնի ժողովներում: Որոշվել էր ոչնչացնել նաև հույներին, ասորիներին, իսկ ոչ թուրք մուսուլմաններին՝ թուրքացնել:

Այսպիսով՝ արևմտահայերի ոչնչացման ծրագիրը պետականորեն մշակվել ու նախապատրաստվել էր թուրքական կառավարող ուժերի կողմից մինչև Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի պաշտոնապես մտնելը:

1914 թ. հոկտեմբերին երիտթուրք առաջնորդներից կազմվեց **Երեքի գործադիր կոմիտե**: Դրան հանձնարարվեց իրագործել հայերի բռնագաղթն ու կոտորածները: Կոտորածների անմիջական իրականացման համար ստեղծվեց նաև, այսպես կոչված, **«Հատուկ կազմակերպությունը»**, որի մեջ ընդգրկվեցին բանտերից ազատված և քրեական անցյալ ունեցող հանցագործ տարրերը:

Մեծ եղեռնը: Հայերի ոչնչացման թուրքական պետական ծրագիրն աշխարհամարտի առաջին երկու տարիներին գործադրվեց ամբողջ արևմտահայության նկատմամբ: **Հայոց ցեղասպանության այդ փուլը համայն մարդկությանը հայտնի է Մեծ եղեռն** անունով:

Առաջին հերթին որոշվել էր ոչնչացնել կռվելու ունակ հայ երիտասարդությանը: Զորահավաքի ընթացքում օսմանյան բանակ էր զորակոչվել 18–45 տարեկան ավելի քան **300 հազար հայ**: 1914 թ. վերջից սկսվեց նրանց ճնշող մեծամասնության զինաթափումը, տեղափոխումը թիկունք, այնուհետև ոչնչացումը: Սարիղամիշի ճակատամարտից հետո արգելվեց նաև հայ զինծառայողներին նշանակել հրամանատարական պաշտոններում, նաև՝ ծառայել ռուս–թուրքական ճակատում:

Մյուս քայլով երիտթուրքերը ձեռնամուխ եղան հայության ազգային, քաղաքական և հոգևոր ղեկավար գործիչների վերացմանը:

Առաջին ձերբակալությունները տեղի ունեցան տակավին **1914 թ. հոկտեմբերին**: Զեյթունում դաժանորեն խոշտանգվելով սպանվեց նշանավոր գործիչ **Նազարեթ Չավուշը**:

Հայ ղեկավար ուժերին ու մտավորականությանը գլխավոր և անսպասելի հարվածը հասցվեց հենց կայսրության մայրաքաղաքում: **1915 թ. ապրիլի 11–ին** (նոր տոմարով՝ **ապրիլի 24–ին**) և հաջորդող մի քանի օրերին Կ. Պոլսում ոստիկանությունը, ըստ թուրքական պաշտոնական տվյալների, ձերբակալեց

Եղերական տարագրության ճանապարհին

Դանիել Վարուժան

2300–ից ավելի մարդու: Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ **Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը,** բանաստեղծներ **Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը,** երգահան **Կոմիտասը,** հայտնի գիտնականներ և մշակույթի այլ գործիչներ: Մայրաքաղաքից աքսորված հայ մտավորականների մեծամասնությունը դաժանորեն սպանվեց աքսորի ճանապարհին:

1915 թ. ապրիլի 15–ին կայսրության նահանգային պաշտոնյաներին ուղարկվեց երիտթուրք պարագլուխներ Թալեաթի, Էնվերի և Նազըմի գաղտնի հրամանը, որով հրահանգվում էր խստորեն գործադրել հայերի ոչնչացման ծրագիրը:

Կ. Պոլսի կենտրոնական հրապարակներից մեկում 1915 թ. հունիսի 15–ին կախաղան բարձրացվեցին Հնչակյան կուսակցության 20 գործիչներ՝ **Փարամազի** գլխավորությամբ:

Ապա սկսվեց **ցեղասպանական մեծածավալ գործողությունը**՝ համատարած կոտորածներ, բռնի տեղահանություն և աքսոր:

Հայ տարագիրները քշվեցին Միջագետքի և Սիրիայի համակենտրոնացման ճամբարներ, հատկապես՝ Դեր Զոր: Հայերի ցեղասպանությունը շարունակվեց նաև հաջորդ տարվա ընթացքում: Աքսորավայրերում ողջ մնացած 600 հազար հայ տարագիրների կեսը նույնպես ոչնչացվեց:

Քրդերի զինված հրոսակախումբ, 1915 թ.

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

1915 թ. հայերի բռնագաղթի ուղիները

1915 թ. ապրիլի 24-ին սկսված արնանահեղ մասսակրությունների և հասարակական գործիչների աքսորի ուղիներն ու նահանջելու վայրերը

Բռնի տեղահանված հայերի հավաքավերաբնակեցման և ոչնչացման հիմնական ճամբարները (շրջանակներով չափերը համեմատական են ապանված և բռնի տեղահանված հայերի քանակին)

Պատերազմների սահմանները 1914 թ.

Շրջաններ, որոնց հայ բնակչությունն ենթարկվում գաղթողությունների շնորհիվ, կիսկից Մեծ եղեռնից

Սև ծով

Սևանա լիճ

Ուրմիո լիճ

Վանա լիճ

Գրիգոր Լուսավորչի

Հայոց Մեծ Եղեռնը

Գրիգոր Զոհրապ

Այսպիսով՝ հայերի **Մեծ եղեռնը փաստացի սկսվել է 1914 թ. հոկտեմբերի վերջին և շարունակվել մինչև 1916 թ. ամառը**:

Մեծ եղեռնի հետևանքները: Հայոց ցեղասպանությունը **համաշխարհային քաղաքակրթության դեմ ուղղված մեծագույն ոճրագործություններից է**:

Ցեղասպանության **ծանրագույն հետևանքը** մեր հայրենիքի մեծագույն մասի՝ Արևմտյան Հայաստանի հայաթափումն էր, **հայերի հայրենազրկումը**: Ցեղասպանությունն իրագործվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև թուրքական պետության բոլոր հայաբնակ վայրերում: Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս նահանգներում ապրող ավելի քան 2,5 միլիոն հայերից **1,5 միլիոնը** դարձավ Մեծ եղեռնի զոհ:

Եղեռնից փրկված արևմտահայերի մեծ մասը սփռվեց աշխարհով մեկ: Նրանց մի մասը՝ մոտ 250 հազար մարդ, հիմնականում՝ կանայք և երեխաներ, մնաց բուն երկրում և մահմեդականացվեց: Եղեռնից փրկվածներից մոտ 300 հազար մարդ ապաստան գտավ Արևելյան Հայաստանում և Այսրկովկասի տարբեր շրջաններում:

Այսպիսով՝ ցեղասպանության մյուս հետևանքը **հայկական սփյուռքի** ձևավորումն էր: Հարյուրհազարավոր հայեր ստիպված էին բնակություն հաստատել աշխարհի տարբեր երկրներում:

Հայերի բռնի տարհանում

Վիթխարի էր նաև հայ ժողովրդի **նյութական կորուստը,** ժամանակի դրամով հաշված՝ առնվազն 20 միլիարդ ֆրանկ ոսկի: Հայերի շարժական և անշարժ գույքն անցավ թուրքական իշխանություններին կամ թալանվեց ու յուրացվեց թուրքերի ու քրդերի կողմից:

Նպատակադրված ոչնչացվեցին հայկական պատմամշակութային հազարավոր արժեքներ, քանի որ դրանք նյութական վկաներն էին մարդկության բնօրրաններից մեկում՝ Հայաստանում հազարամյակներ ապրած հայ ազգի: Հայկական հազարավոր եկեղեցիներ ու վանքեր ավերվեցին կամ կողոպտվեցին: Վերացվեցին 1500 հայկական դպրոցներ ու վարժարաններ: Ոչնչացվեցին 20 հազարից ավելի հայկական ձեռագրեր և հնատիպ գրքեր:

Ցեղասպանությունն իր հետքն է թողել և շարունակում է թողնել հայության սերունդների կենսագործունեության, բնավորության, ազգային նկարագրի և աշխարհայացքի ձևավորման վրա:

Մինչ օրս Թուրքիան չի դատապարտել և ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Իսկ **Մեծ եղեռնից փրկված հայերի սերունդները և ընդհանրապես ամբողջ հայությունը շարունակում են պայքարել ոչ միայն ճանաչման, այլև արժանի հատուցման և ամբողջական հայրենիքի վերականգնման համազգային նպատակի իրագործման համար**:

Կոմիտաս
Նկարիչ՝ Եղիշե Թադևոսյան,
1935 թ.

Հայ որբեր

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ո՞ր փաստաթղթով է տրվել ցեղասպանության իրավական ձևակերպումը: Ո՞ր գործողություններն են որակվում որպես ցեղասպանություն:
2. Ուրիշ ի՞նչ ժողովուրդներ գիտեք, որոնց նկատմամբ երբևէ իրականացվել է ցեղասպանություն:
3. Ե՞րբ և որտե՞ղ էր հաստատվել հայերին ոչնչացնելու երիտթուրքական պետական ծրագիրը:
4. Ե՞րբ է կազմվել Երեքի կոմիտեն: Ի՞նչ դեր է խաղացել այն հայկական կոտորածների իրագործման մեջ:
5. Ե՞րբ է սկսվել և ի՞նչ փուլերով է ընթացել Մեծ եղեռնը:
6. Ե՞րբ սկսվեցին համատարած կոտորածներն ու տեղահանությունը: Որքա՞ն հայ զոհվեց Մեծ եղեռնի տարիներին:
7. Պարզաբանե՛ք Հայոց ցեղասպանության հետևանքները:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են Մեծ եղեռնի դասերը:
2. Ի՞նչ նշանակություն կունենա Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցեղասպանություն, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիա, հայերի ոչնչացման երիտթուրքերի պետական ծրագիր, Թալեաթ, Նազըմ, Հայոց մեծ եղեռն, Գ. Զոհրապ, Վարդգես, Կոմիտաս, 1,5 մլն զոհ, Մեծ եղեռնի հետևանքներ, Հայոց ցեղասպանության ճանաչում և հատուցում

§ 28. 1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Վանի փառապանծ հաղթանակը: Արևմտյան Հայաստանում և կայսրության հայկական մի շարք բնակավայրերում հայերը կարողացան համախմբվել ու զենքը ձեռքերին արժանապատվորեն պայքարել թուրք և քուրդ ջարդարարների դեմ:

Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան **Վանի նահանգում**: 1915 թ. ապրիլ–մայիսին կատաղի մարտեր ընթացան **Շատախ** և **Մոկս գավառներում**: Տեղի հայությունը դիմադրեց մինչև հայ կամավորների օգնության հասնելը:

Հզոր ինքնապաշտպանություն կազմակերպվեց **Վան քաղաքում,** որտեղ ապրում էր մոտ 22,5 հազար հայ: Քաղաքի հայությունը կենտրոնացած էր երկու թաղամասերում՝ **Այգեստան և Քաղաքամեջ,** որոնք միմյանցից կտրված էին թուրքական թաղամասով:

Դիմադրության կազմակերպումը դժվարացել էր նաև այն պատճառով, որ նահանգի մի քանի տասնյակ հազար հայեր ապաստանել էին Վանում՝ խուսափելով կոտորածից: Վանեցիներին այլ ելք չէր մնում, քան զինված պայքարի դիմել:

Այգեստանում ստեղծվեց զինվորական մարմին: Նրա կազմում էին **Արմենակ Եկարյանը** (ղեկավար), **Արամ Մանուկյանը** և ուրիշներ: Իսկ Քաղաքամեջում ձևավորվել էր տեղի զինվորական մարմինը՝ **Հայկակ Կոսոյանի** ղեկավարությամբ:

Վանի ինքնապաշտպանությունն սկսվեց **ապրիլի 7–ին** և տևեց մոտ մեկ ամիս: Կռիվներին մասնակցում էին նաև կանայք, աղջիկներ և պատանիներ: Բոլորին համակել էր այն գաղափարը, որ լավ է մեռնել, քան հանձնվել:

Իմանալով ռուսական զորքի և հայ կամավորների առաջխաղացման մասին՝ թուրքերը փախուստի դիմեցին: **Մայիսի 5–ին** Վան մտան առաջին հայ կամավորները:

1915 թ. մայիսի 7–ին Վանի նահանգապետ նշանակվեց ազգային–հեղափոխական ականավոր գործիչ **Արամ Մանուկյանը**: Ռուսական զորքի հուլիսյան նահանջի պատճառով Վանի հայկական իշխանությունը դադարեց գործելուց: Վանի փորձը, սակայն, Ա. Մանուկյանն օգտագործեց Երևանի նահանգում

Արմենակ Եկարյան

Թշնամուց առգրավված թնդանոթ

Վանի հայկական վարչությունը Արամ Մանուկյանի (ձախից առաջինը) գլխավորությամբ

1918 թ. առաջին կեսին՝ հայոց անկախ պետականության վերականգնման ժամանակահատվածում:

Շապին Կարահիսար: Հայաստանի հյուսիս–արևմուտքում գտնվող այս քաղաքի հայկական թաղամասի դիմադրությունը սկսվեց **հունիսի 3–ին**: Տեղի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց զինվորական խորհուրդ, որը գլխավորում էր **Ղուկաս Տեովլեթյանը**: Շուտով դիմադրության վայր ընտրվեց քաղաքի հարևանությամբ գտնվող հինավուրց բերդը, ուր պատսպարվեցին 5 հազարից ավելի հայեր:

Պաշտպանները քաջաբար հետ մղեցին թշնամու բոլոր գրոհները: Հունիսի վերջին պարենի, ջրի, դեղորայքի պակասի պատճառով իրադրությունը դարձավ սպառնալից: Զինվորական խորհուրդը վճռեց՝ քանի դեռ սովը ուժասպառ չի արել բոլորին, ճեղքել հակառակորդի պաշարումը: **Հունիսի 29–ի** ուշ գիշերը մոտ 1000 հոգուց բաղկացած հայերի ջոկատը գրոհեց թուրքական ուժերի վրա և ճեղքեց շրջափակումը: Ներխուժելով բերդ՝ թուրքերը կոտորեցին տեղում մնացած հայերին:

«Մուսա լեռան քառասուն օրը»: Հայ ժողովրդի անձնազոհ պայքարի փառահեղ օրինակ է Մուսա լեռան ինքնապաշտպանությունը: Հուլիսի վերջերին թուրքական իշխանությունները պահանջում են տարագրվել Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին ընկած **Սուեդիա** գավառակի հայությանը: Տեղի զուտ հայկական վեց գյուղերի 4200–ից ավելի բնակիչներ վճռում են չենթարկվել և բարձրանալ մոտակա Մուսա լեռը: Կազմվում է պաշտպանության մարմին՝ **Տիգրան Անդրեասյանի** գլխավորությամբ:

Օգոստոսի սկզբից սկսվում են համառ և արյունալի կռիվներ: Թուրքական զորքի թիվը եռապատկվում

է՝ հասնելով 20 հազարի: Լիակատար շրջափակման մեջ գտնվող հայերի համար փրկության միակ ելքը Միջերկրական ծովն էր, որտեղ պարեկություն էին անում բրիտանական և ֆրանսիական ռազմանավերը:

Ֆրանսիական «**Գիշեն**» հածանավը սեպտեմբերի 5–ին անսպասելի հայտնվում է Մուսա լեռան ափամերձ ջրերում: Կապ է հաստատվում նավապետի հետ, որը խոստանում է մի քանի օրից գալ օգնության: **Սեպտեմբերի 10–ին** հասնում է բաղձալի օգնությունը, իսկ երկու օր հետո սկսվում է մարդկանց տարհանումը: Փրկված 4058 հայերը տեղափոխվում են Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը:

Սուետիահայերի հերոսական պայքարին է նվիրված հայտնի գրող **Ֆրանց Վերֆելի** «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, որը թարգմանվել է 30 լեզուներով:

Ուրֆա: Երիտթուրք ջարդարարների դեմ լուրջ դիմակայություն եղավ նաև **Ուրֆայում** (Եդեսիա): Քաղաքի 100 հազար բնակիչներից 35 հազարը հայեր էին: Թուրքերը վաղօրոք մշակած ծրագրով փորձեցին անակնկալի բերել հայերին, բայց չստացվեց: Հայկական եկեղեցու զանգերի ղողանջը հայերին զենքի կոչեց: **Սեպտեմբերի 29–ից** սկսվեց անձնազոհ պայքարը թուրքերի մի քանի անգամ ավելի ուժերի դեմ:

Կազմվեց զինվորական խորհուրդ՝ **Մկրտիչ Յոթնեղբայրյանի** գլխավորությամբ: Անհավասար կռվում շատերը զոհվում են, իսկ ծանր վիրավոր Մ. Յոթնեղբայրյանը ոսոխի ձեռքը չընկնելու համար ինքնասպան է լինում:

Ուրֆացիները հերոսաբար դիմադրում են մինչև նոյեմբերի կեսերը: Նույնիսկ թուրք հրամանատարը խոստովանում է. «*Ինչ կլիներ մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆա մեր դեմ այսպես ծառանար*»:

Ֆրանսիական «Գիշեն» հածանավը



Սողոմոն Թեհլիրյան

Տեսնելով, որ թուրքական կառավարությունը և դաշնակից երկրները հետևողական չեն երիտթուրք պարագլուխներին պատժելու հարցում՝ դատավճռի իրականացմանը ձեռնամուխ եղան անձնազոհ հայ վրիժառուները: Նրանք գործում էին ՀՅԴ–ի կողմից 1919 թ. խիստ գաղտնի պայմաններում կյանքի կոչված «**Նեմեսիս**» ծրագրի շրջանակներում:

1921 թ. մարտի 15–ին Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանն իրականացրեց Մեծ եղեռնի ամենագլխավոր պատասխանատու Թալեաթի մահապատիժը: Գերմանական դատարանը, անաչառորեն քննելով հարցը, Հայոց ցեղասպանության հանգամանքները, Ս. Թեհլիրյանին արդարացրեց և ազատ արձակեց: Պատժվեցին նաև նախկին վարչապետ Սայիդ Հալիմը, Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալը և Էնվերը: Այսպես ի կատար ածվեց Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուների դատավճիռը:

Այն դժնդակ օրերին հայ ժողովուրդը, զենքի դիմելով, կարողացավ պայքարել թուրք ոճրագործների դեմ նաև Մուշում, Սասունում և բազմաթիվ այլ վայրերում: **Այսպիսով՝ զինված դիմադրության արդյունքում տասնյակ հազարավոր հայեր փրկվեցին**: Իսկ Վանի պաշտպանների փայլուն հաղթանակի շնորհիվ Վասպուրականում թեև կարճատև, բայց գոյություն ունեցավ **ազգային տեղական իշխանություն՝ երեք տարի հետո վերականգնված հայոց անկախության ավետաբերը**:

Պատմությունը ցույց է տալիս, որ հայության ուժը միասնական ու միակամ լինելու մեջ է: Յուրաքանչյուր հայ միշտ պետք է պատրաստ լինի պաշտպանելու հայրենիքն ու ազգը: Սա է Մեծ եղեռնի գլխավոր դասերից մեկը:

Յոհաննես Լեփսիուս

Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին քայլերը: Հայերի և Հայաստանի նկատմամբ թուրքերի իրականացրած ոճրագործությունը դատապարտեց ժամանակի առաջադեմ մարդկությունը ի դեմս նշանավոր բազմաթիվ գործիչների՝ **Յ. Լեփսիուս, Ջ. Բրայս, Ֆ. Նանսեն, Վ. Բրյուսով, Վ. Վիլսոն, Հ. Մորգենթաու** և ուրիշներ:

Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Անտանտի երկրները թուրքական նոր կառավարությունից պահանջեցին դատական գործ հարուցել երիտթուրքերի դեմ: Հայերի կոտորածների վերաբեր-

յալ հավաքվեցին մեղադրական բազմահազար ապացույցներ:

Անգամ թուրքական դատարանը հարկադրված էր ընդունել երիտթուրքերի ծանր հանցանքները: Առաջին դատավճիռն արձակվեց **1919 թ. հուլիսի 5-ին**: Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և ուրիշներ դատապարտվեցին մահվան, չնայած որ այդ պահին գտնվում էին երկրից դուրս: Մյուս հանցագործները ազատազրկվեցին տարբեր ժամկետներով:

Այսպիսով՝ **Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին լուրջ իրավական քայլը կատարվել է Մեծ եղեռնից մի քանի տարի անց՝ հենց թուրքական իշխանությունների կողմից**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Վանի հերոսամարտի ընթացքը և արդյունքները:
2. Ե՞րբ է սկսվել Շապին Կարահիսարի ինքնապաշտպանությունը: Ո՞վ էր գլխավորում այն և ի՞նչ ավարտ ունեցավ:
3. Ե՞րբ է սկսվել և ավարտվել սուետիահայերի հերոսական դիմադրությունը: Փորձե՛ք պարզել նրանց հաջողության պատճառները:
4. Ներկայացրե՛ք Ուրֆայի հայության ինքնապաշտպանությունը: Ո՞վ էր գլխավորում այն:
5. Վերհանե՛ք 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի պատմական նշանակությունը:
6. Որո՞նք էին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը միտված առաջին քայլերը:
7. Ի՞նչ վճիռ կայացրեց թուրքական դատարանը Մեծ եղեռնի կազմակերպիչների հանդեպ:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1915 թ. հերոսամարտեր, Վանի նահանգապետ Արամ Մանուկյան, Արմենակ Եկարյան, Հայկակ Կոսոյան, Ղուկաս Տեովլեթյան, Տիգրան Անդրեասյան, Մկրտիչ Յոթնեղբայրյան, Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին լուրջ իրավական քայլ, Յոհաննես Լեփսիուս, Սողոմոն Թեհլիրյան

§ 29. ԱԶԳԱՅԻՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔԸ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ

Միապետության անկումը Ռուսաստանում: 1917 թ. փետրվարի վերջին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, որի արդյունքում տապալվեց ցարական միապետությունը: Երկիրը բռնեց ժողովրդավարական հանրապետության ձևավորման ուղին: Մայրաքաղաք Պետրոգրադում մարտի 2–ին կազմվեց **Ժամանակավոր կառավարություն,** որը բարձրագույն գործադիր իշխանության նոր մարմինն էր Ռուսաստանում:

Այս հեղափոխության ալիքը նույնպես հասավ Անդրկովկաս, տարածվեց Հայաստանում և ռուս–թուրքական ճակատում: Բոլորը ողջունում էին հեղափոխության հաղթանակը, պահանջում հաստատել իրական ազատություններ և իրավունքներ:

Վերացվեց Կովկասի փոխարքայությունը: Փոխարենը **1917 թ. մարտի 9–ին** կազմվեց երկրամասի գործադիր իշխանության նոր մարմին՝ **Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ԱՀԿ)**: ԱՀԿ–ում հայերի ներկայացուցիչը **Միքայել Պապաջանյանն** էր: Իր ողջ գործունեության ընթացքում ԱՀԿ–ն այդպես էլ երկրամասում չդարձավ հեղինակավոր իշխանություն:

Ժամանակավոր կառավարությունը և Արևմտյան Հայաստանը: Հայկական հարցում Ռուսաստանի նոր իշխանության որոշ քայլեր լավատեսական հույսեր արթնացրին հայ քաղաքական շրջանակներում և արևմտահայ գաղթականների մեջ:

1917 թ. ապրիլի 26–ին հրապարակվեց Ժամանակավոր կառավարության որոշումը Արևմտյան Հայաստանի և գրավված մյուս վայրերի կառավարման նոր ձևի մասին: Առաջին անգամ Օսմանյան կայսրությունից նվաճված հայկական տարածքները միավորվեցին որպես վարչական առանձին միավոր՝ **Թուրքահայաստան** անվանումով: Այն կազմված էր երեք մարզերից (Էրզրում, Խնուս, Վան): Արևմտահայաստանը (Թուրքահայաստան) կառավարելու էր գեներալ–կոմիսարը: Կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ նշանակվեց ազգային–քաղաքական հայտնի գործիչ **Հակոբ Զավրյանը**: Տարածքը դրվեց Ժամանակավոր կառավարության անմիջական ենթակայության ներքո:

Ռուսական նոր իշխանությունը սկսեց հայկական մարզերում հայանպաստ քաղաքականություն իրականացնել՝ ի տարբերություն ցարիզմի հակահայ քաղաքականության: Թույլատրվեց բոլոր հայերին վերաբնակվելու հիշյալ մարզերում:

Արևմտահայերի ազգային խորհուրդը: Արևմտահայաստանի վերածննդի սկիզբը: Ինչպես գիտեք, Անդրկովկասում ապաստան էին գտել մոտ 300 հազար արևմտահայ գաղթականներ: Օգտվելով Ռուսաստանում հաստատված քաղաքական ազատությունից՝ արևմտահայերը ստեղծեցին ազգային մարմիններ:

Երևանում 1917 թ. մայիսին կայացավ **արևմտահայերի առաջին համագումարը**: Հայրենիքի վերաբնակեցման, Հայաստանում ազգային վարչություն կազմակերպելու, կրթական, տնտեսական և այլ հարցերի վերաբերյալ ընդունվեցին կարևոր որոշումներ:

Ընտրվեց ղեկավար մարմին՝ **Արևմտահայ ազգային խորհուրդ,** որի նախագահն էր **Վահան Փափազյանը (Կոմս)**:

Էրզրումում, Վանում և Խնուսում ձևավորվեցին և սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական մարմինները: 1917 թ. ընթացքում նրանք մեծ գործ կատարեցին ավերված բնակավայրերը վերականգնելու և վերաբնակեցնելու ուղղությամբ:

Աշնան վերջերին հայկական մարզերում մոտ 300 հազար հայ բնակչություն կար: Տեղերում կազմակերպվեցին ժողովրդական միլիցիայի ջոկատներ ու կամավորական խմբեր՝ բնակչության անվտանգությունն ապահովելու և կարգուկանոն հաստատելու նպատակով:

Հայոց ազգային խորհրդի ստեղծումը: Հեղափոխական Ռուսաստանի ազգային երկրամասերում կազմավորվում էին ազգային տարաբնույթ մարմիններ, որոնք տնօրինում էին սեփական ժողովրդին հուզող կարևոր խնդիրների լուծումը: Այդ գործընթացը դրսևորվեց նաև հայկական միջավայրում. ստեղծվեցին Արևմտահայերի ազգային խորհուրդ, Հայ զինվորական միություն և այլն: Հերթը հասավ արևելահայերի կենտրոնական մարմնի ստեղծմանը:

1917 թ. աշնանը Թիֆլիսում տեղի ունեցավ արևելահայերի համագումարը: Մասնակցում էին քա-



Վահան Փափազյան

Կովկասյան ռուսական զորքի ջոկատի պետ գեներալ Նազարովը նոր նշանակում էր ստացել: Հրաժեշտի հանդիպման ժամանակ նա իր ջոկատի կազմում կռված IV հայկական գումարտակի զինվորներին ասաց. «Իմ փառապանծ հրաձիգ հայեր: Մեկ տարուց ավելի է, ինչ մենք միասին խփում ենք թուրքերին, ձեր փառահեղ մարտերի ժամանակ ես անձամբ համոզվեցի հայ զինվորների գերհերոսական հատկությունների մեջ: Կեցցե՛ ազգը, որն ունի նման պանծալի արծիվներ»:

Ըստ Մոսկվայում լույս տեսնող «Արմանսկի վեստնիկ» շաբաթաթերթի 1917 թ. հուլիսի 30–ի համարի նյութերի



Ավետիս Ահարոնյան

ղաքական և հասարակական տարբեր կազմակերպությունների 228 պատգամավորներ, որոնց կեսից ավելին դաշնակցականներ էին: Համագումարը որոշումներ ընդունեց Կովկասյան ճակատի պաշտպանության, հայկական ազգային զորամասերի ստեղծման և այլ հրատապ հարցերի մասին:

Համագումարի ավարտից քիչ անց ձևավորվեց 15–հոգանոց գործադիր մարմին՝ **Հայոց ազգային խորհուրդը**: Խորհրդի նախագահն էր **Ավետիս Ահարոնյանը**, քարտուղարը՝ **Նիկոլ Աղբալյանը**: Ազգային խորհրդի ստեղծումով ավարտվեց Հայոց ազգային բյուրոյի (1912–1917 թթ.) գործունեությունը:

Հայոց ազգային խորհրդի նստավայրը Թիֆլիսն էր: Կովկասի հայաբնակ քաղաքներում և Հայաստանի վարչական կենտրոններում ձևավորվեցին խորհրդի տեղական մարմինները:

Հայոց ազգային խորհուրդը շուտով դարձավ հայության կենսական խնդիրները տնօրինող գլխավոր մարմինը:

Սահմանափոխության հիմնախնդիրը Անդրկովկասում: Երկրամասում ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու և համերաշխություն հաստատելու գործում մեծ նշանակություն էին ստացել արդարացի սահմանափոխության իրագործումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ **զեմստվոների** ստեղծումը:

Անդրկովկասը Ռուսաստանի այն շրջաններից էր, որտեղ զեմստվոներ դեռևս չէին կազմավորվել: Դրա ներդրումը նախ պահանջում էր փոփոխել երկրամասի վարչական սահմանները: Նախկին փոխարքայության տարածքում կիրառելով «*բաժանի՛ր, որ տիրես*» քաղաքականությունը՝ ցարիզմը միտումնավոր անարդարացի վարչական (նահանգներ, գավառներ, գավառակներ) սահմանաբաժանում էր կատարել:

Նիկոլ Աղբալյան

Հետփետրվարյան ժամանակաշրջանում վրացի, հայ և թաթար քաղաքական ուժերը փորձեցին փոխհամաձայնությամբ կարգավորել երկրամասի աղավաղված ազգագրական–վարչական քարտեզը: Այդ գործում ամենից ավելի շահագրգռված էին հայերը, քանի որ ավելի շատ անտեսվել և ոտնահարվել էին իրենց իրավունքները:

Բազմաթիվ բուռն քննարկումներից ու վեճերից հետո մշակվեց վարչական սահմանափոխության վերա-

բերյալ Ժամանակավոր կառավարության մի ծրագիր: Ըստ դրա՝ Անդրկովկասի հայաբնակ գավառներից կազմվելու էին 3 հայկական նահանգներ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի և Գանձակի՝ 64 000 քառ. կմ ընդհանուր տարածքով: Արևելահայերի համագումարը, քննելով հարցը, հավանություն էր տվել այդ ծրագրին:

Սակայն հետագայում՝ բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, Անդրկովկասի սահմանափոխության հարցում գերակշռեց վրաց–մահմեդական համագործակցությունը, և կառավարական ծրագիրն այդպես էլ չիրագործվեց: Ավելին՝ **սահմանափոխության հիմնախնդիրը Այսրկովկասում մինչ օրս չի ստացել իր արդարացի լուծումը**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է տապալվել միապետությունը Ռուսաստանում: Իշխանության ի՞նչ մարմիններ ստեղծվեցին Պետրոգրադում և Թիֆլիսում:
2. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Ժամանակավոր կառավարությունը Հայկական հարցի լուծման ուղղությամբ: Համեմատե՛ք հայերի նկատմամբ ցարիզմի և Ժամանակավոր կառավարության վարած քաղաքականությունը:
3. Ե՞րբ և որտե՞ղ է հրավիրվել արևմտահայերի առաջին համագումարը: Ո՞վ էր գլխավորում Արևմտահայ ազգային խորհուրդը:
4. Հայաստանի վերականգնման նպատակով ի՞նչ աշխատանքներ տարվեցին 1917 թ. ընթացքում:
5. Ե՞րբ և որտե՞ղ է հրավիրվել արևելահայերի համագումարը:
6. Ո՞վ էր գլխավորում Հայոց ազգային խորհուրդը: Հայության կյանքում ի՞նչ դերակատարում ստանձնեց Ազգային խորհուրդը:
7. Ի՞նչ էր նախատեսում Անդրկովկասի վարչական սահմանափոխության կառավարական ծրագիրը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ էին հայերը շահագրգռված երկրամասում սահմանափոխություն կատարելու հարցում:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխություն, Ժամանակավոր կառավարություն, Անդրկովկասյան հատուկ կոմիտե, Միքայել Պապաջանյան, «Թուրքահայաստան», Հակոբ Զավրյան, Արևմտահայ ազգային խորհուրդ, Վահան Փափազյան (Կոմս), Հայոց ազգային խորհուրդ, Ավետիս Ահարոնյան, Նիկոլ Աղբալյան

§ 30. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անդրկոմիսարիատի ստեղծումը: Բոլշևիկների կուսակցությունը **1917 թ. հոկտեմբերի 25–ին** (նոր տոմարով՝ նոյեմբերի 7–ին) Պետրոգրադում իրականացրեց պետական հեղաշրջում և իր ձեռքը վերցրեց իշխանությունը: Վ. Լենինի գլխավորությամբ ստեղծվեց նոր կառավարություն՝ **Ժողովրդական կոմիսարների խորհուրդ (ԺԿԽ)**: Այսպես սկսվեց Ռուսաստանի պատմության խորհրդային ժամանակաշրջանը:

Այսրկովկասի գրեթե բոլոր քաղաքական ուժերը դատապարտեցին բոլշևիկյան հեղաշրջումը՝ այն համարելով դավաճանություն Փետրվարյան հեղափոխության նպատակներին և ժողովրդավարությանը:

Ռուսաստանի մայրաքաղաքում տեղի ունեցած իշխանափոխությամբ երկրամասում առաջացավ քաղաքական ճգնաժամ: Այն հաղթահարելու նպատակով Թիֆլիսում 1917 թ. նոյեմբերին գումարվեց տեղի քաղաքական և ռազմական ուժերի ներկայացուցիչների խորհրդակցություն: Արդյունքում՝ **նոյեմբերի 15–ին** կազմավորվեց գործադիր նոր մարմին, որը կոչվեց **Անդրկովկասյան կոմիսարիատ**:

Կոմիսարիատում գլխավոր պաշտոնները զբաղեցնում էին մենշևիկներն ու էսէռները, 12 կոմիսարներից 3–ը հայ էին:

Ձմեռային պալատի գրավումը 1917 թ. հոկտեմբերի 25–ին Պետրոգրադում

Երզնկա, 1917 թ.

Նոր գործադիր մարմինը, սակայն, չկարողացավ կարգավորել երկրամասի ներքին կյանքը: Դեռ ավելին՝ վատթարացան ժողովրդի կենսապայմանները, համատարած բնույթ ընդունեցին ավազակությունն ու կողոպուտը: Իսկ ազգամիջյան բախումների ալիքը հեղեղեց ողջ երկրամասն ու ճակատային թիկունքը:

Երզնկայի զինադադարը: Կտրուկ փոխվեց իրավիճակը նաև Կովկասյան ճակատում: Անդրկոմիսարիատը հաշտության բանակցություններ սկսեց Թուրքիայի հետ և **1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում** ստորագրեց զինադադարի համաձայնագիր: Ռազմական գործողությունները երկուստեք դադարեցվում էին մինչև հաշտության պայմանագրի կնքումը:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո Կովկասյան ճակատը փլուզվեց, ռուսական զորքը տարերայնորեն լքեց պատերազմի դաշտը: Անդրկովկասի ազգային զորամասերը, որոնք պետք է փոխարինեին ռուսներին, նոր էին ձևավորվում և ուժեր ուղարկում դիրքեր: 1917 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Արևմտյան Հայաստանի ճակատային բնագծերում կար ընդամենը 17 հազար մարտիկ:

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը **1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը (դեկրետ)**: Դեռ նոյեմբերին ստեղծվել էր հանձնաժողով, որի կազմում էին բոլշևիկներ Վահան Տերյանը, Սարգիս Լուկաշինը, ՀՅԴ ներկայացուցիչ Ռոստոմը և ուրիշներ: Այդ հանձնաժողովն էլ կազմեց վերոհիշյալ հրովարտակի նախագիծը:

Կովկասյան ճակատում ռուսներին փոխարինող հայկական զորամասերում կենսական էր բարոյական-մային ոգու բարձրացումը: Ավելի քան երեք տարի շարունակվող պատերազմից ֆիզիկապես հոգնած, բարոյականային որոշ անկում ապրող հայ մարտիկների համար ոգեշնչման աղբյուր կարող էին ծառայել հայ ժողովրդի անցյալի և ներկայի հերոսական էջերը: Ամենաթարմ օրինակ էր հայ կամավորական շարժումը:
«Ռազմիկ» թերթը այդ մասին գրում է, որ հայ քաջորդիները, նետվելով ինքնամոռաց կռվի, պատմության էջերը հարստացրին բազմաթիվ սխրագործություններով: «Եվ ոգին էր, որ արավ այդ գործերը... Այդ ոգին է, որ պակասում է այս խառնակ շրջանում մեր հայրենիքի շատ զորամասերին: Այդ ոգին է, որ պետք է աշխատենք ներշնչել նրանց»:

«Ռազմիկ», Հայ զինվորական միության թերթ, 1917 թ. նոյեմբերի 20, թիվ 1

Հրովարտակով բոլշևիկյան կառավարությունը ճանաչում էր Արևմտյան Հայաստանում հայերի ինքնորոշման (անկախ պետություն ստեղծելու) իրավունքը: Այդ իրավունքի իրագործման համար առաջարկվում էր ռուսական զորքերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից, ստեղծել հայկական ժողովրդական միլիցիա, բռնագաղթված հայերին վերադարձնել հայրենիք:

Սակայն ոչ մի իրական երաշխիք չէր տրվում անկախ Հայաստանի ստեղծման համար: Տվյալ իրադրությունում զորքերի դուրսբերումը ոչ միայն նշանակում էր թուրքական վտանգից անպաշտպան թողնել Անդրկովկասը, այլև Արևմտյան Հայաստանը վերադարձնել Թուրքիային:

Հրովարտակի թերևս դրական կողմն այն էր, որ Խորհրդային Ռուսաստանը հրապարակավ և իրավական առումով ճանաչեց Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ազգային պետություն ունենալու իրավունքը:

Բրեստ–Լիտովսկի հաշտությունը և Հայկական հարցը: Խորհրդային կառավարությունը խզեց հարաբերությունները Ռուսաստանի դաշնակից Անտանտի երկրների հետ: Նա Բրեստ–Լիտովսկում 1917 թ. դեկտեմբերի 2–ին զինադադար կնքեց, ապա հաշտության բանակցություններ սկսեց թշնամի Քառյակ դաշինքի հետ:

Նման քաղաքական շրջադարձով խորհրդային ղեկավարությունը նպատակ ուներ պատերազմող գլխավոր երկրներում հրահրելու համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն: Բոլշևիկների համար Արևմտյան Հայաստանի խնդրի լուծումը էական դեր չուներ այդ ցնորամիտ նպատակի համատեքստում: Չնայած դրան՝ Հայկական հարցը քննարկվեց Բրեստ–Լիտովսկի բանակցությունների ողջ ընթացքում:

Շուտով բանակցություններն ընդհատվեցին: Պատերազմը վերսկսվեց. Գերմանիան հարձակման անցավ Պետրոգրադի ուղղությամբ, իսկ թուրքական զորքը՝ Կովկասյան ճակատում:

Ի վերջո, շուրջ երեք ամիս տևած բանակցություններից հետո Խորհրդային Ռուսաստանը **1918 թ. մարտի 3–ին Բրեստ–Լիտովսկում** ստորագրեց հաշտության պայմանագիր իր համար ծանր և ստորացուցիչ պայմաններով:

Հաշտության 4–րդ հոդվածի և ռուս–թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ Թուրքիային վե-

ռադարձվեցին Արևմտյան Հայաստանում գրավված հողերը: Ռուսաստանը իր զորքերը շուտափույթ դուրս հանեց ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Կարսի և Բաթումի մարզերից: Ռուսաստանը պարտավորվում էր նաև Անդրկովկասից հանել իր բոլոր ուժերը և զորացրել հայկական զորամասերը:

Բրեստ–Լիտովսկի պայմանագրով ոտնահարվեցին հայ ժողովրդի իրավունքները: Բոլշևիկները գործարքի գնացին Ռուսաստանի երեկվա թշնամիների հետ, որպեսզի պահպանեն իրենց իշխանությունը: Երբ ստորագրվում էր այդ չարաբաստիկ պայմանագիրը, ռուսական զորքն արդեն լքել էր Կովկասյան ճակատը, ավելին՝ վերսկսվել էր պատերազմն Արևմտյան Հայաստանի տարածքում:

Այսպես՝ Անտանտի նախկին անդամ Ռուսաստանը, անջատ հաշտություն կնքելով, դուրս եկավ Առաջին աշխարհամարտից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ բոլշևիկները գրավեցին իշխանությունը:
2. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասում: Ո՞ր ուժերից կազմվեց երկրամասի իշխանության նոր մարմինը:
3. Ե՞րբ կնքվեց Երզնկայի զինադադարը: Ինչո՞ւ Կովկասյան ճակատը փլուզվեց:
4. Ե՞րբ է ընդունվել Արևմտյան Հայաստանի մասին բոլշևիկյան դեկրետը: Ովքե՞ր էին այն կազմել: Գնահատե՛ք այդ փաստաթուղթը:
5. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Խորհրդային Ռուսաստանը՝ առանձին բանակցություններ սկսելով Քառյակ դաշինքի հետ:
6. Ե՞րբ է կնքվել Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագիրը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն Կովկասյան ճակատում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանն անտեսեց հայ ժողովրդի շահերը և Արևմտյան Հայաստանը վերադարձրեց Թուրքիային:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերյան հեղաշրջում, Ժողովրդական կոմիսարների խորհուրդ, Անդրկովկասյան կոմիսարիատ, Երզնկայի զինադադար, «Թուրքահայաստանի մասին» հրովարտակ (դեկրետ), հայ ժողովրդի ազգային անկախ պետություն ունենալու իրավունք, Վահան Տերյան, Սարգիս Լուկաշին, Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագիր

§ 31. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ

Թովմաս Նազարբեկյան

Հայկական զորամիավորումների ստեղծումը: Երկրամասում արմատապես փոխված քաղաքական և ռազմական պայմաններում Հայոց ազգային խորհուրդը ձեռք բերեց բանակային կորպուս ստեղծելու իրավունք: **1917 թ. նոյեմբերի 16–ի** հրամանով Կովկասյան ճակատում սկսեց ձևավորվել **Հայկական կորպուսը**: Հրամանատար նշանակվեց գեներալ **Թովմաս Նազարբեկյանը,** իսկ կոմիսար՝ **Դրոն**: Կորպուսը բաղկացած էր երկու դիվիզիայից, յուրաքանչյուրում կար 4 գունդ:

Հայկական կորպուսի զորամասերի համալրման գլխավոր վայր դարձավ **Երևանի նահանգը**: Հայոց ազգային խորհուրդը 1917 թ. դեկտեմբերի վերջերին Թիֆլիսից Երևան գործուղեց **Արամ Մանուկյանին՝** օժտելով նրան արտակարգ լիազորություններով: Արամի առաջնահերթ խնդիրն էր կարգուկանոն հաստատել նահանգում և աջակցել ազգային զորամասերի կազմավորմանը: Շուտով Երևան ժամանեց գեներալ **Մովսես Սիլիկյանը՝** կորպուսի առաջին դիվիզիայի հրամանատարը: Երևան եկավ նաև Դրոն:

Արևմտահայերից սկսեց ձևավորվել այսպես կոչված **երկրապահ դիվիզիան,** որի հրամանատար նշանակվեց **Անդրանիկ Օզանյանը**: Նրան շնորհվեց գեներալ–մայորի աստիճան: Երկրապահ դիվիզիան շուտով վերածվեց մեծ զորամիավորման և կոչվեց **Հատուկ հավաքական ջոկատ**:

Արդեն ասվել է, որ թուրքերը Կովկասյան ճակատում վերսկսել էին պատերազմը: Հենց պատերազմի ընթացքում էլ տեղի ունեցավ հայկական զորամիավորումների համախմբում: **1918 թ. մարտի 1–ին** կորպուսի և հավաքական ջոկատի միավորումից ստեղծվեց **Առանձին հայկական կորպուսը՝ Թ. Նազարբեկյանի** ընդհանուր հրամանատարությամբ:

Անդրանիկ Օզանյան

Պայքար երկրամասում իշխանության համար: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում իշխանության համար սուր պայքար էր ծավալվել տեղի գլխավոր քաղաքական ուժերի միջև: Վրացի մենշևիկները նպատակադրվել էին երկրամասում հաստատել վրացական գերիշխանություն: Նրանց և թաթար–մուսավաթականների շահերը շատ հարցերում համընկ-

նում էին. արդյունքում ձևավորվեց **վրաց–թաթարական** դաշինքը: Այս դաշինքը նպատակ էր դրել թույլ չտալու հայերին հայկական հողերի վրա ստեղծել անկախ, մեծ Հայաստան:

Վրաց–թաթարական ուժերին քաղաքական լուրջ մրցակից էին ոչ միայն հայ ազգային ուժերը՝ ի դեմս **դաշնակցության,** այլև հայ նշանավոր բոլշևիկ **Ս. Շահումյանը**: Վերջինս գլխավորում էր Բաքվում հաստատված խորհրդային իշխանությունը: Շահումյանը և նրա կողմնակիցները խնդիր էին դրել գրավելու իշխանությունը նաև երկրամասի կենտրոն Թիֆլիսում:

Նման իրադրությունում երկրամասի իշխանության կառուցվածքում տեղի ունեցավ փոփոխություն: **1918 թ. փետրվարի 10–ին** մենշևիկների, մուսավաթականների, դաշնակցության և այլ կուսակցությունների պատգամավորներից ձևավորվեց օրենսդիր բարձրագույն մարմին՝ **Անդրկովկասյան Սեյմը**: Դրա նախագահն էր մենշևիկ Ն. Չխեիձեն: Շահումյանը, խուսափելով Սեյմի հետապնդումներից, մարտի սկզբներին վերադարձավ Բաքու:

Ստեփան Շահումյան

Շահումյանի գլխավորությամբ ստեղծված իշխանությունը հայտնի էր նաև **Բաքվի կոմունա** անունով: Բաքվի Հայոց ազգային խորհրդի ջանքերով տեղում ստեղծվել էր Հայկական կորպուսի 15–հազարանոց զինուժ: Երկաթուղու շրջափակման պատճառով այն չկարողացավ հասնել Հայաստան և միավորվեց կոմունայի զորքի հետ՝ կազմելով նրա մեծագույն մասը: Հայկական զորքի շնորհիվ էր, որ թուրքերը մինչև 1918 թ. սեպտեմբերի կեսերը չէին կարողանում գրավել Բաքուն:

Պատերազմի վերսկսումը, Անդրկովկասի անկախացումը: Երզնկայի զինադադարը խախտած թուրքական զորքերը **1918 թ. հունվարի 28–ին** (նոր տոմարով՝ **փետրվարի 10**) անցել էին հակահարձակման: Համառ դիմադրությունից հետո հայկական զորքը և հայ բնակչությունը նահանջեցին դեպի Էրզրում:

Անդրանիկը նշանակվեց ռազմավարական նշանակություն ունեցող Էրզրումի պաշտպանական շրջանի ղեկավար: Դա ոգևորեց քաղաքի և շրջանի հայ բնակչությանը: Սակայն փոքրաթիվ ուժերով **Էրզրումը** պահել հնարավոր չեղավ. փետրվարի 27–ին այն անցավ թուրքերի ձեռքը:

Մովսես Սիլիկյան

Հայկական I հրաձգային բրիգադի «Զինվոր» թերթը դեռ 1917 թ. վերջին զգուշացնում էր. «Մեծ և ահավոր է գալիք օրերի վտանգը, բայց դժբախտաբար շատ քչերն են ըմբռնում այս անվիճելի ճշմարտությունը»: Թշնամու զորքերը կարող են խախտել Երզնկայի զինադադարը և, հարձակման անցնելով, գրավել Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանը: «Մեզ ուժ է պետք թշնամու ախորժակը սանձելու համար, ուժի առաջ կխոնարհվի նա: Այդ է մեր միակ փրկությունը: Մեր ժողովուրդը պետք է հասկանա վերջապես այս դառը ճշմարտությունը և, հասկանալով հանդերձ, պետք է հանդես բերի այս ահավոր ժամին իր բոլոր ուժերն ու կարողությունները, եթե չի ուզում, որ մեր անունը ընդմիշտ ջնջվի մարդկային պատմության էջերից»,— միանգամայն իրավացիորեն գրում էր թերթը:

«Զինվոր», թիվ 3, դեկտեմբերի 25, 1917 թ.

Մարտի երկրորդ կեսին թուրքական զորքն սկսեց սպառնալ արդեն Այսրկովկասին և Արևելյան Հայաստանին:

Սեյմը չճանաչեց Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագիրը և այդ պատճառով որոշեց Թուրքիայի հետ առանձին բանակցություններ վարել: Հաշտության բանակցություններն ընթացան արդեն թուրքերի կողմից գրավված **Տրապիզոնում** 1918 թ. մարտի 1–ից մինչև ապրիլի 1–ը:

Հենց սկզբից ակնհայտ դարձան Թուրքիայի զավթողական նպատակները: Թուրքերը պահանջում էին՝ ճանաչել Բրեստ–Լիտովսկի պայմանագիրը և անկախ հռչակել Անդրկովկասը: Այդ իրավիճակում Սեյմն ընդհատեց բանակցությունները և **ապրիլի 1–ին** երկրամասը հայտարարեց ռազմական դրության մեջ: Փաստացի դա նշանակում էր պատերազմի հայտարարում Թուրքիային:

Թուրքական զորամասերն անցան 1914 թ. ռուս–թուրքական պետական սահմանը: Վրացական կորպուսը չկարողացավ դիմադրել, և թուրքերը շատ արագ գրավեցին Բաթումը:

Ռազմաքաղաքական այդ դժվարին վիճակում **1918 թ. ապրիլի 6–8–ը Ալեքսանդրապոլում** տեղի ունեցավ հայ ազգային–քաղաքական կազմակերպությունների խորհրդակցություն: Մասնակիցների մեծամասնությունը հանդես եկավ Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելու թուրքական պահանջի դեմ: Որոշվեց ուժերը համախմբել թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար:

Սակայն Սեյմը, ի դեմս վրաց–թաթարական մեծամասնության, **1918 թ. ապրիլի 9–ին** հայտարարեց Ռուսաստանից երկրամասի անջատման ու անկախության հռչակման մասին: Ստեղծվեց **Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը (ԱԺԴՀ)**: Հաստատվեց նոր կառավարություն՝ վրացի մենշևիկ Ա. Չխենկելու գլխավորությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է ստեղծվել Հայկական կորպուսը: Ի՞նչ կառուցվածք ուներ այն: Ներկայացրե՛ք դրա հրամանատարական կազմը:
2. Ինչո՞ւ Ա. Մանուկյանը գործուղվեց Երևան:
3. Ո՞ւմ հրամանատարությամբ և ե՞րբ է ստեղծվել արևմտահայ երկրապահ դիվիզիան:
4. Ո՞ր ուժերից և ե՞րբ ձևավորվեց Առանձին հայկական կորպուսը: Ո՞վ էր հրամանատարը:
5. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո երկրամասում ո՞ւմ միջև էր մղվում իշխանության համար հիմնական պայքարը: Ե՞րբ ձևավորվեց Սեյմը:
6. Ո՞վ էր գլխավորում Բաքվի կոմունան: Ինչո՞ւ թուրքերը մինչև 1918 թ. աշուն չկարողացան գրավել Բաքուն:
7. Ե՞րբ են տեղի ունեցել և ի՞նչ ավարտ ունեցան Տրապիզոնի բանակցությունները:
8. Ինչո՞ւ էր Թուրքիան պահանջում Անդրկովկասը անջատել Ռուսաստանից:
9. Ալեքսանդրապոլում ի՞նչ նպատակով գումարվեց և ի՞նչ որոշեց հայ ազգային քաղաքական ուժերի խորհրդակցությունը:
10. Ե՞րբ է ստեղծվել ԱԺԴՀ-ն և ո՞ւմ ջանքերով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ հնարավոր չեղավ պահել Արևմտյան Հայաստանը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական կորպուս, Թովմաս Նազարբեկյան, Մովսես Սիլիկյան, երկրապահ դիվիզիա, Հատուկ հավաքական ջոկատ, Առանձին հայկական կորպուս, Անդրկովկասյան Սեյմ, Ստեփան Շահումյան, Բաքվի կոմունա, Տրապիզոնի թուրք–անդրկովկասյան բանակցություններ, Ա. Չխենկելի, Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետություն (ԱԺԴՀ)

§ 32. ՄԱՅԻՍՅԱՆ ՓԱՌԱՀԵՂ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Պատերազմի վերաճումը թուրք–հայկականի: 1918 թ. գարնանը թուրքերը 50–հազարանոց զորք էին կենտրոնացրել Կովկասյան ճակատում: Նրանք ծրագրել էին նվաճել ամբողջ Արևելյան Հայաստանը, հասնել Բաքու, Դաղստան և Հյուսիսային Իրան:

Անդրկովկասի նորահոչակ պետության կառավարությունը Բաթումի անկումից հետո ճակատային զորքերին հրամայեց դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ մայիսի 11–ից Բաթումում վերսկսեց Թուրքիայի հետ ընդհատված բանակցությունները:

Առանձին հայկական կորպուսը լի էր թշնամու առաջխաղացումը կանգնեցնելու վճռականությամբ: Հայ–վրաց–թաթարական միացյալ ուժերով հաջողությամբ կլուծվեր այդ խնդիրը, սակայն մենշևիկներն ու մուսավաթականները շարունակեցին իրենց հակահայ քայլերը: Մինչդեռ ԱԺԴՀ–ն ներկայանում էր իբրև երեք ժողովուրդների դաշնային պետություն:

Չխենկելու կառավարությունը հայերի հաշվին արվող զիջումների գնով փորձում էր համաձայնության գալ թուրքերի հետ: Արդյունքում՝ **1918 թվականի ապրիլի 12 (25)–ին Կարսն** առանց դիմադրության հանձնվեց թուրքերին:

Կարսի բերդը



Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը Հեղինակ՝ Ռաֆայել Իսրայելյան

Հայկական ուժերը հարկադրված անցան Ախուրյան գետի ձախ ափը: Թուրքական կողմը վերջնագիր ներկայացրեց Ալեքսանդրապոլում տեղակայված հայկական զորքի հրամանատարությանը: Պահանջվում էր հանձնել քաղաքը և զորքը 25 կմ հեռացնել երկաթուղուց: Չսպասելով վերջնագրի պատասխանին՝ թշնամին մայիսի 15–ին գրավեց քաղաքը:

Այսպես՝ **թուրք–անդրկովկասյան պատերազմը վերաճեց թուրք–հայկական պատերազմի**: Ճակատային գիծը Ջավախքից ձգվում էր Ալեքսանդրապոլ, ապա Արաքս գետով մինչև Մարգարա:

Դեռ մայիսի 7–ին թուրքերը ներխուժել էին Ջավախք: Հայերը համառ դիմադրություն ցուցաբերեցին Ախալքալաքի գավառում: Թուրքական զորամասերը շրջափակել էին նաև **Ախալցխան**: Թուրքերին այդպես էլ չհաջողվեց գրավել Ախալցխան. մարտերը շարունակվեցին մինչև հունիսի 6–ը:

Թուրք–հայկական պատերազմի կարևոր իրադարձություններից է **Շիրակի գոյամարտը**: Տեղի բնակչությանը միացան արևմտահայ հազարավոր գաղթա-

Մեկնելով Վաղարշապատ՝ Արամ Մանուկյանը հորդորում է Ամենայն հայոց կաթողիկոսին Ս. Էջմիածնից հեռանալ Բյուրական: Սակայն Գևորգ Ե Սուրենյանցը, պատմական զուգահեռ անցկացնելով Վարդանանց պատերազմի հետ, պատասխանում է. «Ուրեմն՝ վիճակը ծանր է: Ո՛չ, տղերքս, Հայոց կաթողիկոսը նահանջող չէ: ... Ասացեք հայ բանակին, թե ես տեղիցս չեմ շարժվում: Ես չեմ թողնում Ս. Էջմիածինը: Եթե մեր զինվորները նրան չեն կարողանում պաշտպանել, և թուրքերը մտնելու են Ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Իջման սրբավայրում... ասացեք զինվորներին, որ նրանք պատասխանատու են բոլոր հայերի կյանքի համար»:

Բաշ Ապարանի հերոսամարտի հուշահամալիրը
Հեղինակ՝ Ռաֆայել Իսրայելյան

կաններ և մայիսի կեսերին միացյալ ուժերով ճնշեցին Արագածի լեռնազանգվածի տարածքում ապստամբած քրդերին ու թաթարներին: Նրանք կասեցրին նաև այդ ուղղությամբ կռվող թուրքական զորքի առաջխաղացումը:

Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերը: Ալեքսանդրապոլի գրավումից հետո թշնամու զորքը մտավ Արարատյան դաշտ և շարժվեց դեպի Երևան: Հայ բնակչությունը և Առանձին կորպուսի ուժերից **Սիլիկյանի** գլխավորությամբ ստեղծված **Երևանյան զորախումբը** միասնաբար դիմագրավեցին թշնամուն:

Հաղթանակի կոփման գործում մեծագույն ներդրում ունեցավ 1918 թ. մարտի 24–ին Երևանի նահանգի դիկտատոր հաստատված **Արամ Մանուկյանը**:

Ամենայն հայոց կաթողիկոս **Գևորգ Ե Սուրենյանցը** հրաժարվեց տեղափոխվել Բյուրական և մնաց Ս. Էջմիածնում՝ ժողովրդի ու զորքի կողքին:

Մայիսի 19–ին սկսվեց թուրքերի նոր հարձակումը: Երևանյան զորախմբի կազմում այդ պահի դրությամբ կար մոտ **10 հազար** մարտիկ: Նրանցից Սարդարապատի ուղղությամբ կռվում էր **5500–ը**: Իսկ թշնամին նույն ուղղության վրա ուներ **6 հազար** կանոնավոր զորք և **1500** քրդական հեծելազոր:

Կատաղի մարտից հետո՝ մայիսի 21–ին, հայկական ուժերը նահանջեցին՝ հանձնելով Սարդարապատ կայարանն ու գյուղը: Գեներալ Նազարբեկյանը Մ. Սիլիկյանին հրամայեց հակահարձակման միջոցով կանխել թուրքերի առաջխաղացումը դեպի Երևան:

Այդ օրհասական պահին հայ ժողովուրդը, նրա ռազմական և քաղաքական ուժերը միաբանության հիանալի վարքագիծ դրսևորեցին: Թշնամուն հաղթելու, նրան վռնդելու համար կողք կողքի կանգնած էին հայ զինվորականները, աշխարհազորայինները, կանայք ու պատանիները, հոգևորականները, մտավորականները:

Գնդապետ **Դանիել Բեկ–Փիրումյանն** իր զորամասերին նախապատրաստեց հակահարձակման: Մարտից առաջ կրակոտ ճառ ասաց **Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը**:

Մայիսի 22–ի առավոտյան հայկական զորքն անցավ հարձակման: Հաջորդ օրը Սարդարապատը ազատագրված էր:

Ճակատային այս հատվածում կռվող հայկական ուժերը միավորվեցին **Սարդարապատի ջոկատի** մեջ՝ գնդապետ **Դ. Բեկ-Փիրումյանի** հրամանատարության ներքո: Սարդարապատի ճակատամարտի օրերին՝ **մայիսի 22-ից մինչև 28-ը,** թշնամին կորցրեց 3500 սպանված և նահանջեց մոտ 60 կմ: Թուրքերը խուճապահար անցան Ախուրյանի աջ ափը: Առջևում Ալեքսանդրապոլն ու Կարսն էին:

Դանիել Բեկ-Փիրումյան

Մայիսի 29-ին գեներալ Սիլիկյանը հանդես եկավ Ալեքսանդրապոլը գրավելու կոչով, սակայն Նազարբեկյանից հրաման եկավ՝ դադարեցնելու ռազմական գործողությունները:

Այսպիսով՝ Սարդարապատի ճակատամարտն ավարտվեց հայկական զորքի փառահեղ հաղթանակով: Թշնամին կրեց առաջին խոշոր պարտությունը:

Մյուս հաղթանակը նվաճվեց **Բաշ Ապարանում:** Թուրքերը մոտ 10 հազար զորքով հասել էին Բաշ Ապարան: Նպատակն էր դուրս գալ Աշտարակ և Քանաքեռի գրավմամբ փակել օղակը Երևանի շուրջը:

Գեներալ Սիլիկյանը **մայիսի 23-ին** Երևանյան զորախմբի ուժերից 5 հազար հոգու ուղարկեց Բաշ Ապարանի ճակատային տեղամաս, որի հրամանատար նշանակվեց **Դրոն:** Նույն օրը հայկական ուժերը տարան առաջին հաղթանակը: Նրանց հետ միասին թուրքերի դեմ քաջաբար կռվում էր նաև եզդիների ջոկատը: Կատաղի մարտերն այստեղ շարունակվեցին մինչև **մայիսի 29-ը:** Ի վերջո հայկական ուժերը պարտության մատնեցին թշնամուն: **Բաշ Ապարանի հաջողությունը հայոց զորքի երկրորդ խոշոր հաղթանակն էր:**

Ղարաքիլիսայի հերոսամարտը: Ալեքսանդրապոլի անկումից հետո Առանձին հայկական կորպուսի ուժերի մի մասը, որ շարժվել էր դեպի Ղարաքիլիսա, մայիսի 22-ին նահանջեց Դիլիջան: Անդրանիկը, ում հանձնարարված էր պահել Ղարաքիլիսայից հյուսիս ընկած տեղամասը, հետ մղեց թուրքական երեք հարձակում, ապա անցավ Դսեղ:

Գարեգին Հովսեփյան

Դիլիջանում, ստանալով Սարդարապատի առաջին հաղթանակի լուրը, ժողովուրդն ու հայկական զորամասերը ոգևորվում են: **Մայիսի 25-ին** կազմակերպվում է **Ղարաքիլիսայի ճակատը:** Հայկական կողմն

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ



ուներ 7 հազար կռվող, իսկ թուրքական կողմը՝ 10 հազար:

Առաջինը մարտի նետվեց **Գարեգին Նժդեհը**՝ իր ջոկատով: Այդպես սկսվեց Ղարաքիլիսայի հերոսամարտը: Աչքի ընկան ճակատի հրամանատար գնդապետ **Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանը**, գնդապետ **Նիկոլայ Ղորղանյանը** և հարյուրավոր քաջարի մարտիկներ: Թշնամին սկզբում նահանջեց, սակայն շուտով հարձակման անցավ և **մայիսի 30-ին** գրավեց Ղարաքիլիսան:

Գարեգին Նժդեհ

Ղարաքիլիսայի ճակատամարտը կարևոր նշանակություն ունեցավ: Թուրքերը մեծ կորուստներ ունեցան և չշարունակեցին հարձակումը Դիլիջան—Ղազախ ուղղությամբ: Այս ճակատամարտը նույնպես ապացուցեց, որ բարձրացել է հայ ժողովրդի մարտական ոգին և դիմադրական ներուժը:

Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը: Մեծ եղեռնից և պատերազմի պատճառած վնասներից դեռ լիովին ուշքի չեկած հայությունը, 1918 թ. գարնան վճռական օրերին համախմբվելով, մեծ սխրանք գործեց: Հայ ժողովրդի երկու հատվածների զավակները միասնաբար կռվեցին հանուն Հայաստանի ազատության և անկախության:

Մեր պատմության ռազմական տարեգրությունը հարստացավ նոր հաղթանակներով ու անուններով: Այս հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես և Մեծ եղեռնից մազապուրծ հարյուրհազարավոր արևմտահայեր:

Մայիսյան հերոսամարտերի բոցերում ծնվեց անկախ **Հայաստանի Հանրապետությունը**:

Թուրքական կողմը ստիպված էր Բաթումի բանակցություններում մեղմացնել իր պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ **1918 թ. հունիսի 4-ին կնքել հաշտության պայմանագիր**:

Այսպիսով՝ ռազմաքաղաքական գործընթացների բերումով նորահռչակ հայկական պետությունը դարձավ Առաջին աշխարհամարտի մասնակից կողմ: Հետագայում այս հիմքի վրա է, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից և իր տարածքային ու քաղաքական իրավունքները ձևակերպեց Սևրի պայմանագրով:

Ղարաքիլիսայի հերոսամարտի քաջարի հայ զինվորներ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փաստերով ցո՛ւյց տվեք, որ երիտթուրքերը շարունակում էին իրենց պանթուրքական ծրագիրը:
2. Ե՞րբ Կարսը հանձնվեց թշնամուն և ինչո՞ւ:
3. Հիմնավորե՛ք, որ Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում պատերազմն իրոք ընդունել էր թուրք–հայկական բնույթ:
4. Օգտվելով քարտեզից՝ ցո՛ւյց տվեք ճակատային գծի դասավորությունը 1918 թ. մայիսի սկզբի դրությամբ:
5. Ե՞րբ գրավվեց Ալեքսանդրապոլը: Ի՞նչ նշանակություն ունեցան Ջավախքի և Շիրակի դիմադրական մարտերը:
6. Ձեր կարծիքով ինչո՞ւ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն հրաժարվեց տեղափոխվել Բյուրական:
7. Ներկայացրե՛ք Սարդարապատի ուղղությամբ ուժերի դասավորությունը և ռազմական գործողությունների ընթացքը:
8. Նկարագրե՛ք Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի ընթացքը և արդյունքները:
9. Մայիսյան հերոսամարտերը պատմական ի՞նչ նշանակություն ունեցան. պատասխանը հիմնավորե՛ք փաստերով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով ինչո՞ւ հայկական զորքը միայնակ պատերազմեց թուրքական զորքի դեմ Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրք–անդրկովկասյան պատերազմի վերաճում թուրք–հայկական պատերազմի, Ջավախքի և Շիրակի գոյամարտեր, Երևանյան զորախումբ, Երևանի նահանգի դիկտատոր Արամ Մանուկյան, Դանիել Բեկ–Փիրումյան, Գարեգին Հովսեփյան, Սարդարապատի ջոկատ, Գարեգին Նժդեհ, Ալեքսանդր Բեյ–Մամիկոնյան, Նիկոլայ Ղորղանյան, Մայիսյան փառահեղ հերոսամարտեր

ԳԼՈՒԽ X ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

§ 33. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթի զարգացման նախադրյալները: Հայկական մշակույթը արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում զարգացավ արդիական պահանջներին համահունչ:

Այս ժամանակաշրջանի գիտության ու տեխնիկայի նվաճումները արևելահայ ու արևմտահայ մշակույթի վերելքի կարևոր նախադրյալներ դարձան:

Ռուսաստանում ծավալվող ժողովրդավարական շարժումները, ռուսական առաջադիմական գրականությունն ու արվեստը նույնպես էական ազդեցություն ունեցան արևելահայ մշակութային կյանքի վերելքի վրա: Իսկ արևմտահայությունը մշակութային զարգացման ազդակներ էր ստանում եվրոպական, մասնավորապես՝ ֆրանսիական իրականությունից: Արևելահայերի մշակութային գլխավոր կենտրոնը **Թիֆլիսն** էր, իսկ արևմտահայերինը՝ **Կոստանդնուպոլիսը**:

Այս ժամանակաշրջանում մշակութային կյանքում նախաձեռնությունն անցնում է եվրոպական բարձրագույն կրթություն ստացած հայ երիտասարդությանը: Մտավորական նոր սերունդը գերակա խնդիր է հռչակում **ժողովրդի մեջ լուսավորության տարածումը, ազգային ինքնագիտակցության վերելքի ապահովումը, ազատության, հավասարության ու արդարության համար պայքարելը**:

Հայ մշակութային կյանքի զարթոնքին նպաստեց նաև ազգային քաղաքական ու հասարակական կազմակերպությունների բազմաբնույթ գործունեությունը:

Այսպիսով՝ քաղաքակրթական նվաճումների հետ անմիջական շփումը, դրանց մի մասի յուրացումն ու համադրումը ազգային արժեհամակարգի հետ ապահովեց հայ մշակույթի առաջընթացը բուն Հայաստանում, մերձավոր հայաբնակ շրջաններում ու հայկական գաղթավայրերում:

Կրթական համակարգը: Նոր ժամանակներում առաջնային նշանակություն ստացավ հայկական մի-

Պերճ Պոռշյան

ջավայրում արդիական կրթական համակարգի ձևավորումը:

XIX դ. երկրորդ կեսին, չնայած ցարիզմի հարուցած արգելքներին, վերելք ապրեց հայկական դպրոցը: Արևելահայության շրջանում կար երկու տեսակի դպրոց՝ **պետական** և **ազգային**: Աստիճանաբար աճեց պետական դպրոցների թիվը, որտեղ ուսուցման պարտադիր լեզուն ռուսերենն էր:

Հայոց եկեղեցու տնօրինման ներքո գործող ծխական տարրական դպրոցներում դասավանդում էին կրոն, հայերեն, ռուսերեն, վայելչագրություն, թվաբանություն, երգեցողություն: Տրվում էին նաև նախնական գիտելիքներ աշխարհագրությունից, բնագիտությունից, պատմությունից: Հայկական գրեթե բոլոր բնակավայրերում կային տարրական դպրոցներ: Այսրկովկասում 1914 թ. դրությամբ կար 400 հայկական եկեղեցական դպրոց՝ 31 հազարից ավելի աշակերտով:

Բացվեցին նաև իգական ուսումնական հաստատություններ: Այդ գործում մեծ է **Պերճ Պոռշյանի** ավանդը: Նրա անմիջական ջանքերով **1864 թ. Շուշիում** և **1866 թ. Երևանում** բացվեցին իգական դպրոցներ: Դրանք շուտով ստացան միջնակարգի աստիճան և մեծ դեր խաղացին ուսուցչուհիներ պատրաստելու գործում:

Շուշիի ռեալական վարժարանի շենքը

Ամենայն հայոց կաթողիկոս **Գևորգ Դ–ի** նախաձեռնությամբ **1874 թ. Էջմիածնում** բացվեց **հոգևոր ճեմարան**: Ճեմարանի գլխավոր խնդիրը հոգևորականներ պատրաստելն էր: Ճեմարանը դարձավ նաև հայագիտական խոշոր կենտրոն: Այստեղ դասավանդել և կրթություն են ստացել բազմաթիվ նշանավոր հայ գործիչներ:

Օսմանյան կայսրության կազմում գտնվող արևմտահայությունը կրթության ոլորտում դանդաղ, բայց հաստատուն քայլեր էր կատարում: Գործում էին երկու կարգի ազգային դպրոցներ՝ **նախակրթարան (տարրական)** և **երկրորդական (միջնակարգ)**: Դպրոցների կառավարումը, ըստ Ազգային սահմանադրության, հանձնվեց թաղային խորհուրդներին:

Ավելացավ ուսումնական հաստատությունների թիվը բուն հայրենիքում: Մկրտիչ Խրիմյանը Վարագա վանքում **1857 թ.** բացեց «**Ժառանգավորաց**» վարժարանը: 1870 թ. Գարեգին Սրվանձտյանցը Վանում հիմնադրեց իգական վարժարան:

Կարինի ուսումնական հաստատությունների մեջ ամենահռչակավորը **1881 թ.** բացված **Սանասարյան վարժարանն** էր: Ուսուցիչների մեծ մասը մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի միջոցների հաշվին բարձրագույն կրթություն էր ստացել Գերմանիայում, մասնավորապես՝ Լայպցիգի համալսարանում:

Գևորգյան ճեմարանի շենքը

Չնայած դժվարություններին՝ հայկական մշակույթը, պահպանելով իր ինքնատիպությունն ու ազգային–հոգևոր միասնականությունը, զարգացավ և կարևոր դեր խաղաց ազգի ինքնության պահպանման, համախմբման և առաջադիմական գաղափարների տարածման գործում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին հայ մշակույթի վերելքի նախադրյալները XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին:
2. Ներկայացրե՛ք հայ մշակույթի գլխավոր կենտրոնները, դրանց դերակատարությունը:
3. Ինչո՞ւ էր անհրաժեշտ ժողովրդին լուսավորելը և կրթելը:
4. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան կրթական կյանքում: Ի՞նչ տեսակի դպրոցներ կային Արևելյան Հայաստանում. ի՞նչ էին դասավանդում այդ դպրոցներում:
5. Ի՞նչ տիպի արևմտահայ դպրոցներ կային և ո՞ւմ կառավարման ներքո էին դրանք:
6. Թվարկե՛ք այդ ժամանակաշրջանի նշանավոր ուսումնական հաստատությունները. ե՞րբ և ո՞ւմ կողմից են հիմնադրվել դրանք:
7. Փորձե՛ք հիմնավորել, որ հայկական դպրոցական կյանքը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին իսկապես վերելք էր ապրում:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքակրթական նվաճումների յուրացում և համադրում ազգային արժեհամակարգի հետ, հայկական մշակույթի երկու գլխավոր կենտրոններ, միջնակարգ դպրոց, Շուշիի և Երևանի իգական դպրոցներ, Էջմիածնի հոգևոր ճեմարան, Վարագա վանքի «Ժառանգավորաց» վարժարան, Կարինի Սանասարյան վարժարան

§ 34. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բնական գիտությունները: Այս ժամանակաշրջանի գրեթե բոլոր հայ գիտնականները ազգային անկախ պետության բացակայության պատճառով ապրում և աշխատում էին հայրենիքի սահմաններից դուրս՝ Արևմտյան Եվրոպայում, Ռուսաստանում, ԱՄՆ–ում և այլ վայրերում: Ծանոթանանք նրանցից մի քանիսի գործունեությանը:

Նշանավոր գիտնական **Անդրեաս Արծրունին** ժամանակակից երկրաքիմիա գիտական բնագավառի հիմնադիրն է: Նա հայտնի հրապարակախոս Գ. Արծրունու եղբայրն էր, «Մշակ» թերթում տպագրում էր հոդվածներ, երազում էր աշխատել հայրենիքում:

Քիմիկոս **Ջակոմո (Հակոբ) Զամչյանն** իր գիտամանկավարժական գործունեությունն սկսել է Հռոմի համալսարանում: Նա համարվում է ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հիմնադիրը:

Ֆիզիկայի ասպարեզում XX դ. կարևոր հայտնագործություններից մեկը՝ տարածության մեջ պատկերներ հաղորդելու համակարգը, մշակել է **Հովհաննես Ադամյանը** (1879–1932): Նա աշխատել է Բեռլինում, Պետերբուրգում, խորհրդային իշխանության տարիներին՝ նաև Երևանում: Նա դրել է գունավոր հեռուստատեսության հիմքը:

Աստղագիտության բնագավառում հռչակվել է վենետիկցի հետազոտող **Խորեն Սինանյանը**: Ս. Ղազար կղզու հայկական աստղադիտարանում նա է առաջինը հայտնաբերել Յուպիտերի վեցերորդ արբանյակը:

Հայ բժիշկների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի **Մարգար Առուստամովը**: Ցարական կառավարությունը նրան աքսորել էր Աստրախան: 1892 թ. այստեղ բռնկված խոլերայի համաճարակի ժամանակ անգնահատելի օգնություն է ցուցաբերել հիվանդներին և պայքարել համաճարակի տարածման դեմ:

Ֆիզիոլոգիայի բնագավառում մեծ գործ է կատարել ռուս մեծ գիտնական Ի. Պավլովի սան **Լևոն Օրբելին**: Զարգացնելով Պավլովի ուսմունքը՝ նա դարձել է էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրը:

Հայագիտությունը: XIX դ. կեսերից բուռն զարգացում ունեցավ հայագիտությունը: Հայոց լեզվի, գրականության, պատմության, Հայաստանի աշխար-



Հովհաննես Ադամյանն աշխատանքի պահին

Հրաչյա Աճառյան

հագրության հետազոտության ասպարեզում բեղմնավոր գործունեություն ծավալեցին հայ և օտարերկրացի գիտնականները:

Հայերենի ուսումնասիրությունը դրվեց գիտական լուրջ հիմքերի վրա: Հայագիտության այս ճյուղի վերելքը կապված է լեզվաբանների նոր սերնդի ներկայացուցիչների՝ **Ստեփան Մալխասյանցի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի** և ուրիշների բեղուն գործունեության հետ:

Հայագիտությունը խոշոր հաջողությունների հասավ նաև Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում: XIX դ. վերջին և XX դ. սկզբին ընդհանուր լեզվաբանության ականավոր ներկայացուցիչները ցույց տվին հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ որպես նրա առանձին ճյուղ:

Հայ միջնադարյան պատմիչների երկերի թարգմանության, հայ ազգագրության և հավատալիքների հետազոտության առումով նշանակալից էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր **Մկրտիչ Էմինի** դերը:

Ռուսաստանի անվանի կովկասագետ **Նիկողայոս Մառը** (1864–1934) հիմնավորապես զբաղվել է Անիի պեղումներով: Նրա հայագիտական ուսումնասիրությունների ամփոփումն էր «Անի» աշխատությունը:

XIX դ. վերջին և XX դ. սկզբներին հզոր առաջընթաց ունեցավ հայագիտության առանցքային ճյուղերից մեկը՝ **հայ պատմագիտությունը**:

Պատմագիտության մեծավաստակ դեմքերից է Մխիթարյան միաբանության անդամ **Ղևոնդ Ալիշանը** (1820–1901): Նա իր գիտական հսկայական ժառանգությամբ (ավելի քան 45 հատոր) մեծապես նպաստել է ազգային գիտության զարգացմանը:

Հայ ժողովրդի ամբողջական պատմությունը ստեղծելու գործում հատկանշելի է **Անտոն Գարագաշյանի** «Քննական պատմություն հայոց» ուսումնասիրությունը:

Հայոց պատմության զանազան հիմնահարցերի, Հայկական հարցի լուծման և հեռանկարների մասին ուրույն վերաբերմունք ուներ եկեղեցական գործիչ, պատմաբան և բանասեր **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը**: Մեծ նշանակություն ունի նրա «**Ազգապատում**» եռահատոր ուսումնասիրությունը:

Հայոց պատմության ուսումնասիրությունը որակական նոր աստիճանի բարձրացրեց պատմաբան **Լեոն** (Առաքել Բաբախանյան): Նա գրել է հայոց պատմության գրեթե բոլոր պատմական շրջանների ու հիմնախնդիրների մասին:

Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեզում մեծ ներդրում ունի **Նիկողայոս Ադոնցը**: Իր՝ «**Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում**» արժեքավոր աշխատությունում ներկայացրել է Հայաստանի պատմաաշխարհագրական և հասարակական–քաղաքական կառուցվածքը, հայ–բյուզանդական հարաբերությունները և այլ հարցեր:

Ղևոնդ Ալիշան

Հայ գիտնականների այս փայլուն սերնդի շատ ներկայացուցիչներ իրենց բեղուն գործունեությունը շարունակեցին նաև Հայոց պատմության նորագույն շրջանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՛ք XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի բնական գիտությունների հայ ներկայացուցիչներին: Ինչո՞վ են նրանք հայտնի:
2. Ովքե՞ր էին այդ ժամանակաշրջանի նշանավոր հայագետները: Ի՞նչ գործերով են աչքի ընկել:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ հայ պատմագիտությունը աննախընթաց վերելք ապրեց:
4. Ովքե՞ր էին այս ժամանակաշրջանի հայ պատմագիտության նշանավոր ներկայացուցիչները. լուսաբանե՛ք նրանց գործունեությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պատրաստե՛ք հայ նշանավոր որևէ գիտնականի մասին զեկույց և ներկայացրե՛ք դասարանում:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդրեաս Արծրունի, երկրաքիմիա, Ջակոմո Չամչյան, լուսաքիմիա, Հովհաննես Ադամյան, գունավոր հեռուստատեսություն, Խորեն Սինանյան, Մարգար Առուստամով, Լևոն Օրբելի, հայագիտություն, Ստեփան Մալխասյանց, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Նիկողայոս Մառ, Մկրտիչ Էմին, Անտոն Գարագաշյան, Մաղաքիա Օրմանյան, Լեո, Նիկողայոս Ադոնց

§ 35. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

Գրականության հասարակական դերի բարձրացումը: Բուռն վերելք ապրեց նաև հայ գրական կյանքը: Հասարակական կյանքի աշխուժացման, մարդկանց աշխարհընկալման գործում սկսում է մեծ դեր խաղալ գեղարվեստական գրականությունը:

XIX դ. կեսերին հայ գրականության մեջ գերիշխող էր **կլասիցիզմը**: Այս ուղղության գրողների երկերում ներբողվում էին հայրենասիրությունը, անձնվիրությունը, առաքինությունը, առաջադրվում էր հայրենիքի ազատության գաղափարը: Հայ կլասիցիզմի գլուխգործոցը **Արսեն Բագրատունու** «Հայկ դյուցազն» (1858 թ.) վիպերգն է:

Կլասիցիզմին հաջորդում է **ռոմանտիզմը**: Գրաբարին փոխարինելու է գալիս աշխարհաբարը: Զուգահեռաբար ձևավորվում է հայ նոր գրականությունը՝ արևելահայ և արևմտահայ հատվածներով:

Հայ գրողների նոր սերնդի շարքերում առանձնանում է **Միքայել Նալբանդյանը**: Նրա ողջ ստեղծագործությունը համակված է ջերմ հայրենասիրությամբ և ազատասիրական ոգով: Նա հիմք դրեց գրական քննադատությանը՝ զարգացնելով կյանքի ճշմարիտ արտացոլման սկզբունքը:

Ժամանակի ազգային ոգու գլխավոր արտահայտողը պոեզիան էր: Մեծ ժողովրդականություն են ձեռք բերում **Ռափայել Պատկանյանի** բանաստեղծությունները: Նա ասում էր, որ հային պետք է դաստիարակել՝ հիշեցնելով նրան իր կորցրած փառքը, սովորեցնելով **«պաղարյուն նայել այն մահվան վրա, որ նա կարող է ստանալ՝ զոհելով անձը ազգի ազատությանը...»**:

Ռաֆֆի

Հայ մեծ գրող **Ռաֆֆին** նոր հուն բացեց ազգային վիպասանության մեջ: Նա իր վեպերում ստեղծեց ազգային կերպարներ, ովքեր քարոզում էին ազգային ազատագրության գաղափարը: Իսկ **փրկության միակ ուղին զինված պայքարն է**:

Արձակում լայն տարածում է գտնում նաև նորավեպը: Գեղարվեստական սյուժեների կիզակետում հայտնվում են կինը և ընտանիքը, անհատի և հասարակության հակադրությունը, օտարված անհատի ողբերգական ճակատագիրը: Արձակի նոր սերնդի ակա-

նավոր դեմքերն էին **Մուրացանը, Շիրվանզադեն, Գրիգոր Զոհրապը, Նար-Դոսը** և ուրիշներ:

Հանդես է գալիս անձնական քնարերգությունը՝ հայրենիքի, բնության, սիրո, կարոտի ու թախիծի վերապրումներով: Բանաստեղծական այդ նոր ուղղությունը ներկայացնում էին **Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը** և ուրիշներ:

XX դարասկիզբը բեկում է նշանավորում հայ գեղարվեստական գրականության մեջ: Փոխվում է նաև գրականության հերոսը: Սոցիալական տիպերին փոխարինում են հեղափոխականը, մտավորականը:

Ասպարեզ է գալիս բանաստեղծների նոր սերունդը՝ **Սիամանթո, Վահան Տերյան, Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց**: Դրամատուրգիայում նոր ուղղություն է նշանավորում **Լևոն Շանթը**:

Ավետիք Իսահակյան

Մամուլը: Արդյունաբերական հասարակության բնորոշ կողմերից է տեղեկատվության հավաքման, մշակման ու տարածման երևույթը: Այդ գործում ժամանակին յուրահատուկ դեր էր վերապահված մամուլին: Մամուլը XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբների զանգվածային լրատվության կարևորագույն միջոցն էր: Հայկական մամուլը, որպես ազգային մշակույթի նոր բնագավառ, զարգանում էր արդիական պահանջներին համընթաց:

Հայաստանի երկու հատվածներում ու հայկական գաղթավայրերում կտրուկ աճեց հայ պարբերականների թիվը: XIX դ. երկրորդ կեսին հիմնադրվել է 250 թերթ ու հանդես: Հայ մամուլը հատկապես ծաղկում ապրեց Կ. Պոլսում և Թիֆլիսում:

Դարակեսի ամենանշանավոր պարբերականը 1858–1864 թթ. Մոսկվայում հրատարակված «**Հյուսիսափայլն**» էր:

Ժամանակի հասարակական կարծիքը ձևավորելու առումով հսկայական դեր ուներ 1872 թվականից Թիֆլիսում լույս տեսնող ազատական ուղղության «**Մշակ**» թերթը:

Թիֆլիսում, Կ. Պոլսում, Սանկտ Պետերբուրգում, Փարիզում, Վենետիկում և այլուր հայերեն, երբեմն նաև օտար լեզուներով հրատարակում էին գրական–գեղարվեստական պատկերազարդ պարբերականներ: Օրինակ՝ **Ա. Զոբանյանի** խմբագրությամբ Փարիզում հրատարակվում էր «**Անահիտ**» հանդեսը, **Գ. Լևոնյանի** խմբագրությամբ Թիֆլիսում՝ «**Գեղարվեստը**»:

Հովհաննես Թումանյան

«Անահիտ» հանդես

«Դրոշակ» թերթի առաջին և երկրորդ համարները հրատարակվել են Թիֆլիսում 1891 թ. մայիսին և սեպտեմբերին Դաշնակցության գաղտնի տպարանում: «Դրոշակ»–ի 3–րդ համարը լույս է տեսել Ռումինիայում 1892 թ.: 4–րդ համարից սկսած (1893 թ.)՝ հրատարակվել է Շվեյցարիայի Ժնև քաղաքում:

Հայ մամուլի պատմության մեջ նոր երևույթ էր կուսակցական թերթերի ու ամսագրերի հրատարակումը: Կուսակցական մամուլը թեժ գաղափարական պայքարի, տարբեր ուղղությունների միջև մրցակցության և բախման ասպարեզ էր:

Դաշնակցության պաշտոնական առաջին օրգան «**Դրոշակը**», որ հիմնադրվել էր Թիֆլիսում, տեղափոխվեց Ժնև (Շվեյցարիա): Դարասկզբին սկսեցին լույս տեսնել «**Ազատամարտ**», «**Հորիզոն**» և տասնյակ այլ դաշնակցական պարբերականներ:

Հնչակյանների հրատարակած պարբերականներից աչքի էին ընկնում «**Հնչակը**», «**Երիտասարդ Հայաստանը**»:

Ընդհանուր առմամբ՝ XX դ. սկզբներին հրատարակվում էր շուրջ 1000 անուն հայկական պարբերական: **Այսպես հայ մամուլը, բազմանալով ու տարածվելով հայկական միջավայրում, սկսեց էական դեր խաղալ հասարակական մտածողություն, վերաբերմունք և կարծիք ձևավորելու գործում**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ ուղղություններ կային հայ գրականության մեջ:
2. Ներկայացրե՛ք հայ պոեզիայի և արձակի նշանավոր հեղինակներին:
3. Թվարկե՛ք նրանց ստեղծագործություններից: Դրանցից ի՞նչ եք կարդացել: Ո՞ր ստեղծագործությունը կամ ո՞ր հերոսին եք նախընտրում. ինչո՞ւ:
4. Ի՞նչ դեր էր խաղում մամուլը ժամանակի հասարակական կյանքում:
5. Վերհիշե՛ք, թե որն էր հայերեն առաջին պարբերականը: Որտե՞ղ և ի՞նչ նշանավոր պարբերականներ էին հրատարակվում XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին հասարակական կյանքում ի՞նչ դեր ունեին գրականությունը և մամուլը: Արդյո՞ք այն պահպանվել է նաև մեր օրերում:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, Արսեն Բագրատունի, գրականության հասարակական դերի բարձրացում, Ա. Չոբանյան, «Անահիտ», Գ. Լևոնյան, «Գեղարվեստ», «Ազատամարտ», «Հորիզոն», «Երիտասարդ Հայաստան»

§ 36. ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Մարտիրոս Սարյան

Ժամանակի առաջադիմական երևույթները լիովին դրսևորվեցին նաև հայ արվեստում:

Կերպարվեստը: Արվեստի արդիական ուղղությունները թափանցեցին նաև հայ կերպարվեստի բնագավառ: Ի հայտ եկավ մասնագիտական բարձր կրթություն ստացած ստեղծագործողների նոր սերունդ: Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի, Փարիզի, Հռոմի գեղարվեստի ակադեմիաներն ավարտած հայ գեղանկարիչները հեղինակեցին բարձրարվեստ գործեր:

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սան **Գևորգ Բաշինջաղյանը** հայտնի է իր բնանկարներով («Դեպի Արագած տանող ճանապարհը», «Արարատ» և այլն):

Այդ շրջանի հայ նկարչությունը, այդ թվում նաև բնանկարը, գեղարվեստական նոր որակ և ազգային շեշտված դիմագծեր է ձեռք բերել հատկապես Մարտիրոս Սարյանի (1880–1972) գործերում:

Պատմական նկարի ձևավորման ու զարգացման գործում բացառիկ դեր է խաղացել **Վարդգես Սուրենյանցը**: Նա անդրադարձել է նաև առասպելական շրջանի պատմությանը:

Նոր շրջանի հայ քանդակագործության հիմնադիրներից է Հռոմի գեղարվեստի ակադեմիայի շրջանա-

Գևորգ Բաշինջաղյան.
«Ս. Ղազար կղզին գիշերով»



Մարտիրոս Սարյան. «Հայաստան»

վարտ, պոլսահայ վարպետ **Երվանդ Ոսկանը**: Շոշափելի է նաև քանդակագործ **Անդրեաս Տեր–Մարուքյանի** ներդրումը: Նրա կերտած Խաչատուր Աբովյանի հուշարձանը նոր շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:

Թատրոնը: Այս շրջանում ստեղծվում է հայ պրոֆեսիոնալ թատրոնը: **1861 թվականին Կ. Պոլսում** կազմվեց առաջին մշտական խումբը՝ **Պետրոս Մաղաքյանի** ղեկավարությամբ: Այն հայտնի է «Արևելյան թատրոն» անունով:

Կ. Պոլսում **Հակոբ Վարդովյանի** գլխավորությամբ 1868 թ. ստեղծվում է նոր թատերական կազմակերպություն, որը հանդես էր գալիս հայերեն ու թուրքերեն ներկայացումներով:

Հայ թատրոնը զարգանում է նաև Թիֆլիսում: Այստեղ հրավիրված պոլսահայ դերասանները՝ **Պետրոս Ադամյան, Սիրանույշ,** իրենց խաղացանկով մեծացնում են հասարակության հետաքրքրությունը թատրոնի հանդեպ:

Երաժշտությունը: Նույն ժամանակահատվածում աննախադեպ նվաճումներ ունեցավ հայ երաժշտական մշակույթը:

Տիգրան Չուխաճյանը հիմնադրեց հայ օպերային արվեստը: Նրա **«Արշակ Բ»** օպերան (1868 թ.) հայ օպերային ժանրի առաջին ստեղծագործությունն է:

XIX դ. երկրորդ կեսի կարևորագույն ձեռքբերումներից է արևելահայ կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը: Դրա հիմնադիրն էր **Քրիստափոր Կարա–Մուրզան**:

Ստեղծվեց հայ աշուղական ազգային դպրոցը՝ **Ջիվանու** (Սերովբե Լևոնյան) գլխավորությամբ:

Հայ հոգևոր երգը նոտագրելու և աղավաղումներից փրկելու խնդիրը փայլուն կերպով լուծեց հանճարեղ **Կոմիտասը**: Նա տարիներ շարունակ զբաղվեց հայ ժողովրդական և հոգևոր երգերի նշագրմամբ, հետազոտությամբ և ժողովրդականացմամբ:

Սիրանույշ

Քրիստափոր Կարա-Մուրզան իր երգչախմբով

Հայ ազգային օպերայի առաջընթացի ճանապարհին նշանակալի քայլ էր **Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան**:

Ճարտարապետություն և քաղաքաշինություն: Արդյունաբերականացող Ռուսաստանյան կայսրության կազմում գտնվող Արևելյան Հայաստանի առաջընթացը նկատվում է նաև քաղաքաշինության բնագավառում: Արևելյան Հայաստանում քաղաքներն էական վերակառուցման ենթարկվեցին: **Երևան, Ալեքսանդրապոլ, Գորիս, Նոր Բայազետ** քաղաքների կառուցապատումն իրականացվեց ըստ հաստատված գլխավոր հատակագծերի:

Հայաստանում կառուցվեցին եվրոպական տիպի շենքեր: Տեղական սև տուֆից կառուցված Երևանի բնակելի տներն իրենց ճարտարապետությամբ զուգակցում էին ազգային ավանդույթները ռուսական կլասիցիզմի ոճի հետ:

Հայկական կապիտալը, որ գործում էր հիմնականում հայրենիքի սահմաններից դուրս, մեծ դեր խաղաց Թիֆլիսի և Բաքվի կառուցապատման ու զարգացման գործում: Բազմազգ բնակչություն ունեցող Թիֆլիսում հայերի թվաքանակը գերակշռող էր, որի պատճառով քաղաքագլուխն ավանդաբար հայ էր ընտրվում: Քաղաքի կենտրոնի ճարտարապետական կերպարում կարևոր էին հայկական թատրոնների շենքերը, հայ մեծահարուստների առանձնատները, առևտրական տները և այլն:

Արմեն Տիգրանյան

Թիֆլիսում գործող նշանավոր հայ ճարտարապետներից էին **Գ. Տեր-Միքելյանը, Հ. Քաջազնու-**

Մ. Արամյանցի «Մաժեստիկ» (1912–1915 թթ.)՝ այժմյան «Մարիոթ» հյուրանոցի շենքը Թիֆլիսում
Ճարտ.՝ Գաբրիել Տեր–Միքելյան

նին և ուրիշներ: Նրանց կառուցած շենքերը այսօր էլ զարդարում են Թբիլիսիի կենտրոնը: Հայ ճարտարապետները ծանրակշիռ ներդրում ունեն նաև **Բաքու** քաղաքի կառուցապատման գործում:

Արևմտյան Հայաստանի քաղաքներն այս առումով լուրջ փոփոխություններ չունեցան: Արևմտահայ ճարտարապետությունը զարգանում էր **Կ. Պոլսի Պալյանների** նշանավոր տոհմի ճարտարապետների շնորհիվ:

Այսպիսով՝ **հայ ճարտարապետությունը զարգացավ նոր ժամանակների արդիական նվաճումների ու ազգային ավանդույթների համադրման ոգով**:

Ինչպես տեսանք, **նոր ժամանակների ավարտական փուլում հայությունը ընթանում էր ժամանակի քաղաքակրթական զարգացումների ուղիով և իր արժանի տեղը հաստատում քաղաքակիրթ աշխարհում**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկեք կերպարվեստի տարածված ուղղությունները: Ի՞նչ նշանավոր հայ կերպարվեստագետներ գիտեք. նշե՛ք նրանց գործերից մի քանիսը:
2. Ներկայացրե՛ք հայ պրոֆեսիոնալ թատրոնի պատմությունը և նշանավոր ներկայացուցիչներին. ի՞նչ գիտեք նրանց մասին:
3. Ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին հայ երաժշտական արվեստում: Ովքե՞ր էին նշանավոր ներկայացուցիչները. նրանց ո՞ր գործերին եք ծանոթ:
4. Ինչո՞վ էր պայմանավորված քաղաքաշինության զարգացումը:

5. Ովքե՞ր էին այդ ժամանակաշրջանի նշանավոր ճարտարապետները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օգտվելով լրացուցիչ գրականությունից և համացանցից՝ պատրաստե՛ք զեկույցներ արվեստի որևէ բնագավառի երկու ներկայացուցչի վերաբերյալ, փորձե՛ք ներկայացնել նրանց մասին կենսագրական հետաքրքիր տվյալներ:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարդգես Սուրենյանց, Գևորգ Բաշինջաղյան, Մարտիրոս Սարյան, Երվանդ Ոսկան, Անդրեաս Տեր–Մարուքյան, Պետրոս Մաղաքյան, «Արևելյան թատրոն», Պետրոս Ադամյան, Սիրանույշ, Տիգրան Չուխաճյան, «Արշակ Բ» օպերա, Քրիստափոր Կարա–Մուրզա, հայ աշուղական դպրոց, Ջիվանի, Կոմիտաս, Արմեն Տիգրանյան, «Անուշ» օպերա, Գ. Տեր–Միքելյան, Հ. Քաջազնունի, արդիական նվաճումների և ազգային ավանդույթների համադրում

ԲԱԺԻՆ
III

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/aifs/

ԳԼՈՒԽ XI ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

§ 37. ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԽՈՇՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Հայոց պատմությունը, ինչպես գիտեք, ընդգրկում է ոչ միայն Հայաստանի, այլև բուն հայրենիքից դուրս առաջացած հայկական գաղթավայրերի պատմությունը: Եղել են ժամանակներ, որ հայ ազգային, քաղաքական և մշակութային կյանքը հիմնականում զարգացել է Հայաստանից դուրս: **Դա մեր պատմության առանձնահատուկ կողմերից է**:

Գաղութների առաջացումը: Հայ ժողովրդի որոշ հատվածներ պատմական տարբեր ժամանակաշրջաններում վերաբնակվել են Հայաստանից դուրս՝ մոտակա կամ հեռավոր երկրներում: Հայերը հայրենիքից հեռու հայտնվում էին կամավոր կամ բռնի **արտագաղթի** հետևանքով: Իսկ արտագաղթի պատճառները տարբեր էին՝ անկախ պետականության կորուստ, օտարների դաժան տիրապետություն, ցեղասպանություն, տնտեսական, սոցիալական և քաղաքական ծանր վիճակ, սով, համաճարակներ և այլն:

Նոր Ջուղայի
Ս. Աստվածածին եկեղեցին

171 von 194 12.02.2021, 11:07



Լվովի հայկական՝ Մարիամ Աստվածածնի Վերափոխման մայր տաճարը, 1363–1370 թթ.

Միջնադարում հայերը՝ զանգվածաբար, առանձին խմբերով կամ անհատապես, հաստատվել էին **Բյուզանդիայում, Իրանում, Օսմանյան կայսրությունում** (կենտրոնական ու արևմտյան նահանգներ, արաբական երկրներ): Նոր դարերի սկզբում հայերի հոսքը մեծացավ դեպի Հնդկաստան, Ռուսաստան, Եվրոպայի տարբեր պետություններ և այլն:

Հայերը հոծ զանգվածներով բնակվում էին տարբեր քաղաքներում, ավաններում, գյուղերում կամ հիմնում էին նոր բնակավայրեր: Նրանք բնակության նոր երկրում սովորաբար ձևավորում էին հայկական **համայնք**:

Յուրաքանչյուր պետությունում ստեղծված համայնքը ընդունված է անվանել գաղութ:

Գաղութի կազմավորման և գոյատևման համար անհրաժեշտ էին նաև այլ պայմաններ: Առաջնահերթ խնդիր էր մայրենի լեզվի, ազգային հավատի, ինքնագիտակցության, ավանդական ապրելակերպի պահպանումը:

Հայերի արտահոսքը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար: Բուն հայրենիքում պակասեց հայ ժողովրդի ներուժը: Էական փոփոխություն կրեց Հայաստանի բնակչության գրեթե միատարր էթնիկական պատկերը: Մեծացավ եկվոր քոչվորների և մուսուլմանների թիվը: Երկրի բազմաթիվ նահանգներում խիստ նվազեց բնիկ ժողովրդի՝ հայերի թվաքանակը: Իսկ **Մեծ եղեռնից** հետո հայազրկվեց Հայաստանի մեծ մասը:

Խոշոր գաղութները: Հայկական գաղութներն առաջացել են դեռևս միջնադարում: Արտագաղթը հատկապես աղետալի չափերի հասավ քոչվորական ցեղերի արշավանքների շրջանում և հայոց թագավորությունների անկումից (1045 թ., 1375 թ.) հետո:

Նոր դարերի սկզբի դրությամբ հայերը բնակություն էին հաստատել աշխարհի ավելի քան 20 երկրներում: XVII դ. կեսերից մինչև XX դ. սկզբները հիմնական գաղթավայրերն էին Իրանը, Հնդկաստանը, Ռուսաստանը, Արևմուտքի զարգացած երկրները, Սիրիան, Լիբանանը, Եգիպտոսը: Այս ժամանակաշրջանում որոշ համայնքներ ստվարացան, իսկ մի մասն էլ անկում ապրեց:

Մեծ թվով հայեր էին ապրում Օսմանյան կայսրության մայրաքաղաք **Կոստանդնուպոլսում**: XV դ. կեսերից սկսած տեղի գաղութը փաստորեն դարձավ այն կենտրոնը, ուր ձևավորվում և վերելք էր ապրում **հայկական քաղաքակրթության բաղկացուցիչ մասը կազմող արևմտահայ մշակույթը**: XIX դ. վերջերին Կ. Պոլսում կար 200 հազար հայ բնակչություն: Այս համայնքը հայության ազգային, կրոնական, հասարակական ու քաղաքական կյանքում ունեցավ վիթխարի դերակատարություն:

Հնդկաստանի հայ համայնքը XVIII դարում ստվարացավ հատկապես իրանահայության հաշվին: Հաջորդ դարասկզբին այնտեղ հաշվվում էր մոտ 25 հազար մարդ:

Իրանի հայ համայնքում նոր ժամանակների ավարտին հաշվվում էր մոտ 200 հազար մարդ:

Եգիպտոսում այդ նույն ժամանակ հայերի թիվը մոտ 15 հազար էր:

Նոր դարերում հայկական ամենամեծ գաղթավայրը **Ռուսաստանյան կայսրությունն** էր: Այստեղ Առաջին աշխարհամարտի նախօրեին, Արևելյան Հա-

յաստանից դուրս, ապրում էր մեկ միլիոն հայ: Մեծ համայնքներ էին կազմավորվել Թիֆլիսում, Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում: Իսկ Ղրիմում հայկական խոշոր համայնք գոյություն ուներ դեռ միջնադարից:

Մեծ գաղութներ կային նաև Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում և Ֆրանսիայում:

Հայկական գաղթավայրերում մեր հայրենակիցները ապրել են որպես հավաքական ամբողջություն, դիմագրավել են ձուլման վտանգին, պաշտպանել համայնքի շահերն ու ազգի պատիվը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:
2. Ի՞նչ է գաղութը: Ո՞ր երկրներում էին հաստատվում հայերը միջնադարում և նոր ժամանակներում:
3. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ գաղութի գոյատևման համար:
4. Ներկայացրե՛ք արտագաղթի հետևանքները Հայաստանի համար:
5. Թվարկե՛ք հայկական հիմնական գաղթավայրերը: Ներկայացրե՛ք խոշոր համայնքները, դրանց թվաքանակը Նոր շրջանում: Որտե՞ղ էին ամենից շատ հայեր ապրում՝ հայրենիքո՞ւմ, թե՞ գաղթավայրերում:
6. Փորձե՛ք գնահատել Կ. Պոլսի հայ համայնքի դերը մեր պատմության մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ հայկական գաղթավայրերի պատմությունը:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական գաղթավայրերի պատմություն, արտագաղթ, համայնք, գաղութ, ավանդական ապրելակերպ, Հայաստանի միատարր էթնիկական պատկեր, Ղրիմի հայկական համայնք

§ 38. ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ազգային–քաղաքական կյանքի կազմակերպումը: Գաղթավայրերի հայերը, աստիճանաբար շփվելով բնակության երկրի հասարակության հետ, մասնակցում էին նրա տնտեսական, քաղաքական ու սոցիալ–մշակութային կյանքին: Որպես տվյալ պետության հպատակներ կամ քաղաքացիներ՝ նրանք կատարում էին իրենց պարտականությունները և օգտվում որոշակի իրավունքներից:

Միաժամանակ նրանք պետք է լուծեին սեփական ազգային կյանքի կազմակերպման հիմնախնդիրը: Գաղթավայրում ծնված սերունդներին **հայեցի դաստիարակություն տալու, ազգային ինքնությունը պահպանելու և Հայաստանից հեռու գոյատևելու համար անհրաժեշտ էր ունենալ ազգային եկեղեցի, դպրոց, համայնքի գործերը տնօրինող ազգային մարմիններ և գործիչներ**:

Գաղթավայրերի հայերը, ելնելով տվյալ երկրի հասարակական զարգացման պայմաններից և պետության վարած քաղաքականությունից, ձգտում էին ստանալու ազգային կյանքի կազմակերպման համար որոշակի իրավունքներ: Օրինակ՝ Ռուսաստանյան կայսրության մի շարք հայկական համայնքներ ունեին ազգային սովորույթներով գործող դատարան, օգտվում էին առևտրական և այլ արտոնություններից:

Նոր շրջանում համայն հայությանը միավորող ոչ միայն հոգևոր, այլև ազգային–քաղաքական կառույցի դեր էր կատարում **Հայ առաքելական եկեղեցին**: Գրեթե բոլոր գաղթավայրերում հիմնվել էին հայկական եկեղեցիներ և դպրոցներ:

Արդյունաբերական հասարակության ձևավորումը և զարգացումը հանգեցրին նրան, որ օտար երկրներում ստեղծված **հայկական կապիտալը** այլևս չէր կարողանում դիմակայել հզոր երկրների կապիտալի մրցակցությանը: Նրա բնականոն գործունեության համար **անհրաժեշտ էր զարգանալ սեփական հայրենիքում և հայրենի պետության հոգածության ներքո**:

Ահա թե ինչու Նոր շրջանում Հայաստանի անկախության վերականգնման համար նշանակալի գործունեություն էին ծավալել Հնդկաստանի և Ռուսաստանի

հայկական գաղութները՝ ի դեմս հայտնի գործիչներ **Հ. Էմինի, Մ. Բաղրամյանի, Շ. Շահամիրյանի, Հ. Արղությանի** և ուրիշների:

XIX դ. վերջից ստեղծվեցին համահայկական նոր կառույցներ՝ ազգային կուսակցություններ (նրանց մասին դուք արդեն գիտեք), հասարակական տարբեր կազմակերպություններ և այլն:

Համազգային կարևոր դերակատարություն ստանձնեց եգիպտահայ մեծահարուստ **Պողոս Նուբար** փաշայի կողմից Եգիպտոսում **1906 թ.** հիմնված **Հայկական բարեգործական ընդհանուր միությունը**: ՀԲԸՄ–ն գործում է մինչ օրս:

Հայկական բարեգործական ընդհանուր միության զինանշանը

Համահայկական կառույց ստեղծվեց **1910 թվականին** ԱՄՆ–ում՝ **Հայ օգնության միությունը**: Դաշնակցության կողմից ստեղծված ՀՕՄ–ը կանանց բարեգործական կազմակերպություն է: Այն մեծ օգնություն ցուցաբերեց Մեծ եղեռնից հետո տարբեր երկրներում հաստատված հայ գաղթականներին: ՀՕՄ–ը գործում է նաև մեր օրերում, մասնաճյուղեր ունի ՀՀ–ում և աշխարհի շատ երկրներում:

Հայ օգնության միության զինանշանը

Քաղաքական առումով համազգային նշանակություն ստացան նաև 1912 թ. ստեղծված **Հայոց ազգային բյուրոն** և **Ազգային պատվիրակությունը**:

Համահայկական նշանակության կառույցների շարքում պետք է նշել նաև **Կ. Պոլսի Ազգային ժողովը**, որը ստեղծվել էր 1844 թ.: Ազգային սահմանադրության հաստատումից հետո արևմտահայության համար այն դարձավ կենտրոնական ազգային մարմին:

Կրթության և տպագրության կազմակերպումը: Հայապահպանության խնդրի լուծումը նախ և առաջ կապված էր գաղութներում հայկական դպրոցների ստեղծման հետ: Նոր դարերում հայկական դպրոցը առավելաբար զարգանում էր Հայաստանից դուրս:

Այս շրջանում հայկական բազմաթիվ դպրոցներ էին հիմնվել Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Եգիպտոսում և այլուր: Դրանց մի մասին, հատկապես կրթական և մշակութային կյանքում մեծ դեր խաղացած ուսումնական հաստատություններին, դուք արդեն ծանոթացել եք Նոր շրջանի հայկական մշակույթը ներկայացնող դասերից (վերհիշե՛ք այդ դասանյութերը):

Կ. Պոլսում 1860–ական թվականներին գործում էին 34 արական և 14 իգական դպրոցներ: Պոլսահայ

Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար աբբահոր արձանը Ս. Ղազար կղզում

նշանավոր դպրոցների շարքում ավելացավ **1886 թ.** հիմնադրված **Կեդրոնական վարժարանը**: Կ. Պոլսի մոտ գտնվող **Արմաշի վանքում 1889 թ.** բացվեց դպրեվանք: Այն բարձր հոգևոր ուսումնական հաստատություն էր և արևմտահայերի համար ուներ նույն նշանակությունը, ինչ Գևորգյան ճեմարանը արևելահայերի կյանքում:

Հայկական գաղթավայրերում գործում էին բազմաթիվ նշանավոր ուսումնական հաստատություններ: Օրինակ՝ **Կալկաթայում 1821 թ.** հիմնված **Մարդասիրաց ճեմարանը**, Վենետիկում **1870 թ.** տեղի Ռափայելյան ու Փարիզի Մուրատյան վարժարանների միավորմամբ ստեղծված **Մուրատ–Ռափայելյան վարժարանը**:

Դուք գիտեք, որ ավելի քան 500 տարի առաջ Վենետիկում է սկզբնավորվել **հայկական տպագրությունը**: Այն զարգանում էր առավելաբար հայկական տարբեր գաղթավայրերում: Նոր ժամանակներում հրատարակչական գործը մեծ առաջընթաց ունեցավ, տպարաններ հիմնվեցին Ամստերդամում, Մարսելում, Զմյուռնիայում, Մադրասում և այլուր:

Տպագրական արվեստը բուռն զարգացում ապրեց հատկապես Կոստանդնուպոլսում: XX դ. սկզբներին այստեղ գործում էր 68 հայկական տպարան:

Հայերի բողոքի երթը Լիբանանում՝ ուղղված Մեծ եղեռնի զոհերի հիշատակի 91–րդ տարելիցին

Հայապահպանության խնդիրը: Օտար ափերում ապրող հայերի համար մշտապես գոյություն ունի ձուլման վտանգը: Մուսուլմանական երկրների հայկական համայնքները խաղաղ պայմաններում համեմատաբար ավելի քիչ էին ենթարկվում ձուլման, որովհետև կային կրոնական, մշակութային և սովորութային էական տարբերություններ հայերի ու մուսուլմանների միջև: Իսկ եվրոպական քրիստոնեական երկրներում ուծացման համար նպաստավոր միջավայր էր առաջանում: Այդ պատճառով հատկապես Լեհաստանում, նաև Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլ երկրներում դարերի ընթացքում հարյուրհազարավոր հայեր, կորցնելով ազգային լեզուն, հավատը, սովորույթները, ձուլվել են տեղի իշխող ազգերին:

Պատմությունը ցույց է տալիս, որ կազմակերպված ազգային կյանքով ապրող հայկական գաղութները կարողացել են պահպանել ազգային լեզուն, հավատը, զարգացնել մշակույթը:

Հայկական կրթությունը, գիտությունը, տպագրական գործը, մամուլը, արվեստը նոր ժամանակներում՝ հատկապես նրա առաջին փուլում, հիմնականում զարգացել են Հայաստանից դուրս: Գաղթավայրերում ստեղծված մշակույթն էապես նպաստել է Հայաստանում ազգային մշակույթի զարգացմանը, ինչպես նաև

ծառայել է ազգային ինքնության պահպանման գործին **և՛ հայրենիքում, և՛ գաղթավայրերում**:

Մեր օրերում նույնպես հայկական գաղթավայրերի՝ Սփյուռքի առջև ծառացած են **ազգապահպանության, գոյատևման** ու **հայրենիքի** հզորացմանը աջակցելու հիմնախնդիրները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գաղթավայրերի հայերը ի՞նչ իրավունքներ պետք է ձեռք բերեին ազգային ինքնությունը պահպանելու համար:
2. Նշե՛ք, թե ինչ արտոնություններ ստացան հայերը որոշ երկրներում. հիշե՛ք հայոց և համաշխարհային պատմություններից ձեր սովորածը:
3. Ինչո՞ւ գաղթավայրերի հայության առաջադեմ ներկայացուցիչները ծրագրեր կազմեցին և պայքար ծավալեցին Հայաստանի անկախ պետականությունը վերականգնելու համար:
4. Որո՞նք էին գաղութահայության ազգային–քաղաքական կյանքի հիմնական կենտրոնները և համազգային կառույցները Նոր շրջանում: Թվարկե՛ք հայտնի գործիչների:
5. Ներկայացրե՛ք գաղթավայրերի նշանավոր կրթական հաստատությունները:
6. Ո՞ր երկրներում էր զարգացած հայկական տպագրությունը:
7. Ինչո՞ւ է քրիստոնեական երկրներում հայերի ձուլման վտանգն ավելի մեծ, քան մուսուլմանական միջավայրում:
8. Ի՞նչ դեր է ունեցել հայկական գաղթավայրերում ստեղծված ազգային մշակույթը Հայաստանի համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պատրաստե՛ք ելույթ՝ «Հայ առաքելական եկեղեցու դերը գաղթավայրերի հայության ազգային կյանքի կազմակերպման և հայապահպանության գործում» թեմայով: Օգտվե՛ք նաև Հայոց եկեղեցու պատմությունից ստացած տեղեկատվությունից, ինչպես նաև համացանցի նյութերից:

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայեցի դաստիարակություն, ազգային ինքնություն, Հայկական բարեգործական ընդհանուր միություն, Հայ օգնության միություն, Կ. Պոլսի Կեդրոնական վարժարան, Արմաշի դպրեվանք, Կալկաթայի մարդասիրաց ճեմարան, Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարան, ուծացում, հայապահպանության խնդիր

II ԵՎ III ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին աշխարհի առաջատար երկրներում զարգանում էր արդյունաբերական հասարակությունը: Հայաստանը արդյունաբերացման ուղին բռնած Ռուսաստանի և կիսագաղութային Օսմանյան կայսրության կազմում էր: Այս իրավիճակը պայմանավորեց Հայաստանի զարգացման առանձնահատկությունները նրա երկու խոշոր հատվածներում: Այնուամենայնիվ, արդյունաբերական քաղաքակրթության նվաճումները մուտք գործեցին նաև հայ իրականություն, սկսեցին փոխել մարդկանց կենցաղը, ապրելակերպը, աշխարհայացքը:
   - *Ինչ բարեփոխումներ իրականացվեցին XIX դ. երկրորդ կեսին Ռուսաստանում: Ներկայացրեք դրանց ազդեցությունն Արևելյան Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքի զարգացման վրա: Ինչո՞ւ ցարիզմը հայերի նկատմամբ ուժեղացրեց ազգային ճնշման քաղաքականությունը:*
   - *Ընդհանուր գծերով ներկայացրեք արևմտահայության վիճակը Օսմանյան կայսրությունում:*
2. Հայ ազատագրական շարժումը XIX դարի երկրորդ կեսին թափ հավաքեց, ձևավորվեցին հասարակական–քաղաքական երեք հիմնական հոսանքներ, որոնք մշակում էին շարժման նոր գաղափարախոսությունը: Նախապատրաստվում էր պայքարի զինված փուլի ծավալումը: Շարժման առաջին լուրջ դրսևորումները եղան արևմտահայ սահմանադրական շարժումը և Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:
   - *Թվարկեք երեք հոսանքները, նշեք դրանց գլխավոր տարբերությունները: Հայտնի ինչ ներկայացուցիչների գիտեք: Ազգայնական գաղափարների տարածումը հայկական միջավայրում ինչ նշանակություն ունեցավ:*
   - *Ներկայացրեք արևմտահայ սահմանադրական շարժման առաջացման պատճառները և նշանակությունը:*
   - *Նշեք Զեյթունի 1862 թ. ապստամբության պատճառները և մի քանի հայտնի մասնակիցների:*
3. Ազգային–ազատագրական շարժման ընթացքը որոշակիորեն կախված էր նաև Ռուսաստանյան կայսրության և մյուս խոշոր տերությունների արտաքին քաղաքականությունից, նրանց դիրքորոշումից: Շուտով միջազգային հարաբերությունների օրակարգում իր ձևակերպումն ստացավ Հայկական հարցը:
   - *Ո՞ր պատերազմի հետ կապված և ո՞ր պայմանագրերով միջազգային դիվանագիտության մեջ մտավ Հայկական հարցը: Պարզաբանեք հարցի էությունը: Արտահայտեք ձեր տեսակետը հարցի միջազգայնացման վերաբերյալ, գնահատեք հայտնի «61–րդ հոդվածը»:*
4. XIX դարի 60–ական թթ. վերջերից հայ ազատագրական պայքարը քայլ առ քայլ դրվեց կազմակերպված հիմքերի վրա: Առաջ եկան ազգային–քաղաքական կազմակերպությունները, որոնք գլխավորեցին հայ ժողովրդի պայքարը

անկախության և ժողովրդավարական իրավունքների ձեռքբերման համար: Հայաստանի ազատագրության շարժումը մտավ զինված պայքարի փուլ:

- *Թվարկեք հայտնի խմբակներն ու կազմակերպությունները:*
- *Պարզաբանեք ազգային կուսակցությունների ստեղծման անհրաժեշտությունը:*
- *Պատրաստեք համառոտ զեկույց ազգային կուսակցություններից որևէ մեկի մասին՝ օգտվելով լրացուցիչ գրականությունից և համացանցի նյութերից:*
- *Որո՞նք էին հայդուկային շարժման առաջացման պատճառները: Թվարկեք ձեզ հայտնի հայդուկների:*
- *Ներկայացրեք ձեր սիրելի ֆիդայու կերպարը, մեկնաբանեք ձեր ընտրությունը:*

5. Հայ ժողովուրդը շարունակում էր հաստատակամորեն պայքարել իր պատմական իրավունքների վերականգնման և ժամանակի առաջադիմական միտումներին համահունչ զարգանալու համար: Սակայն հոգեվարք ապրող Օսմանյան կայսրությունը քաղաքակիրթ մոտեցում որդեգրելու փոխարեն որոշել էր բարբարոսական լուծում տալ Հայկական հարցին:
   - *Ո՞վ էր հայերի ցեղասպանական ծրագրի առաջին հեղինակն ու իրագործողը: Ի՞նչ հետևանքներ ունեցան 1890–ական թթ. հայկական կոտորածները: Վերհանեք Սասունի, Զեյթունի և Վանի հերոսական կռիվների նշանակությունը:*
6. XX դարի սկզբին ազգային շարժումները նոր ընթացք ստացան Արևմտյան Հայաստանում: Ազգային, ժողովրդավարական և սոցիալական իրավունքների համար հզոր պայքար ծավալվեց Արևելյան Հայաստանում:
   - *Ինչո՞ւ փոխվեց հայ ազգային ղեկավար ուժերի մարտավարությունը XX դարասկզբին: Վերհիշեք՝ երբ է տեղի ունեցել Ս. Առաքելոց վանքի կռիվը: Ձեր կարծիքով ինչո՞ւ Սասունի 1904 թ. ապստամբությունն ավարտվեց անհաջողությամբ:*
   - *Պարզաբանեք հայդուկային պայքարի նշանակությունը:*
   - *Ինչո՞ւ էր ցարիզմը համառորեն փորձում սահմանափակել Հայ առաքելական եկեղեցու իրավունքները և փակել հայկական դպրոցները:*
   - *Ներկայացրեք հայ–թաթարական 1905–1906 թթ. կռիվների արդյունքները և դասերը:*
7. Օսմանյան կայսրությունը XX դ. սկզբին անկասելիորեն գնում էր դեպի կործանում: Երիտթուրքերի կուսակցությունը, գալով իշխանության, փորձ արեց արդիականացնելու տերությունը. երկիրը հռչակվեց սահմանադրական միապետություն, ազդարարվեց ժողովրդավարական իրավունքների մասին: Սակայն դա ձևական քողն էր, որի տակ թաքնված էր երիտթուրքերի իսկական էությունը՝ մարդատյացությունը և մեծապետական ազգայնամոլությունը:
   - *Ո՞ր իրադարձության արդյունքում իշխանության եկան երիտթուրքերը: Ի՞նչ գաղափարախոսություն որդեգրեցին նրանք արտաքին և ներքին քաղաքականության մեջ:*
   - *Միջազգային ի՞նչ իրադրությունում վերաբացվեց Հայկական հարցը: Ինչո՞ւ թուրքական կողմին ի վերջո հաջողվեց հերթական անգամ տապալել հայկական բարենորոգումների գործադրումը:*
8. XX դարի սկզբին մեծ տերությունների միջև եղած արմատական հակասությունները հանգեցրին ընդհանուր պատերազմի: Այն ընթացավ երկու խմբա-

վորումների՝ Եռյակ (ապա՝ Քառյակ) դաշինքի և Անտանտի միջև: Առաջին աշխարհամարտի բաղկացուցիչ մասը կազմեց Կովկասյան ճակատը, որտեղ հերթական անգամ բախվեցին Ռուսաստանը և Թուրքիան: Մեծ էին հայերի ակնկալիքները ռուսական զենքի հաղթանակից:

- *Ներկայացրեք Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների նպատակները Առաջին աշխարհամարտում: Որոնք էին Կովկասյան ճակատի գլխավոր ռազմաքաղաքական արդյունքները 1914–1916 թթ.:*
- *Ինչպե՞ս սկզբնավորվեց ու ծավալվեց հայ կամավորական շարժումը Կովկասյան ճակատում: Թվարկե՛ք հրամանատարներին և նրանց ռազմական հաջողությունները:*

9. Օգտվելով Մեծ պատերազմի առաջացրած խառը իրադրությունից՝ երիտթուրքերը հայության նկատմամբ պետականորեն իրագործեցին վաղօրոք մշակված հրեշավոր ծրագիրը: Հայաստանի մեծ մասը հայազրկվեց, իսկ հայերի մեծ մասը հայրենազրկվեց:
   - *Բացատրե՛ք «ցեղասպանություն» հասկացությունը: Հիմնավորե՛ք, որ հայերի նկատմամբ թուրքական պետության իրականացրածը ցեղասպանություն է:*
   - *Խմբային կամ անհատական աշխատանքով պատրաստե՛ք «Հայոց մեծ եղեռնը և դրա հետևանքները» թեմայով ելույթ՝ օգտվելով նաև լրացուցիչ աղբյուրներից ու համացանցի համապատասխան կայքէջերից (genocide. am, www. genocide–museum. am/arm/armenian_genocide. php, encyclopedia. am, hy. wikipedia. org և այլն):*
10. Համաշխարհային կռվի պայմաններում Ռուսաստանում 1917 թվականին տեղի ունեցան երկու հեղափոխություններ, որոնք արմատապես փոխեցին նրա զարգացման ուղին: Դրանք մեծ ազդեցություն ունեցան նաև նախկին կայսրության ազգային երկրամասերի ժողովուրդների պատմական ընթացքի վրա:
   - *Ցարիզմի տապալումից հետո ինչ փոփոխություններ եղան Ռուսաստանի կենտրոնում և Անդրկովկասում:*
   - *Փաստերով ցո՛ւյց տվեք, որ հայ ազգային–քաղաքական կյանքը վերելք ապրեց 1917 թվականին: Ազգային ինչ նոր մարմիններ ստեղծվեցին:*
11. Խորհրդային Ռուսաստանը, Քառյակ դաշինքի երկրների հետ առանձին հաշտություն կնքելով, դուրս եկավ Առաջին աշխարհամարտից: Այդ ճանապարհին նա զոհաբերեց հայության պատմական իրավունքները, և Հայաստանի մեծ մասը կրկին հայտնվեց թուրքական տերության կազմում: Վերսկսվեց պատերազմը Կովկասյան ճակատում, որն ի վերջո վերածվեց հայ–թուրքական բախման:
   - *Ո՞ր պայմանագրով բոլշևիկյան իշխանությունը դուրս եկավ պատերազմից:*
   - *Ներկայացրե՛ք Կովկասյան ճակատում ձևավորված հայկական զորամիավորումները, հրամանատարներին:*
   - *Իրականում ո՞ւմ միջև էր ընթանում պատերազմը Կովկասյան ճակատում 1918 թ. ապրիլ–մայիս ամիսներին: Թվարկե՛ք հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերը, աչքի ընկած ղեկավարներին և զորականներին: Վերհանե՛ք Մայիսյան փառահեղ հաղթանակների պատմական նշանակությունը:*

- *Խմբային կամ անհատական աշխատանքով պատրաստեք ելույթ Մայիսյան հերոսամարտերից մեկի վերաբերյալ՝ օգտվելով նաև լրացուցիչ աղբյուրներից ու համացանցի նյութերից:*

12. XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին մեծ առաջընթաց ունեցավ հայկական մշակույթը: Վերելք ապրեց կրթական գործը, հայ գիտնականները քայլում էին ժամանակի գիտական նվաճումներին համահունչ: Գրականության և արվեստի ոլորտները նույնպես զարգանում էին արդիական ուղղությունների և սկզբունքների հիման վրա:
    - *Ներկայացրեք հայ ազգային կրթական նշանավոր հաստատությունները: Գիտության ո՞ր ասպարեզներում նվաճումների հասան հայ գիտնականները:*
    - *Ձեր կարծիքով հայագիտությունը ինչո՞ւ վերելք ապրեց: Նշեք հայտնի հայագետների: Ի՞նչ նշանավոր հայ պատմաբանների գիտեք:*
    - *Խմբային կամ անհատական աշխատանքով պատրաստեք ելույթ հայ մշակույթի որևէ ականավոր գործչի մասին՝ օգտվելով նաև լրացուցիչ աղբյուրներից ու համացանցի նյութերից:*
13. Հայոց պատմության ուրույն մասն է կազմում հայկական գաղթավայրերի պատմությունը: Հայրենիքից հեռու ձևավորված համայնքների առջև ծառացել էին ազգային ինքնության պահպանման, մշակույթի զարգացման և Հայաստանին օգնելու, հզորացնելու հիմնախնդիրները:
    - *Ո՞ր երկրներում էին կազմավորվել խոշոր հայկական գաղութներ: Ներկայացրեք դրանց պատմական նշանակությունը:*
    - *Համազգային ի՞նչ կառույցներ են ստեղծվել Նոր շրջանում:*
    - *Փաստերով ցո՛ւյց տվեք գաղթավայրերի դերը և ունեցած ներդրումը ազգային մշակույթի զարգացման և հայապահպանության գործում:*

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

Ազատագրական խմբակ — Որևէ երկրի, ժողովրդի ազատագրությունը գլխավոր նպատակ հռչակած և այն իրագործելու համար ստեղծված կազմակերպական միավոր կամ մարդկանց խումբ: Հայկական իրականության մեջ դրանք ստեղծվեցին և գործունեություն ծավալեցին 1860–1880–ական թվականներին:

«Ազգային սահմանադրություն» (1860 թ.) — Արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրություն: Ընդունել է Կ. Պոլսի Ազգային ժողովը 1860 թ. մայիսի 24–ին: Բարձր դուռը (սուլթանական կառավարությունը) էական փոփոխություններով այն վավերացրել է 1863 թ. մարտի 17–ին՝ «Հայոց ազգի կանոնադրություն» անունով: «Ազգային սահմանադրություն»–ն ուներ 99 հոդված: Կ. Պոլսի հայոց պատրիարքը ճանաչվում էր «ազգի ղեկավար» և միջնորդ պետության ու հայ ժողովրդի միջև:

Ազգայնականություն (նացիոնալիզմ. ֆրանս.՝ nationalisme, լատ.՝ natio – ժողովուրդ բառից) — Գաղափարախոսություն, ըստ որի՝ ազգը հասարակական միավորման բարձրագույն ձևն է: Ազգայնականությունն ուղղված է արտաքին ոտնձգությունների դեմ, արտահայտում է համազգային շահեր և նպաստում ազգային ինքնագիտակցության զարգացմանը: Դրա իմացաբանական հիմքում մի շարք հատկանիշների (ազգային հպարտություն, ազգասիրություն, արժանապատվություն, հայրենասիրություն և այլն) արժևորումն է, ազգի արդար և բնական ձգտումը հավատարիմ մնալու սեփական կենսաձևին ու հարատևելու սեփական հայրենիքում՝ ուրիշ ազգերի հետ ներդաշնակ գոյակցության պայմաններում:

ԱՀԿ, Անդրկովկասյան հատուկ կոմիտե (Օզակոմ) — Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության Անդրկովկասի երկրամասային մարմինը՝ ԱՀԿ–ն, ստեղծվել է Թիֆլիսում 1917 թ. մարտի 9 (22)–ին: ԱՀԿ–ի նախագահը կադետ Վ. Խաղամովն էր, հայ ներկայացուցիչը՝ Մ. Պապաջանյանը: ԱՀԿ–ն գոյատևեց մինչև 1917 թ. նոյեմբերի 15–ը (նոր տոմարով՝ 28), երբ ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատը:

Ամիրայական դաս — Օսմանյան կայսրության մեջ հայազգի ամենահարուստ և ազդեցիկ մարդկանց դաս: *Ամիրա* պատվանունը շնորհվել է՝ սկսած XVI դարից: Ամիրայական հայտնի գերդաստաններից էին Տատյանները, Տյուզյանները, Պալյանները, Պեզճյանները և այլն: XIX դ. ամիրաների ընդհանուր թիվը մոտ 100 էր: Մեծ ազդեցություն ունեին սուլթանների պալատում, հայոց պատրիարքների վրա ու հայ համայնքում:

Երիտթուրքեր — Օսմանյան կայսրությունում հակասուլթանական շարժումը գլխավորող թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներ: 1889 թ. Կ. Պոլսում նրանք ստեղծեցին «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը: 1908 թ. անցնելով իշխանության գլուխ՝ դարձան ազգայնամոլներ, իսկ 1918 թ. ապարեզից հեռացան որպես քաղաքական ու ռազմական հանցագործներ. երիտթուրքերն էին կազմակերպել և իրականացրել հայերի Մեծ եղեռնը:

Էսնաֆություն (արաբ.՝ էսնաֆ – արհեստավոր, տնայնագործ բառից) — Միևնույն արհեստով զբաղվող աշխատողների միություն, կազմակերպություն Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում. արևելահայերի մոտ այն կոչվում էր համքարություն:

Թեմական դպրոց — Հայ ուսումնական հաստատություն Ռուսաստանյան կայսրությունում: 1836 թ. «Կանոնադրության» («Պոլոժենիե») հիման վրա ռուսահայ յուրաքանչյուր թեմ պետք է ունենար իր թեմական դպրոցը (այստեղից էլ՝ թեմական դպրոց անվանումը): Այդպիսի դպրոցներ են բացվել Թիֆլիսում (1837 թ. Ներսիսյան դպրոցը ստացել է թեմականի կարգավիճակ), Երևանում (1837), Շուշիում (1838), Աստրախանում (1838), ավելի ուշ՝ Նոր Նախիջևանում (1880), Շամախիում (1884): Խորհրդային իշխանության հաստատումից հետո թեմական դպրոցներն իրենց տեղը զիջել են միջնակարգ դպրոցներին:

Խամսայի մելիքություններ — Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի ու Դիզակի հինգ մելիքություններից կազմված առանձին վարչական միավորի անվանումը: Խամսայի մելիքությունները տարածվում էին Գանձակի գավառի սահմաններից մինչև Արաքս գետի ափերը: 1736 թ. Նադիր շահը Արցախն անկախ հայտարարեց Գանձակի խանությունից, վերահաստատեց Արցախի ներքին վարչական բաժանումն ու մելիքների ժառանգական իրավասությունները: Խամսայի մելիքությունների կառավարիչ նշանակվեց Դիզակի մելիք Եգանը, որը միավորում էր նաև Արցախի մելիքների ռազմական ուժերը: Վերջինս ստացավ նաև խանի տիտղոս:

Խանություն — Վարչական խոշոր միավորի անվանում ուշմիջնադարյան Պարսկաստանում: Խանության գլուխ կանգնած խանը ուներ վարչական, ռազմական և դատական իշխանություն:

Կայսրընտիր (կուրֆյուրստ) (գերմ.՝ Kurfürst, բառացի՝ ընտրող իշխան) — Իշխաններ (թվով՝ 7 հոգի, որից 3–ը՝ հոգևորական, 4–ը՝ աշխարհական) Սրբազան հռոմեական կայսրությունում, որոնք, XIII դարից սկսած, ընտրում էին կայսրին:

Կովկասի փոխարքայություն — Ռուսաստանյան կայսրության վարչատարածքային միավոր Կովկասում: Ստեղծվել է 1844 թ., կենտրոնը Թիֆլիսն էր, առաջին փոխարքա է նշանակվել իշխան Մ. Վորոնցովը: Փոխարքան օժտված էր լայն լիազորություններով, ռուսական կովկասյան զորքերի հրամանատարն էր: Կովկասի փոխարքայությունը վերացվել է 1882 թ., ապա վերականգնվել 1905 թ. և վերջնականապես վերացվել 1917 թ. մարտին:

Կուսակցություն — Հասարակության, դասակարգի կամ առանձին խավերի շահերն արտահայտող քաղաքական կազմակերպություն, որը, հանուն որոշակի նպատակների և գաղափարների, միավորում և ղեկավարում է նրանց առավել ակտիվ ներկայացուցիչների գործողությունները: Հայ իրականության մեջ կուսակցությունների ծնունդը պայմանավորված էր 1880–1890–ական թթ. հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարի վերելքով:

Համիդիե — քրդերից կազմված անկանոն զինվորական հեծյալ գնդեր օսմանյան Թուրքիայում: 1891 թ. կազմակերպել է սուլթան Աբդուլ Համիդ II–ը և կոչել իր անունով: Այն կազմված էր 30 գնդերից և չէր մտնում օսմանյան բանակի համակարգի մեջ, այլ պահպանվում էր որպես ինքնուրույն ռազմական միավոր՝ տեղակայված հայկական Երզնկա քաղաքում: Այդ զորամիավորումները ստեղծվել էին հայերի ազատագրական շարժումները ճնշելու, Արևմտյան Հայաստանում ջարդեր կազմակերպելու, ինչպես նաև ռուսական զորքերի դեմ կռվելու նպատակով:

Հայկական կորպուս — Հայկական զինվորական միավորում, որը ստեղծվել է 1917 թ. նոյեմբերին Կովկասյան ճակատում: Հայկական կորպուսի հրամանատար նշանակվեց ռուսական բանակի գեներալ–լեյտենանտ Թ. Նազարբեկյանը, հատուկ կոմիսար՝ Դ. Կանայանը (Դրո): Հայկական կորպուսի կազմի մեջ է մտել 2 դիվիզիա՝ 1–ին և 2–րդ (յուրաքանչյուրում՝ 4–ական գունդ), հեծելազորային բրիգադ (2 գունդ) և այլն: 1918 թ. մարտի 1–ին Հայկական կորպուսի և Հատուկ հայկական հավաքական ջոկատի միավորմամբ ստեղծվեց Առանձին հայկական կորպուսը՝ նույն Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ:

Հայկական հարց — Օտարների տիրապետությունից Հայաստանի ազատագրման, Հայկական լեռնաշխարհում ինքնուրույն հայկական պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակներին հասնելու համար մղված հայ ազգային–ազատագրական պայքարի հիմնահարցերի ամբողջությունը հայտնի է Հայկական հարց անվանումով: Հայկական հարցը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն է: Հայկական հարց եզրույթը միջազգային դիվանագիտության մեջ սկսել է գործածվել 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո և առաջին անգամ իր արտահայտությունը գտել Սան Ստեֆանոյի պայմանագրում (1878): Դրա 16–րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել Հայաստանի՝ իր տիրապետության տակ մնացող նահանգներում: Ժամանակակից պայմաններում Հայկական հարցն ընկալվում է որպես ամբողջ աշխարհի հայության ձգտումը՝ վերականգնել պատմական արդարությունը, ստեղծել իրական պայմաններ հայ ազգի համախմբ-

ման, սփյուռքահայերի ազգային ինքնության պահպանման, Հայաստանի միավորման համար:

Հայոց ազգային խորհուրդ (ՀԱԽ, կոչվում է նաև Արևելահայ ազգային խորհուրդ) — Ստեղծվել է Թիֆլիսում 1917 թ. սեպտեմբերի 29–ից հոկտեմբերի 13–ը կայացած Հայոց ազգային համախորհրդակցության (արևելահայերի համագումար) արդյունքում: ՀԱԽ–ը կազմված էր 15 անդամից, նախագահը գրող և հասարակական–քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանն էր: ՀԱԽ–ի առաջին կոչում նշվում էր. «Ազգային խորհուրդը ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը որպես գործադիր մարմին»:

«Հարավային ծրագիր» — Հայաստանի ազատագրության ծրագիր. Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետականությունը վերականգնելու 20 հոդվածից բաղկացած նախագիծ, որը կազմել էր Շ. Շահամիրյանը:

«Հյուսիսային ծրագիր» — Հայաստանի ազատագրության ծրագիր: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Արղությանը և Հովհաննես Լազարյանը 1780–ական թթ. սկզբին բանակցություններ էին վարում ռուսական պետական գործիչների հետ՝ արշավանք կազմակերպելու և Հայաստանը ազատագրելու նպատակով: Նրանք կազմում են նաև Հայաստանի ազատագրության և հայ–ռուսական դաշնագրի մի նախագիծ՝ բաղկացած 18 հոդվածից:

Հյուսիսային պատերազմ — Բալթիկ ծով դուրս գալու համար 1700–1721 թթ. Ռուսաստանի մղած պատերազմը Շվեդիայի դեմ: Ռուսաստանի դաշնակիցներն էին Ռեչ Պոսպոլիտան, Սաքսոնիան, Պրուսիան, Դանիան և այլն: Հյուսիսային պատերազմն ավարտվեց ռուսների հաղթությամբ, Ռուսաստանն իրականացրեց իր վաղեմի երազանքը՝ հաստատվեց Բալթիկ ծովի ափին:

Մահալ — XVI–XVIII դդ. վարչական միավոր Պարսկաստանում և նրան ենթակա երկրներում, այդ թվում՝ Արևելյան Հայաստանում: Ավելի խոշոր վարչական միավորները՝ բեգլերբեգությունները (բեկլարբեկություն) և խանությունները, բաժանված էին մահալների: Դրանք կառավարում էին բեկի տիտղոսով միրբոլուքը կամ նայիբը:

Մահտեսի — մուղդուսի, մուխսի. Երուսաղեմ ուխտի գնացած մարդ:

Մելիք (արաբ.՝ maliq – տեր, տիրակալ, արքա) — 1. Միջին դարերում Առաջավոր Ասիայի երկրների տիրակալների անվանումը: 2. Ուշ միջնադարում (պարսկական տիրապետության շրջանում) հայ իշխանական տների ներկայացուցիչներ, որոնք մի շարք վայրերում վերականգնել էին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը: Մելիքը միանձնյա իշխանապետական իրավունքներ ուներ իր տիրույթում:

Մուհաջիր (արաբ.՝ հաջարա – գաղթել բառից) — Ընդհանուր առմամբ նշանակում է մուսուլման գաղթական, փախստական, ներգաղթյալ կամ վտարանդի:

Պահպանողականություն — Հասարակական–քաղաքական գաղափարախոսություն, որի հետևորդները հակված էին պահպանելու կամ վերականգնելու հին կարգերը, դիմադրություն և թշնամանք էին ցուցաբերում առաջադիմությանը, նորին, առաջավորին՝ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (գիտություն, արվեստ, տեխնիկա, վարչակարգ և այլն):

Պանթյուրքիզմ — Համաթյուրքականություն, ծայրահեղ ազգայնամոլ գաղափարախոսություն, որի հիմքում ընկած է թյուրքալեզու ժողովուրդներին թուրքերի գլխավորությամբ մեկ պետության մեջ միավորելու դրույթը: Սկզբնավորվել է XIX դարի վերջին, դարձել երիտթուրքերի քաղաքականության հիմնական գաղափարական զենքը: Պանթյուրքիզմը այսօր էլ Թուրքիայի կառավարող վերնախավի քաղաքականության հիմնական միջոցներից է:

Պանիսլամիզմ — Համաիսլամականություն, կրոնաքաղաքական գաղափարախոսություն, որը սկզբնավորվել է XIX դ. երկրորդ կեսին և լայն տարածում գտել մահմեդական երկրներում: Պանիսլամիզմը եղել է Օսմանյան կայսրության պաշտոնական գաղափարախոսությունը սուլթան Աբդուլ Համիդ II–ի օրոք և մեծ ազդեցություն ունեցել պետության ներքին և արտաքին քաղաքականության վրա:

«Պոլոժենիե» (“Положение”) («Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան») — Կանոնադրություն, որով պետք է առաջնորդվեր Հայոց եկեղեցին Արևելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո: 1836 թ. մարտի 11–ին Նիկոլայ I կայսեր հրամանագրով վավերացվել է, իսկ 1837 թ. հունվարի 1–ից՝ գործադրվել: «Պոլոժենիե»–ն դադարել է գործելուց 1917 թ.:

«Պֆալցյան ծրագիր» — Հայաստանի ազատագրության՝ Իսրայել Օրու կազմած ծրագիր, որը բաղկացած էր 36 կետից: Ծրագիրը Հովհան Վիլհելմին ներկայացվեց 1699 թ. հոկտեմբերին: Առանձին, ոչ էական սրբագրումներից հետո մեծ իշխանն իր հավանությունը տվեց փաստաթղթին ու Օրուն առաջարկեց մեկնել Տոսկանա, Ավստրիա, Հռոմ և Ռուսաստան՝ առաջիկա արշավանքի կազմակերպման վերաբերյալ իր անունից պաշտոնական բանակցություններ վարելու:

Ջիհադ (արաբ.՝ բառացի՝ եռանդ, նկրտում) — «Սրբազան պատերազմ», որը, ըստ Ղուրանի որոշ դրույթների, պետք է մղեն մահմեդականները «անհավատների» դեմ: Ջիհադին մասնակցելը համարվել է յուրաքանչյուր մարտունակ մահմեդականի սրբազան պարտքը:

Ռեչ Պոսպոլիտա — Լեհ–լիտվական միացյալ պետության պաշտոնական անվանումը 1569–1795 թթ.:

Սանջակ — Վարչական միավոր Օսմանյան կայսրությունում և նրան ենթակա երկրներում, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում: Ավելի խոշոր վարչական միավորները՝ փաշայությունները և վիլայեթները (էյալեթ), բաժանված էին սանջակների, որոնք կառավարում էին սանջակ–բեյերը:

Սարդար (պարսկ.՝ գլխավոր, զորապետ, ընդհանուր հրամանատար) — Միջնադարյան Պարսկաստանում խոշոր զորաբանակի հրամանատար: Ղաջարական դինաստիայի ժամանակաշրջանում (XVIII դ. վերջից) Իրանի սահմանամերձ վիլայեթների պետերին, որոնք մեծարվում էին խան տիտղոսով և խանության զինված ուժերի ընդհանուր հրամանատարներն էին, սկսեցին անվանել սարդար:

Սղնախ — XVIII դ. առաջին կեսին Արևելյան Հայաստանի լեռնային բերդերի և ամրությունների, ամրացված շրջանների անվանումը: Համեմատաբար առատ տեղեկություններ են պահպանվել Ղարաբաղի, մասամբ՝ Սյունիքի սղնախների մասին: Սղնախների մղած պայքարն ապահովել է հայկական լեռնային գավառների անձեռնմխելիությունը:

Վիլայեթ — Ռազմա–վարչական ամենախոշոր միավորի անվանումը Օսմանյան կայսրությունում (1866 թ–ից, մինչ այդ կոչվում էր էյալեթ): Վիլայեթի գլուխ կանգնած էր բեյլերբեյը կամ վալին՝ վեզիրի կոչումով և փաշայի տիտղոսով, որն ուներ վարչական, ռազմական և դատական իշխանություն:

Ֆիդայի (արաբ.՝ զոհ, մատաղ, հանուն գաղափարի նահատակվող մարդ) — Արևմտյան Հայաստանում թուրքական բռնապետության դեմ պայքարող մարտիկ XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Ֆիդայիները գործել են որոշակի սկզբունքներով, որոնք հետագայում ամփոփել և ամբողջացրել է Անդրանիկ Օզանյանն իր «Մարտական հրահանգներում»: Որպես ժողովրդի ազատագրության գործին ամեն պահի զոհաբերվելու պատրաստակամության խորհրդանշան՝ ֆիդայիներն իրենց մոտ միշտ պահել են պատանքներ (դիասավաններ): Ֆիդայիները երդվում էին իրենց կյանքը զոհել հայրենիքի և ժողովրդի համար, լինել գաղտնապահ, ճշտախոս, բարոյապես բարձր, կրակել անվրեպ, մաքուր պահել զենքը, չհայհոյել, ոգելից խմիչք չօգտագործել, բավարարվել համեստ սննդով, չվիրավորել միմյանց, հարգանքով վերաբերվել աշխատավոր ժողովրդին՝ անկախ ազգությունից, մարտում լինել խիզախ, հնարամիտ և հաղթել թշնամուն, եթե անգամ նա թվական գերակշռություն ունենա:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1677 թ — Հայաստանի ազատագրության նպատակով Էջմիածնում գաղտնի ժողովի գումարումը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ
1699 թ. — Անգեղակոթի գաղտնի խորհրդակցության գումարումը
1701 թ. — Հայաստանի ազատագրության՝ Իսրայել Օրու կազմած ծրագրի ներկայացումը Պետրոս I–ին
1722 թ. աշուն — Դավիթ բեկի գլխավորած հայոց զորքի հաղթանակը ջևանշիր ցեղի դեմ
1724 թ. հունիսի 7 – սեպտեմբերի 26 — Երևանի հերոսական պաշտպանությունը օսմանյան զորքերի դեմ
1724 թ. — Դավիթ բեկի գլխավորությամբ հայկական իշխանության ստեղծումը Սյունիքում
1725 թ. մարտ — Թուրքական բանակի ոչնչացումը Վարանդայում
1727 թ. մարտ — Հալիձորի հաղթական ճակատամարտը թուրքական զորքերի դեմ
1736 թ. — Արցախի (Խամսա) մելիքությունների ինքնավարության ստեղծումը
1771 թ. — Հայաստանում առաջին՝ Էջմիածնի տպարանի հիմնումը
1772 թ. — Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի լույսընծայումը Մադրասում
1794 թ. — Հայ առաջին պարբերական «Ազդարարի» տպագրումը Մադրասում
1813 թ. հոկտեմբերի 12 — Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը
1815 թ. — Մոսկվայի Լազարյան ճեմարանի բացումը
1815 թ. — Հայկական նոր ձայնագրության ստեղծումը Հ. Լիմոնճյանի կողմից
1821 թ. — Կալկաթայի հայկական Մարդասիրաց ճեմարանի բացումը
1824 թ. — Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հիմնումը
1827 թ. հոկտեմբերի 1 — Երևանի բերդի գրավումը
1828 թ. փետրվարի 10 — Ռուս–պարսկական հաշտության պայմանագրի կնքումը Թուրքմենչայում
1828 թ. մարտ – 1840 թ. ապրիլ — Հայկական մարզը
1829 թ. սեպտեմբերի 2 — Ռուս–թուրքական հաշտության պայմանագրի կնքումը Ադրիանուպոլսում
1836 թ. մարտի 11 — Հայ եկեղեցու կանոնադրության հրապարակումը ռուսական կառավարության կողմից
1837 թ. — Երևանի թեմական դպրոցի բացումը
1838 թ. — Շուշիի թեմական դպրոցի բացումը
1860 թ. մայիսի 24 — Ազգային կանոնադրության հաստատումը Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից
1861 թ. — «Արևելյան թատրոնի» հիմնադրումը Կ. Պոլսում
1862 թ. օգոստոս — Զեյթունի ապստամբությունը
1868 թ. — Հայ առաջին՝ «Արշակ Բ» օպերայի ստեղծումը Տ. Չուխաճյանի կողմից
1869 թ. — Ա. Կրիտյանի գլխավորությամբ «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը Ալեքսանդրապոլում
1870 թ. — Մուրատ–Ռափայելյան վարժարանի ստեղծումը Վենետիկում
1870 թ. մայիսի 14 — Արևելյան Հայաստանում հողի սեփականության մասին ցարական օրենքի ընդունումը
1874 թ. — Էջմիածնի հոգևոր ճեմարանի բացումը
1878 թ. փետրվարի 19 — Ռուս–թուրքական հաշտության պայմանագրի կնքումը Սան Ստեֆանոյում
1878 թ. հունիսի 1 – հուլիսի 1 — Բեռլինի վեհաժողովը

1881 թ. — Կարինի Սանասարյան վարժարանի բացումը
1881 թ. — Խ. Կերեքցյանի նախաձեռնությամբ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը Կարինում
1882 թ. — «Հայրենասերների միության» հիմնումը Մոսկվայում. հայ առաջին քաղաքական լրագրի՝ «Ազատության ավետաբերի» հրատարակումը
1885 թ. — Հայ ազգային-քաղաքական առաջին՝ Արմենական կուսակցության հիմնադրումը Վանում
1887 թ. օգոստոս — Հնչակյան կուսակցության ստեղծումը Ժնևում
1890 թ. հուլիս-օգոստոս — «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) կուսակցության հիմնադրումը Թիֆլիսում
1890 թ. սեպտեմբերի 22 — Ս. Կուկունյանի արշավանքը Արևմտյան Հայաստան
1894–1896 թթ. — Հայերի զանգվածային կոտորածները (համիդյան ջարդեր). Հայոց ցեղասպանության առաջին փուլը
1894 թ. հուլիս-օգոստոս — Սասունի հերոսամարտը
1895 թ. մայիսի 11 — Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից բարենորոգումների ծրագրի հանձնումը սուլթանին
1895 թ. հոկտեմբեր – 1896 թ. հունվար — Զեյթունի ապստամբությունը
1896 թ. հունիսի 3–8 — Վանի ինքնապաշտպանությունը՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ
1896 թ. օգոստոսի 14 — Դաշնակցության կազմակերպած «Բանկ Օտտոմանի» գործողությունը Կ. Պոլսում
1897 թ. հուլիսի 25–27 — Խանասորի արշավանքը. քրդական մազրիկ ցեղի պատժումը հայերի կողմից
1898 թ. — Աղբյուր Սերոբի հաղթանակը Բաբշենի նշանավոր կռվում
1901 թ. նոյեմբերի 3–27 — Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը
1903 թ. հունիսի 12 — Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին ցարական օրենքի ընդունումը
1903 թ. հուլիսի վերջ — Հայ ժողովրդի հակացարական շարժման սկիզբը
1904 թ. մարտ-մայիս — Սասունի ապստամբությունը
1905 թ. փետրվարի 6 — Հայ-թաթարական ընդհարումների սկիզբը
1906 թ. — Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադրումը
1908 թ. հուլիս — Երիտթուրքական հեղաշրջումը օսմանյան Թուրքիայում
1909 թ. ապրիլ — Հայերի կոտորածն Ադանայում և այլ վայրերում
1910 թ. — Հայ օգնության միության (ՀՕՄ) ստեղծումը
1912 թ. հոկտեմբեր – 1917 թ. սեպտեմբեր — Հայոց ազգային կենտրոնական բյուրոյի (Հայոց ազգային բյուրո) գործունեությունը
1912 թ. նոյեմբեր — Պողոս Նուբարի նշանակումը Ազգային պատվիրակության ղեկավար
1914 թ. հունվարի 26 — Հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը
1914 թ. օգոստոսի 1 (հին տոմարով՝ հուլիսի 19) – 1918 թ. նոյեմբերի 11 — Առաջին համաշխարհային պատերազմը
1914 թ. հոկտեմբերի վերջ – 1916 թ. ամառ — Հայոց մեծ եղեռնը
1914 թ. դեկտեմբերի 9 – 1915 թ. հունվարի 5 — Սարիղամիշի ճակատամարտը
1915 թ. ապրիլի 7 – մայիսի 5 — Վանի փառապանծ ինքնապաշտպանությունը
1915 թ. ապրիլի 16–18 — Դիլմանի ճակատամարտը
1915 թ. մայիսի 7 – հուլիսի վերջ — Արամ Մանուկյանը՝ Վանի նահանգապետ

1915 թ. հունիսի 3–29 — Շապին Կարահիսարի ինքնապաշտպանությունը Ղ. Տեովլեթյանի գլխավորությամբ
1915 թ. օգոստոսի 1 – սեպտեմբերի 10 — Մուսա լեռան հերոսամարտը Տ. Անդրեասյանի ղեկավարությամբ
1915 թ. սեպտեմբերի 29 – նոյեմբերի կեսեր — Մ. Յոթնեղբայրյանի գլխավորությամբ Ուրֆայի (Եդեսիա) հերոսամարտը
1916 թ. փետրվարի 3 — Էրզրումի գրավումը ռուսական Կովկասյան բանակի կողմից
1917 թ. փետրվարի 27 — Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում
1917 թ. մարտի 9 — Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ԱՀԿ) ստեղծումը
1917 թ. ապրիլի 26 — Արևմտյան Հայաստանում վարչական նոր միավոր ստեղծելու վերաբերյալ Ժամանակավոր կառավարության որոշման հրապարակումը
1917 թ. մայիս — Արևմտահայերի առաջին համագումարը Երևանում
1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր — Արևելահայերի առաջին համագումարը Թիֆլիսում
1917 թ. հոկտեմբերի 25 — Բոլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում
1917 թ. նոյեմբերի 15 — Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
1917 թ. նոյեմբերի 16 — Հայկական կորպուսի ստեղծումը Կովկասյան ճակատում
1917 թ. դեկտեմբերի 5 — Երզնկայում զինադադարի ստորագրումը
1917 թ. դեկտեմբերի 29 — «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի (դեկրետ) ընդունումը Խորհրդային Ռուսաստանի կողմից
1918 թ. հունվարի 28 — Պատերազմի վերսկսումը Կովկասյան ճակատում
1918 թ. փետրվարի 10 — Անդրկովկասյան Սեյմի ստեղծումը
1918 թ. փետրվարի 27 — Էրզրումի անկումը
1918 թ. մարտի 1 — Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
1918 թ. մարտի 3 (նոր տոմարով) — Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը
1918 թ. մարտի 24 — Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանին Երևանի նահանգի դիկտատոր հաստատելը
1918 թ. ապրիլի 9 — Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության (ԱԺԴՀ) ստեղծումը
1918 թ. ապրիլի 12 — Կարսի հանձնումը թուրքերին
1918 թ. մայիսի 22–28 — Սարդարապատի հերոսամարտը
1918 թ. մայիսի 23–29 — Բաշ Ապարանի հերոսամարտը
1918 թ. մայիսի 25–30 — Ղարաքիլիսայի հերոսամարտը
1918 թ. մայիսի 28 — Հայաստանի Հանրապետության հռչակումը
1918 թ. հունիսի 4 — Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումը. Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում թուրք–հայկական պատերազմի ավարտը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ I. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

ԳԼՈՒԽ I. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

§ 1. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ 6
§ 2. ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ 11
§ 3. ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 16
§ 4–5. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ 30–80–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 20

ԳԼՈՒԽ II. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

§ 6. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ 28
§ 7. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ 31
§ 8. ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՐՉԱԶԵՎԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 36
§ 9. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 39

ԳԼՈՒԽ III. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

§ 10. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 43
§ 11. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 47

I ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 51

ԲԱԺԻՆ II. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ԳԼՈՒԽ IV. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

§ 12. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 54
§ 13. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 59

ԳԼՈՒԽ V. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ–ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

§ 14. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ 64
§ 15. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԵՐԿՈՒ ՆՇԱՆԱՎՈՐ ՇՐՋԱԴԱՐՁԵՐԸ 68

ԳԼՈՒԽ VI. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

§ 16. ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ 1877–1878 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 73
§ 17. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 76

ԳԼՈՒԽ VII. ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ 70–90–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 18. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 80
§ 19. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 83
§ 20. ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ 88
§ 21. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ: ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1890–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 92

ԳԼՈՒԽ VIII. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

§ 22. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 97
§ 23. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ 102
§ 24. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ 106

ԳԼՈՒԽ IX. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 25. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ 112
§ 26. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ. 117
§ 27. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ 122
§ 28. 1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ. 129
§ 29. ԱԶԳԱՅԻՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔԸ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ. 134
§ 30. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 138
§ 31. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ 142
§ 32. ՄԱՅԻՍՅԱՆ ՓԱՌԱՀԵՂ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 146

ԳԼՈՒԽ X. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

§ 33. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 153
§ 34. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 157
§ 35. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ 160
§ 36. ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. 164

ԲԱԺԻՆ III. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ XI. ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

§ 37. ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԽՈՇՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 170
§ 38. ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 174

II ԵՎ III ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 179

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ 183

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 187

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ, ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

8–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար

АШОТ МЕЛКОНЯН, АРАМ СИМОНЯН, АРАМ НАЗАРЯН, АКОП МУРАДЯН

ИСТОРИЯ АРМЕНИИ

8–ОЙ КЛАСС

Учебник для общеобразовательной основной школы
(на армянском языке)
Издательство “Зангак”, Ереван, 2018

Գրքում օգտագործված նկարներ

էջ 5՝ Ֆրանց Ռուբո. «Երևանի բերդի գրավումը», էջեր 7, 10, 53, 147, 148, 167 © Հովհաննես Կարապետյան, էջ 9՝ Պոլ Դելառոշե. «Պյոտր I Մեծ», էջ 15, 40, 94, 95 © Աշոտ Մելքոնյան, էջ 32՝ Ջորջ Դոու. «Վալերի Մադաթովի դիմանկարը», էջ 33՝ Ֆրիդրիխ Ռանդել. «Իվան Պասկևիչ», էջ 73՝ Հովհաննես Այվազովսկի. «Գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքով», էջեր 98, 100 © Տարիել Հակոբյան, էջ 122 © iStockphoto. com/Dave Long, էջ 169 © Արևիկ Հակոբյան
Հայաստանի ազգային արխիվ՝ էջեր 23–27, 29, 39, 45, 47, 58, 61, 63, 66, 67, 69, 70, 73, 74, 77, 78, 80, 83–86, 88–90, 94, 97, 99, 100, 102, 103, 104, 107, 108, 114, 115, 117, 119, 123, 124, 126, 127, 129–133, 135, 136, 139, 142, 143, 146, 149, 151, 154, 158, 159, 160–162, 165, 166
Երևանի պատմության թանգարան՝ էջեր 32, 33, 36, 56, 57, 62, 63
Հայաստանի ազգային պատկերասրահ՝ էջեր 48, 164, 165

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Լալա Հովսեփյանի
Գրիգորի Հարությունյանի
Շապիկի համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի
Սրբագրիչ՝ Լուսինե Դավթյան

ISBN 978–99941–1–788–8

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 16 տպ. մամուլ
Տառատեսակը՝ GHEA Mashtots: Տպաքանակը՝ 16 884: Պատվեր՝ 03/Հ–17

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak